

Ungg

неудну арасыб перфрл

9(47, 925)

17-14

2039

9(47-925)

204

05 SEP 2011
18 AUG 2006

48.

Ս Տ Ո Յ Գ

ՀԱՅՈՅ ՊԵՏԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱՄԱԶԱՅՆ ՆՈՐԱԳՈՅՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Կ ա զ մ ե ց

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆ

16744
9-

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Հրատարակութիւն հեղինակի

1914

28 MAR 2013

31

ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ

ՀԱՅՈՑ

Տպարան Ա. Կերեսկիձեի, Գաբառուկ. 1.

91.542)

1-14

13508

Ս Տ Ո Յ Գ

ՀԱՅՈՑ ՊԱՏԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ, ԸՆԴԱՐԶԱԿ

Համաձայն խորագրյն հետազոտութիւննրի

Կ ա զ մ ե յ

Բ. ԴԱՂԱՇԵՆ

Պ. Բ. Ա. Կ. Ա.

Սկզբն մինչ ճիշդն մեծի իմնած հայկական մեծ պետութեան վախճանը
պարսկ լոյս կը տեսնէ 1914 թ. սեպտեմբերին, իսկ զրիկի տա-
րուքներ կը վերջանայ ներկայ տարու ղեկակներին:
Ամբողջ գործի բաժանորդագինն է 1 թ. 50 Կ.
պրակի հետ բաժանորդները կ'ստանան պատմական Հայա-
սանի փառքը:



Tigranes.



Mithradates.

ՓՈԽԱՆԱԿ ՆԱԽԱԲԱՆԻ

Բ. Դարու վերջին քառորդում հրատարակեց Վենեդիկ միա-
շամէան վարդապետն իր հռահատոր հայոց պատմութիւնը:

որով նա յիրաւի հայ պատմագրութեան հիմնադիրը դարձաւ: Իր այս հսկայական գործը կազմելիս Վենետիկի գիտնական միաբանը թէպէտեւ բարեխիղճ կերպով օգտուեց իր ժամանակ յայտնի բոլոր պատմական աղբիւրներին, բայց և այնպէս նրա գրած «Հայոց պատմութեան» շէնքը շնորհիւ քննադատական ոգու բացակայութեան հիմնուած էր աւագի վերայ: Եւ երբ հայ պատմագրութիւնը ևւրոպական համալսարաններում լուրջ ուսումնասիրութեան առարկայ դարձաւ, երբ պատմական քննադատութիւնը կատարեց իր դերը, այն ժամանակ հայր Չամչեանի կառուցած պատմական շէնքը փլաւ ժժ. դարու սկզբներում գրեց Ֆրանսիացի երևելի արևելագէտ և հայագէտ Սէն Մարտէնը Ֆրանսերէն լեզուով իր Հայոց պատմութիւնը, որը զգալի կերպով տարբերուեց Չամչեանի Հայոց պատմութիւնից: Իսկ նոյն դարու կիսին հրատարակեց Վենայի միաբան հայր Գաթրճեան իր «Տիեզերական պատմութիւնը», որի մէջ նա քարուքանդ արեւ Չամչեանի կառուցած հայոց պատմութեան շէնքը: Գաթրճեանն չէր հետևեալ եղանակով. նա գրելով որեւէ դարու նախ ընդհանուր պատմութիւնը, ապա գրում էր մասնաւորապէս նոյն դարու հայոց պատմութիւնն արտաքին պատմութեան աղբիւրներէն անխառն կերպով օգտուելով թէ տոնմային և թէ օտար աղբիւրներից և զեկավարուելով զուտ քննադատական ոգով: Դրանով պարզուեց, որ Չամչեանի գրած Հայոց պատմութիւնը շատ խախտու հիմքերի վերայ է կառուցուած, որ նա շատ հեքիաթային մասեր ունի:

Արդ, այս բոլորի պատճառը Մովսէս Խորենացու թողած «Հայոց պատմութիւնն» է: Ինչպէս յայտնի է, մենք ունինք լոկքիստոնէական գրականութիւն, հեթանոսական գրականութիւն, մենք տարաբախտաբար չունինք: Մովսէս Խորենացին միակ տոնմային պատմագիրն է, որ գրել է հեթանոս Հայաստանի պատմութիւնը: Այս հեղինակն իր արելով ապրել է Ե. դարում և աշակերտել է սուրբ Սահակին և Մեսրոպին: Սակայն նորագոյն պատմական քննադատութիւնը հաստատապէս ապացուցել է, որ ոչ Մովսէս Խորենացին կարող է Ե. դարում ապրած լինել և ոչ էլ որ ամենից գլխաւորն է, նրա թողած պատմութիւնը վաւերական է: Պատմական քննադատութիւնը ցոյց է տուել այն աղբիւրները որոնցից օգտուել է Մովսէս Խորենացին, ցոյց է տուել նաև, թէ ինչ եղանակով և ինչ միտումներով է նա օգտուել այդ աղբիւրներից: Ապացուցուած է նաև, որ Մովսէս Խորենացու պատմութիւնը նոյնիսկ դասական և միջնադարեան հայ գրականութեան մէջ վարկ չունէր և անքննասէր հայր Չամչեանն առաջինն է, որ աչքերը զոցելով արտաքին և տոնմային պատմագրութեան տուստոյգ տեղեկութիւնների դէմ, կոյրզկուրայն հետևել է Խորենացուն, համարելով նրան առաջնակարգ պատմագիր, որով և յանդէս է մեծամեծ անհեղեղութիւնների:

Գաթրճեանից յետոյ մեր օրերում գրեց Գարագաշեանը «Քննական հայոց պատմութիւնը», որը հրատարակեց Թիֆլիսում:

ԳԼՈՒԽ Ե

ԱՅԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանն Առաջաւոր Ասիայի նշանաւոր երկիրներից մէկն է: Նա մի ընդարձակ բարձրաւանդակ է, որ սկսուելով Կասպից ծովի արևմտեան սահմաններից՝ տարածուած է դէպի Սև ծովի սահմանները, հետզհետէ բարձրանալով: Հայաստանի հիւսիս արևմտեան այս մասը կազմում է հայ բարձրաւանդակի ամենաբարձր տարածութիւնը, ուստի և կոչւում է Բարձր Հայք: Կովկասեան լեռնաշղթայից դէպի հարաւ, արևմտքից դէպի արևելք, զրեթէ Կովկասեան լեռնաշղթային զուգահեռաբար հոսում է Կուր գետը, որն և կազմում էր հին Հայաստանի հիւսիսային սահմանը: Կուր գետի հովտից դէպի հարաւ գտնւում են մի շարք լեռներ, որոնցից ամենաբարձրն է Արագածը և որոնք կազմում են այսպէս կոչւած Փոքր Կովկասը, որը ձգւում է արևելքից դէպի արևմուտք, Մեծ Կովկասեան լեռնաշղթային զրեթէ զուգահեռաբար: Այս լեռների մէջ է ընկած Սևանի լեռնային լիճը: Յիշուած լեռների հարաւային ստորոտներում գոյանում է մի երկրորդ հովիտ — Արաքսի, Հայաստանի մայր գետի հովիտը: Մայր Արաքսը կամ Երասխը, սկիզբն առնելով Բարձր Հայքում, հոսում է նախ դէպի արևելք, ապա թեքուելով դէպի հարաւ, էլի աղեղնաձև ուղղւում է դէպի հիւսիս և այսպիսով

սով կտրելով գրեթէ ամբողջ Հայաստանը, միանում է Կուր գետի հետ և թափւում Կասպից ծովը։ Արաքսի հովիտը հարաւում սահմանափակւում է մի նոր լեռնաշղթայով, Հայկական Պարով, որն սկսուելով աշխարհառջալի Մասսով, ձգւում է դէպի արեւմուտք, բաժանելով Արաքսի վերին աւազանը Արածանու կամ արեւելեան Եփրատի աւազանից։ Արածանին, Հայաստանի երկրորդ նշանաւոր գետը, սկիզբն առնելով Հայկական Պարից, հոսում է հիւսիս արեւելքից դէպի հարաւ արեւմուտք, կտրւում է իր անունը կրող հովիտը (Արածանու հովիտը) և Հայաստանի արեւմտեան սահմանում միանում է իր քոյր արեւմտեան Եփրատի հետ։ Այս երկու ճիւղերի մէջ ընկած է Աբոս լեռնաշղթան, այժմեան Բինգեօլ դաղը, որն իր փեշերից բազմաթիւ գետակներ է արձակում։ Հարաւից Արածանու հովիտը դարձեալ շրջապատւած է լեռնաշղթաներով։ Արածանու ակունքից դէպի հարաւ գտնւում է Նպատ լեռնաշղթան, այս գետից դէպի հարաւ, Վանայ լճի արեւմտեան կողմում — Ներքովթ լեռը, իսկ արեւմտքից (Կիլիկիոյ սահմաններից) դէպի արեւելք, Արածանուն գրեթէ զուգահեռաբար ձգւում է Տօրոսի լեռնաշղթան, որն և անցնում է Վանայ լճի հարաւային կողմը գտնուող երկիրներից։ Սակայն Տօրոսի երկար լեռնաշղթան գեռ չէ կազմում պատմական Հայաստանի հարաւային սահմանը։ Նրա հարաւային փեշերից սկիզբն են առնում Տիգրիս գետի արեւմտեան և արեւելեան ճիւղերն, ինչպէս և սրանց մէջ թափուող բազմաթիւ վտակները։ Ահա Տիգրիս գետի այս վերին աւազանը, որն արեւելքում հասնում է նոյն գետի Զաւմեծ վտակի ձախակողմեան ափերին, կազմում էր պատմական Հայաստանի հարաւային սահմանը, որն և հարաւից Մասիս լեռնաշղթայով բաժանւում էր Միջագետքի հիւսիսային մեծ տափաստանից։

Բուն կամ Մեծ Հայաստանի արեւմտեան սահմանը կազմում էր արեւմտեան Եփրատը։ Սրա աջ կողմում

գտնւում էր Փոքր Հայքը, որն արեւմտքում բռնում էր Հալիւս և Գայլ (Լիւկոս) գետերի ակունքները։ Աւելի հին ժամանակներում, երբ Մեծ Հայաստանը տակաւին անկախութիւն չէր ձեռք բերել, Փոքր Հայքն ունէր իր սեպհական անկախ թագաւորները, որոնց իշխանութիւնը հասնում էր մինչև Սև ծովի ափերը, մինչև Տրապիզոն և Փանոսկէա քաղաքները։ Սակայն հէնց այն դարում, երբ Տիգրան Մեծի դքսակները ծածանւում էին բազմաթիւ ասիական օտար երկիրներում, Միհրդատ Պոնտոսի թագաւորը, Տիգրանի դաշնակիցն և աները, այս երկիրը միացրեց Պոնտոսի հետ։ Յետոյ հռոմայեցիները նուաճեցին Պոնտոսի հետ նաև Փոքր Հայքն ու դարձրին հռոմէական նահանգ։ Այսպիսով այս երկիրն ընդմիշտ բաժանուեց իր մայր հայրենիքից և հետզհետէ կորցրեց իր լեզուն և ազգութիւնը։ Փոքր Հայքից դէպի հիւսիս, Ճորոխ գետի ձախ ափերին գրեթէ զուգահեռաբար ձգւում էր Պարիւռադրէս կամ Պարխարեան լեռնաշղթան, որը մի բնական սահման էր ներկայացնում Մեծ Հայաստանի և Պոնտական Կապասովկիայի մէջ։

Այսպիսով Հայաստանը մեզ ներկայանում է իբրև մի լեռնային երկիր, մի լայնածաւալ սարաւանդ, որն ընկած է Կովկասեան լեռնաշղթայի և Միջագետքի, Կասպից և Սև ծովերի մէջ, Կուր, Արաքս և Արածանի գետերի հովիտներով, Փոքր Կովկաս, Հայկական Պար և Տօրոս լեռնաշղթաներով։ Վերոյիշեալ հովիտներում և լեռնաշղթաների փեշերի վրայ Հայաստանը ներկայացնում է բազմաթիւ դաշտեր և սարահարթներ, որոնք անասնապահութեան, երկրագործութեան և գինեգործութեան համար մեծ յարմարութիւն են ներկայացնում։ Դեռ Քրիստոսից 400 տարի առաջ Հայաստանը յիշւում է իբրև մի երկիր, ուր ծաղկած էր անասնապահութիւնը, երկրագործութիւնը և գինեգործութիւնը և Հայաստանում բուծած ձիաներն ու

ոորինները Տիւրոսի համաշխարհային շուկայում մեծ հռչակ
ջնէին:

Զնայելով, որ Հայաստանը գտնուում է տաք գօտում,
նրա կլիման, շնորհիւ իր բարձր զիւրքի դաշտային չի-
կարելի անուանել: Կլիման համեմատ երկրի մակերևոյթի
կազմութեան խիստ տարբեր և փոփոխական է: Մինչդեռ
դաշտահարթերում աճում են խաղողի որթը, բրինձն ու
բամբակն և ամառուայ շոգն անտանելի է, նոյն դաշտե-
րին կից սաբահարթներում վերոյիշեալ բոյսերը չեն ա-
ճում և ամառուայ շոգն ու տօթն անձանթ բաներ են:
Շատ տեղերում, չնայելով ցերեկուայ շոգին և տօթին,
գիշերները շատ սառն են լինում: Այժմեան Հայաստանը
մեծ մասամբ անտառազուրկ է և բազմաթիւ գաւառնե-
րում ձմեռն անասունների աղբից պատրաստած աթար են
գործածում, փոխանակ այդ աղբով դաշտերը պարարե-
լու: Այժմ օրերով կարելի ճանապարհորդել Հայաստանում
առանց մի ծառի, նոյնիսկ մի թփի հանդիպելու: Սակայն
հնումը Հայաստանը ծածկուած էր խիտ անտառներով,
որոնք լիքն էին բազմաթիւ և բազմազիւմ վայրի կենդանի-
ներով և գազաններով: Կիւրոսը Հայաստան որսի գալով,
որսում էր մեր երկրում կինձ, եղջերու, այծեամ, ցիւռ:
Շնորհիւ անտառների ոչնչացման երկրի կլիմայական պա-
րագաններն ևս փոխուել են՝ նուազել է թէ՛ ձիւնը և թէ՛
անձրեր: Այսպէս Ստրաբոն յոյն աշխարհագիրը պատմում
է, որ Խորձեան գաւառի բնակիչները ձմեռը ձիւնակոխ
լինելու վտանգից սարսափած չէին կարողանում ճանա-
պարհորդել առանց երկար փայտերի, որոնցով, երբ ձեան
տակ էին ընկնում, իրենց համար օդ շնչելու անցք էին
բանում: Այժմ նոյն գաւառում նման երևոյթի չենք պա-
տահում: Մեր օրերում մեծ ձիւն է գալիս տակաւին Բա-
ղիշի կողմերում (Վանայ ծովից դէպի հարաւ արևմուտք)
ուր ձեան խորութիւնը հասնում է մի քանի մետրի և
ձմեռը ճանապարհորդութիւնը կատարւում է մեծ դժուար-

րութիւններով: Սակաւաջուր են դարձել նաև Հայաստանի
գետերը: Սակայն նախկին Հայաստանի ձմեռն այժմ ևս
անփոփոխ է մնացել: Երբ հայկական սարաւանդը ծած-
կուած է ձիւնի սպիտակ սաւանով, շատ տեղեր սկսում են
սարսափելի յարատև սառնամանիքներ, որոնց ժամանակ
շատ գաւառներում փոխադարձ հազորդակցութիւնը խրդ-
ւում է բոլորովին: Վերոյիշեալ լեռնաշղթաները թէպէտ
անանցանելի չեն, սակայն պէտք է նկատել, որ բնութիւ-
նից ստեղծուած լաւ հազորդակցութեան ճանապարհներ
չկային նախկին Հայաստանում, հետևապէս չկար նաև
մեծ արդիւնաբերութիւն, որի համար առաջին պայմանը
լաւ ճանապարհներն են:

Այսպէս Հայաստանը մի ահագին սարահարթ է,
ծածկուած բազմաթիւ լեռներով, լեռնաշղթաներով, բլուր-
ներով, կտրտուած բազմաթիւ ձորերով, կրճերով, գետե-
րով և գետակներով, որոնց հունները խորունկ են: Շնոր-
հիւ իր այս ֆիւզիկալ կազմութեան հին Հայաստանում
չգոյացաւ մի կենտրոնական հզօր իշխանութիւն, որը կա-
րողանար հաստատապէս նուաճել երկրի միւս գաւառնե-
րը, այլ վերջիններիս իշխանները, նախարարները միշտ
պահպանեցին իրենց կիսանկախութիւնը, երբեմն իրենց
զէնքը դարձնելով նոյնիսկ կենտրոնական իշխանու-
թեան դէմ:

Սակայն Հայաստանի անբարեյաջող աշխարհագրական
դիրքն ևս արգելք հանդիսացաւ մի գօրեղ տէրութեան գո-
յանալուծն: Հայաստանն այն երկիրն է, որի վրայով արե-
ւելքը շարունակ շփուել է արևմտքի հետ: Ո՛չ միայն նրա
վրայով էր կատարւում արևելքի առուտուրը արևմտքի
հետ, այլև այս երկու երկիրների մէջ պատերազմներին
յաճախ թատերաբեմ էր հանդիսանում Հայաստանը: Արե-
ւելքի և արևմտքի մէջ բազմաթիւ պատերազմներ ծագե-
ցին Հայաստանի տիրապետութեան համար, որովհետև թէ՛
մէկն և թէ՛ միւսը քաջ գիտակցում էին այս երկրի ուղ-

մական կարևորութիւնը: Եւ պատմութեան ընթացքում Հայաստանն իր անկախութիւնը կորցնելով, մինչև հիմա ոչ մի աւերութիւնից ամբողջովին և վերջնականապէս չնուաճուեց, այլ մնաց և մնում է իբրև օտար ազդեցութիւններ ի մի մշտական մրցավայր: Հայաստանի այս ֆիզիկալ կազմութիւնն և կղզիացած աշխարհազրական դիրքը ազդեցին նրա ժողովուրդների բնաւորութեան և հոգեբանութեան վրայ, որոնք մնացին կղզիացած, օտարների ազդեցութեանը սակաւ մատչելի, աւանդապահ և մելամաղձոտ: Հայաստանն ունէր և ունի անթիւ հանքային հարստութիւններ, սակայն հին աշխարհին յայտնի տեխնիկան անգոր էր այս հանքային հարստութիւնները լիովին շահագործելու: Հայաստանը մի ջրառատ երկիր է, սակայն նրա գետերն և գետակները յաճախ հոսում են խորունկ հուններով և երկրի ոռոգմանը ամենևին չեն նպաստում: Դարձեալ հարկաւոր էր բնութեան դէմ կռիւ մղել, մեծ ջանքեր և զոհաբերութիւններ անել այդ ջրերը շահագործելու, բայց այս անելու համար հայր անգոր հանդիսացաւ:

Հայաստանն իր պատմութեան ընթացքում մնաց շրջապատուած բազմաթիւ մեծ և փոքր, զօրեղ և թույլ ազդերով: Նա մնաց սրանց մէջ կղզիացած, չձուլուեց սրանց հետ, սակայն չկարողացաւ նոյնպէս սրանց նուաճել, ձուլել իր հետ և հասնել իր բնական սահմաններին, որոնք կարող էին լինել արևելքում Կասպից, իսկ արևմտքում Սև և Միջերկրական ծովերը: Նրան շրջապատող ազգերից ոմանք անհետացել են, իսկ ոմանք էլ մնացել են և հիմա ևս ապրում են նրա հետ իբրև բարի հարևաններ:

Արևմտքում Հայաստանին սահմանակից երկիրն էր Կապադովկիան, հիւսիս արևմտքում Պոնտոսը, Լազիստանն ու Կողիքսը (այժմեան Քուլթայիսի նահանգը): Հիւսիսում Հայաստանին սահմանակից էր Վրաստանը, հիւ-

սիս արևելքում—Աղւանից երկիրը, որը նախ կրօնապէս, ապա ազգովին ձուլուեց հայերի հետ: Այս երկու երկիրներն ևս Հայաստանից բաժանուում էին Կուր գետով:

Հարաւում Հայաստանին սահմանակից էին հին աշխարհի ամենազօրեղ և ամենաքաղաքակիրթ պետութիւնները՝ Ասորեստանն ու Մարաստանը, ապա սրանց ընդհանուր ժառանգ Պարսկաստանը:

ԳԼՈՒԽ Բ

ՆԱԽԱՀԱՅ ԾՐՋԱՆ

Նախահայ պետութիւն Սրգի պատմական գիտութիւնը, հիմնուե-
լով Հայաստանում, ինչպէս և Հայաստանի
Հայաստանում հարեան երկիրներում մնացած պատմական
յիշատակարանների վերայ, ընդունում է, որ հայերից ա-
ռաջ Հայաստանում ապրել է մի ուրիշ ցեղ, որ բոլորո-
վին տարբեր էր այժման հայերից: Այդ խաղըները կամ
ուրարտացիներն էին, որոնք Քրիստոսից դարեր առաջ
ապրեցան Հայաստանում, ստեղծեցին այս երկրում, ինչ-
պէս կարծում են, բարձր քաղաքակրթութիւն, ապա
յաղթուելով հայ արիական ցեղից, անյայտացան պատ-
մութեան ասպարիզից, թողնելով Հայաստանի այժմեան
Վան քաղաքում և ուրիշ տեղերում իրենց մասին անմեռ
յիշատակարաններ:

Այժմեան Այժմեան Վան քաղաքը գտնւում է Վանայ
Վանը: Կամ Բզնունեաց ծովի հարաւ արեւելեան ափից ոչ
հեռու: Հնախօսական տեսակէտից այս քաղաքը մեծ հե-
տաքրքրութիւն է ներկայացնում: Նա ունի ահագին քա-
րաժայռ, որի մէջ փորուած են սենեակներ օտարազգի
արձանագրութիւններով հանդերձ: Քարաժայռի վրայ կայ
բերդ, որը շինւած է Քրիստոսից դարեր առաջ: Վան քա-
ղաքին և իր շրջականերին ջուր է մատակարարում Շամի-
րամի առուն, որը նոյնպէս շինուած է Քրիստոսից դարեր
առաջ:

Մովսէս Խորենացին Հեթանոս Հայաստանի պատմութիւ-
նը գրել է մեր տոհմական պատմա-
րիւնների մասին: գիրքերից մինը—Մովսէս Խորենացին:
Եթէ նրա թողած պատմութիւնը վաւերական, այսինքն
ստոյգ լինէր, նա կը կազմէր հայ պատմութեան պար-
ծանքը: Սակայն պատմական քննադատութիւնը ցոյց է
տուել, որ Մովսէս Խորենացու թողած Հայոց Պատմու-
թիւնը վաւերական չէ և որ ինքը, Պատմութեան հեղի-
նակը, չէ կարող է. դարից առաջ ապրած լինել: Բայց և
այնպէս ամեն ոք, ով ցանկանում ծանօթանալ հայ ազգի
պատմութեան հետ, կամայ-ակամայ պիտի ծանօթանայ
Խորենացու պատմութեան հետ ևս, որովհետեւ, ինչպէս
յիշեց, Խորենացին միակն է հայ հեղինակներից, որը
գրել է հեթանոս Հայաստանի պատմութիւնը:

Սրգ, Մովսէս Խորենացին իր Հայոց Պատմութեան
Ա. գրքի 16-րդ գլխում խօսում է Վան քաղաքի և նրա
հնութիւնների մասին: Նրա պատմելով Շամիրամ Ասո-
րեստանի թագուհին Սրայ հայոց նահապետին յաղթելով և
սղանելով, «աղի ծովակի» (Վանայ լճի) մօտ հիմնում է իր
համար մի քաղաք, որը պիտի ծառայէր իբրեւ ամարանոց:
Ասորեստանի թագուհին նախ շինել է տալիս «գետի ամ-
բարտակը» մեծամեծ վէժ քարերով, կրի և աւազի շաղա-
խով, լայն և բարձր: Եւ այսպէս «ամբարտակը» շատ աս-
պարէզներ անցկացնելով, հասցնում է Վան քաղաքը: Սրգ,
ինչպէս ակնհայտեա գերմանացի գիտնականը (Լեման-
Հաուպտ) նկատել է, այստեղ Խորենացու խօսքը այսօրուայ
«Շամիրամի առուի» մասին է, որը գիտնականի ասելով
անտիք տեխնիկայի մի հրաշակերտ է, այսօր ևս կայ և
ծառայում է իր սկզբնական նպատակին—Վանին և իր
դաշտին ջուր է մատակարարում:

Վանի ժայռն և իր փիմափոր սենեակներն և արձա-
նագրութիւններն ևս նկարագրել է Խորենացին: Շամիրա-
մը հրամայում է Վանի ժայռում շինել զանազան «տաճար-

ներ, սենեակներ, զանաւորներ, նրկար վիհներ: Իսկ ժայռի երեսը հարթելով, նրա վերայ բազմաթիւ զրնր զրնց, որի տեսքը միայն ամեն մարդու զարմացնում է: Եւ ոչ միայն այս, այլև հայոց աշխարհում բազմաթիւ տեղեր արձաններ հաստատելով, նոյն զրոյի հրամայեց ինչ որ յիշատակութիւն գրել. և շատ տեղերում նոյն զրոյի սահմաններ էր հաստատում:

Պարզ է, թէ ինչի մասին է խօսում այստեղ Խորենացին: Նրա խօսքը Վանի ժայռի վիմափոր սենեակների և արձանազրութիւնների մասին է: Դեռ նրա ժամանակ մարդիկ կարծում էին, որ այդ խորհրդաւոր գրերը պատմական յիշատակարաններ էին ներկայացնում, սակայն չէին կարողանում նրանց կարդալ:

Վանի արձանազրութիւնների ուսումնա- Խորենացու այս նկարագրութեան քիւնների ուսումնա- վերայ առաջին անգամ լուրջ ուշա- սիրութիւնը: զրութիւն դարձրեց երեւելի գերմանացի գիտնական Կարլ Ռիտէրը, նորագոյն պատմական աշխարհագրութեան հիմնադիրը, որը Հայաստանի անցեալով առանձնապէս հետաքրքրւում էր: Խորենացու պատմածը, իբր թէ այս վիմափոր սենեակների, արձանազրութիւնների, ամբարտակի հեղինակը Շամիրամն է եղել, առասպել համարելով, երեւելի գիտնականը հասկացաւ, որ Խորենացու նկարագրած պատմական յիշատակարաններն այժմ ևս կանգուն պիտի լինեն և արժանի են ուսումնասիրութեան: Նա իր միտքը յայտնեց իր հայրենակից երիտասարդ պրոֆեսոր Շուլցին, որը ցանկութիւն յայտնեց այդ յիշատակարանների ուսումնասիրութեանը նուիրուելու: Հարկաւոր էին նիւթական միջոցներ, և այդ միջոցները հայթայթեց ֆրանսիացի երեւելի արեւելագէտ և հայագէտ Սէն Մարտէնը, որին Ռիտէրը դիմել էր: Եւ այսպէս պրոֆեսոր Շուլցը 1828/29 թ. մի քանի անգամ Հայաստանում ճանապարհորդութիւններ կատարեց և հաւաքեց Վանում և ուրիշ տեղեր գտնուող նախահայ արձա-

նագրութիւնները: Սակայն այս բոլորը երիտասարդ գերմանացի պրոֆեսորը ձեռք բերեց շատ թանգ, իր կեանքի գնով, որովհետեւ 1829 թ. Ջուլումերկի կողմերում նա զոհ գնաց մի քուրդ աւագակապետի գնդակին, որը նրան կողոպտել էր ուղում:

Շուլցի մահով նրա սկսած գործը կանգ չառաւ, այլ թէ մերագգի և թէ օտարագգի գիտունները շարունակեցին Հայաստանում գտնուող սեպածե կամ բեհաւաւ արձանազրութիւնները ժողովել: Մնում էր մի հրաշք գործել և այս միանգամայն անձանօթ արձանազրութիւնները կարդալ: Այսպիսի փորձ արին միայն այն ժամանակ, երբ Նինուէի սեպածե արձանազրութիւնների ուսումնասիրութիւնը սկսուել էր, որովհետեւ նախահայ սեպածե արձանազրութիւնները մեծ նմանութիւն ունէին Նինուէում գտած սեպածե արձանազրութիւնների հետ, որ թողել են Ասորեստանի թագաւորները: Սակայն այստեղ առաջացաւ մի մեծ, զրեթէ անպարտելի դժուարութիւն նախահայ սեպածե արձանազրութիւնները կարդալու: Ուշի ուշով հետազօտելով այդ արձանազրութիւնները, Sayce և Guyard գիտնականներն եկան այն եզրակացութեան, որ այն լեզուն, որով գրուած են այդ արձանազրութիւնները, միանգամայն անյայտ լեզու է և որեւէ նմանութիւն չունի ոչ հայերէնի, ոչ արիական և ոչ էլ սեմիտական լեզուների հետ: Այդ լեզուն, ինչպէս ենթադրում են յիշուած գիտնականները, այժմ չքացած մի բարբառ է, որ երբեմն խօսուել է Առաջաւոր Ասիայում, որը գուցէ հեռաւոր նմանութիւն ունենար ուրախալոտայեան լեզուների հետ: Այսպիսի հանգամանքներում Վանի սեպածե արձանազրութիւնների ընթերցումը անկարելի էր թւում: Սակայն մարդկային մտքի կորովն այստեղ ևս հրաշք գործեց և գիտնականները կարողացան այդ արձանազրութիւնների մէջ կարդալ Տուշալա բառը: Այդ Վան քաղաքի անունն էր, որը մեր պատմութեան մէջ կոչւում է Վան-Տոսսալ,

իսկ Պաղոմէոս յոյն աշխարհագրից—Թոուպիա: Կարդացին նրանց մէջ նաև Խալդիս բառը:

Sayce և Guyard քաջակորով գիտնականները նկատեցին, որ նախահայ արձանագրութիւնների վերջերում շարունակ կրկնուում են նման նախադասութիւններ: Արդ, ինչ կարող էին նշանակել այս նախադասութիւնները: Որովհետև նոյն գիտնականները քաջ ծանօթ էին Ասորեստանի սեպածե արձանագրութիւնների հետ և գիտէին, որ սրանց վերջերում ևս շարունակ կրկնող նախադասութիւնները պարունակում էին անէծք այն անձերի դէմ, որոնք այդ արձանագրութիւնները կը փշաջնէին, տրամաբանօրէն եղրակացրին, որ նախահայ արձանագրութիւնների վերջերում կրկնող նախադասութիւնները նոյնպէս անէծք պիտի պարունակէին: Սրանով մի թոյլ բանալի էր գտնուած նախահայ սեպածե արձանագրութիւնների լեզուն հասկանալու: Այնուհետև նախահայ սեպածե արձանագրութիւնների վերայ աշխատեցին Բելլ և Լեման-Հաուպտ գերմանացի գիտնականները: Բելլը քիմիկոս էր և իբրև ելեկտրօտեխնիկ աշխատում էր Գեսարէլի պղնձեայ հանքերում: Նա Ռուդօլֆ Վիրխովի դրդմամբ այս կողմերում շատ նախապատմական գերեզմաններ հետազօտելով, եկաւ այն եղրակացութեան, որ Հայաստանում ապրել է մի հին ազգ, որը բարձր քաղաքակրթութիւն ստեղծելուց յետոյ անյայտացել է: Այս առթիւ Բելլը 1891 թ. ճանապարհորդեց Ռուսա-Հայաստանում երևանի, իսկ Տաճկա-Հայաստանում Վանի կողմերն և հաւաքեց բազմաթիւ նախահայ արձանագրութիւններ: Այս արձանագրութիւնները հաւաքելով, Բելլը միևնոյն ժամանակ մանրամասնաբար նկարագրել էր նրանց տեղն և շրջակայքը: Բելլը ընդարձակօրէն նկարագրելով Վանի Շամիրամի առուն, միևնոյն ժամանակ ընդօրինակել էր սրա պատերի վերայ քանդակ նախահայ արձանագրութիւնները: Այս արձանագրութիւնները Լեման-Հաուպտը

կարողացաւ կարգար: Սրանց բովանդակութիւնն էր. «Մենուաւը հիմնեց այս պիլին. Մինուաւի պիլի է սրա առունը»: Պիլի այստեղ կարող է կամ Շամիրամի առուն կոչուած կանալն և կամ նրա պատերը (ամբարտակը) նշանակել: Նոյն Լեման-Հաուպտը կարողացաւ կարգաւ Բելլի բերած մի ուրիշ նախահայ արձանագրութիւնը, որ նա գտել էր Քէշիշ-Գեօլ լճակի մօտ: Դուրս եկաւ, որ այս արձանագրութիւնը թողել է Ռուգաս խաղական թագաւորը († 714 Ք. ա.), որի մէջ նա պատմում է, որ ինքը վերանորոգել է Տուսպա քաղաքը, որը թակղաթ-փաղասար Ասորեստանի թագաւորը 735 թ. կործանել էր:

Իր այս հանձարեղ յաջողութիւնից Լեման-Հաուպտն այնքան ոգևորուեց, որ վճռեց անձամբ շրջել Հայաստանը, նրա նախահայ արձանագրութիւնները հաւաքել և կարգար: Այս մեծ ճանապարհորդութիւնն երեւի գերմանացի գիտնականը կատարեց 1898/99 թ. մեծ անձնագոհութեամբ, մասամբ վերոյիշեալ Բելլի ուղեկցութեամբ, գերմանական ուսումնական հիմնարկութիւններից և իր բարեկամներից ստացած խոշոր նպաստներով: Նա շրջեց Ռուսա-Հայաստանը, Ուրմիոյ լճի շրջակայքը, Միջագետքի հիւսիսային մասն և Տաճկա-Հայաստանը: Իր այս ճանապարհորդութիւնը նա նկարագրեց իր «Armenien einst und jetzt» («Հայաստանն երբեմն և այժմ») հիւանալի երկասիրութեան մէջ, որից և մենք առանք վերոյիշեալ տեղեկութիւնները: Լեման-Հաուպտն այս ճանապարհորդութեան ժամանակ իր նախորդների գտած նախահայ արձանագրութիւններն իր աչքով տեսաւ, ստուգեց և հրքանակարողացաւ, կարգաց:

Արդ, թէ Հայաստանում գտնուած նախահայ սեպագիր արձանագրութիւններից և թէ մանաւանդ Ասորեստանի թագաւորների թողած սեպագիր արձանագրութիւններից, որոնք երբեմն Հայաստանի մասին խօսում են, մենք տեղականում ենք, որ հայերից առաջ Հայաստանում

խաղողները կամ ուրարտացիները մի գօրեղ տէրութիւն են կազմել, հասել են բարձր քաղաքականութեան, ապա ան-
յայտացել են պատմութեան ասպարիզից:

Խաղողի կամ ու- Բրիստոսից դարեր առաջ Հայաստանը
rursացիների Ասորեստանի թագաւորներն իրենց թողած
պետւթիւնը: սեպածն արձանագրութիւնների մէջ ա-
նուանել են Նայիրի, Խալդիա, Ուրարտու և Մաննա:
Սկզբում Նայիրի երկրում ապրում էին բազմաթիւ ժո-
ղովուրդներ, որոնք միայն շատ թոյլ կապերով էին կա-
պուած միմեանց հետ: Սրանց հետ պատերազմ մղեցին ա-
ռաջին անգամ Ասորեստանի Սաղմանասար Ա. թագաւորը
մօտ 1320 թ. և իր որդին Տուկուլտի-Նինիբ Ա. Նոյն Նա-
յիրու ժողովուրդների հետ պատերազմ է մղել նաև Թալ-
ղաթ-փաղասար Ա. Ասորեստանի թագաւորը, որն ապրում
էր ըստ ոմանց 1,000, ըստ այլոց 2,000 տարի Ք. ա.:

Նայիրու ժողովուրդներն առաջին անգամ սերտ կա-
պերով միմիանց հետ միացան և մի տէրութիւն կազմե-
ցին հաւանաբար Սարգուր Ա. թագաւորի ձեռքով, որը
Լուտիպրիսի որդին էր: Այս Սարգուրը նշանաւոր է նրա-
նով, որ առաջին անգամ վանում ասորեստանցիների լե-
զուով արձանագրութիւններ փորագրել տուեց, որ ընդօրի-
նակեց վերև յիշուած պրօֆեսոր Շուլցը: Նայիրի երկրի
թագաւորութիւնն իր փառքի գագաթնակէտին հասաւ
Ասորեստանի Ասուրնազիրաբալ Գ. թագաւորի ժամանակ
(885—860): Այս թագաւորի տարեգրութիւններից երևում
է, որ Նայիրու ժողովուրդները միացած արևմտքից խուժող
արամէացիների հետ Ասորեստանի հիւսիսային կողմերում
նուաճումներ էին անում:

Ասուրնազիրաբալի յաջորդի և որդու, Սաղմանասար
Բ-ի ժամանակ (860—826) Հայաստանում Արամէի ձեռ-
քով խաղողի կամ ուրարտացիների ցեղը գերիշխանու-
թեան է հասնում: Այս Արամէն մեզ յիշեցնում է Մով-

սէս Խորենացու Հայոց Պատմութեան մէջ յիշուած քաջ
Արամ նահապետին:

Սաղմանասար Բ-ի պատերազմները Արամէի և իր
Սեդուր-Սարգուր որդու դէմ առանձին յաջողութիւն
չ'ունեցան: Ինչպէս վերև յիշուեց, Լուտիպրիսի որդին ևս
Սարգուր էր կոչոււմ, ուստի և մնում է անորոշ, արդեօք
այստեղ խօսքը մէկ, թէ երկու Սարգուրների մասին է:
Առայժմ հաւանական է համարոււմ երկրորդ ենթադրու-
թիւնը, այսինքն որ խօսքը ոչ թէ մէկ, այլ երկու Սար-
գուրների մասին է, որոնցից մինը Լուտիպրիսի, իսկ միւ-
սը Արամէի որդին էր: Իսպուինիսի ժամանակ, որն այս
Սարգուրի որդին էր, այսինքն Արամէի թոռն էր, խալ-
դերը վանում հաստատուեցին: Իսպուինիսը շուտով իրեն
գահակից դարձրեց իր քաջ որդուն, Մենուասին, որը խալ-
դական թագաւորութիւնը իր գօրութեան գագաթնակէ-
տին հասցրեց: Սա Ադադ-Նիրարիս Գ. (812—783) Ասո-
րեստանի թագաւորի ժամանակակիցն էր: Ադադ-Նիրարիս
Գ-ը ամուսնանալով բաբելական արքայադուստր Շամի-
րամի (=Սամուրամատա) հետ, Ասորեստանի հետ միա-
ցրել էր Բաբելոնը: Երկու հակառակ երկիրների թագա-
ւորները՝ Մենուաս և Ադադ-Նիրարիս Գ. հաւասար ոյժե-
րով պատերազմում էին միմեանց հետ: Մենուասի երկիրն
այդ ժամանակները կոչոււմ էր երբեմն Ուրարտու, եր-
բեմն էլ Խալդիա: Մենուասը յաջողութեամբ յետ մղեց
Ասորեստանի թագաւորի յարձակումներն և իր թագաւո-
րութեան սահմաններն ընդարձակեց: Պակաս նշանաւոր
չէր Մենուասն իր շինարարական գործերով. նա հիմնեց
Վան քաղաքը, զարդարելով նրան պալատներով և պար-
տէզներով: Մենուասի գործն է նաև Վանի հռչակաւոր
ջրանցքը, որն այժմ ևս գոյութիւն ունի (այժմեան Շա-
միրամի առուն) և ջուր է մատակարարում այժմ ևս, ինչ-
պէս Բրիստոսից 800 տարի առաջ, Վան քաղաքին և իր

դաշտին: Արդէն վերև (եր. 14—15) յիշուեց, որ այս ջրանցքի պատերի վերայ այսօր ևս կարելի է կարգալ նրա հիմնաքերի անունը:

Մենուասին յաջորդեց իր որդին Արգիստիս Ա. (784—760), որն իր հօր նուաճումները շարունակելով, Առաջաւոր Ասիայում գերիշխանութիւն ձեռք բերեց: Շատ անգամ արշաւելով իր թշնամիների վերայ, նրանց յաղթեց և նրանցից վերցրեց գերիներ, ոսկի, արծաթ, եղ, ձի, ոչխար և այլն: Ասորեստանի սահմաններն ևս նրա յարձակումներից ազատ չմնացին:

Արգիստիս Ա.-ին յաջորդեց իր որդին Սարգուր Գ. (Բ.) (760—730), որն իր հօր արշաւանքները յաջորդութեամբ շարունակեց: Սակայն սա վերջը յաղթուեց Թակղաթ-փաղասար Դ. Ասորեստանի թագաւորից (745—726): Ասորեստանցիներն խուժեցին երկրի ներսը, հասան մինչև Վան և կործանեցին այս քաղաքը 735 թ. Սարգուրի որդին, Ռուզաս Ա. (730—714), փոխադրեց իր գահն և իր Խալդիս ասածուն Թոփրաք-Կալէ բլուրը, որի ստորոտում հիմնեց իր Տուսպա նոր մայրաքաղաքը: Սա ենթարկուեց Ասորեստանի Սարգոն Բ. թագաւորի (722—708) յարձակումներին և իր կեանքը վերջացրեց անձնասպանութեամբ, ինչպէս Սարգոնը պատմում է իր թողած արձանագրութիւններում:

Ռուզաս Ա.-ին յաջորդեց իր որդին Արգիստիս Բ, որին Ասորեստանի Սենեքերիմ թագաւորը (705—681) յիշում է: Սա աշխատում էր իր աւերուած թագաւորութեան վերքերը դարմանել: Թագաւորութեան հարաւային նահանգները (Նայիրին և Մաննան) նուաճուել էին Ասորեստանից, բայց նրա հիւսիսային մասում (Ուրարտու երկրում) Արգիստիս Բ. կարողացաւ իր անկախութիւնը պահպանել: Ուրարտուի այս անկախութիւնը հաստատում է Հին Կտակարանն ևս, ըստ որի Սենեքերիմ թագաւորի

Ագրամելէք և Սարասար որդիներն իրենց հօրը սպանելով, փախչում են «Արարադայ երկիրն» և ազատ են մնում հետամտութիւնից (Դ. Թագ., գլ. ԺԹ, տ. 37):

Ուրարտուի կամ Խալդիայի վերջին թագաւորներն և իրենց գործերը տակաւին մթութեան քողով ծածկուած են: Ասորեստանի Ասուրառադոն (681—668) և Ասուրբանապալ (668—626) թագաւորների արձանագրութիւնները յիշում են էլի երկու Ռուզաս թագաւորների, որոնցից մէկն երիմենասի որդին էր, և Սարգուր Դ.-ին (Գ.-ին), սակայն տակաւին հնարաւորութիւն չկայ որոշելու նրանց գահակալութեան կարգն և ծննդաբանութիւնը: Շուտով սկսուեցան արիւնների կամ հնգիկ-եւրոպացիների արշաւանքները, որոնք վերջ դրին ոչ միայն Խալդիայի, այլև Նինուէի թագաւորութեանը (վերջինիս 608 թ.):

Ահա ուրարտացիների կամ խալդերի համառօտ պատմութիւնը, որ մենք առաջ բերինք Լէման-Հաուպտի յայտնէ աշխատութիւնից (Armenien, Bd I, S. 13—14): Նոյն երկասիրութեան մէջ անուանի գիտնականը յաճախ խօսում է խալդերի մասին և Հայաստանի զանազան գաւառներում գտնուած նախահայ արձանագրութիւնները կարգալով, աշխատում է խալդերի պատմութիւնը լուսաբանել: Մի երկու օրինակով ցոյց տանք, թէ ինչպէս է վարւում է Լէման-Հաուպտն իր հետազօտութիւնների ժամանակ: Ինչպէս յայտնի է, էջմիածնից ոչ հեռու, դէպի հարաւ արեւմուտք, իսկ Արաքսից դէպի հիւսիս նկատւում են աւերակներ, որոնք Հայաստանի հին մայրաքաղաքի, Արմաւրի աւերակներն են համարւում: Լէման-Հաուպտն այս կողմերում գտնուած մի նախահայ կամ խալդական արձանագրութիւն կարգալով, գտել է, որ այս արձանագրութիւնը թողել է Արգիստիս Ա. խալդական թագաւորը, որի մէջ նա յիշում է իր նուաճումներն և իր հիմնած Արգիստիսինա «յետուայ Արմաւիր» քաղաքը: Չէ հասկացւում, թէ ինչպէս

Արգիստիխինան Արմաւիր է դարձել: Արդ, Արգիստիսից մինչև մեր օրերն 2,600 ձիգ տարիներ են անցել և այս ժամանակուայ ընթացքում երկրիս մակերևոյթն ահագին փոփոխութիւնների է ենթարկուել: Չնայելով սրան Լէման-Հաուպտը վերոյիշեալ արձանագրութեան մէջ կարգաւով պիլի բառը (համեմ. վերև, եր. 15), եզրակացնում է, որ Արգիստիսը Արաքսից դէպի իր հիմնած Արգիստիխինա քաղաքը ջրանցք էր անցկացրել և պնդում է որ այդ խաթարուած ջրանցքի հունն այժմ ևս նկատուում է (Armenien, Bd I, S. 168): Անուանի գիտնականն իր երկասիրութեան մէջ (եր. 251) նկարագրում է նաև Կելիշին կրճի (Ուրմիա լճից դէպի հարաւ) մօտ գտնուող կոթողը, որը նոյնպէս մի խաղաղական արձանագրութիւն է պարունակում: Այս կոթողի վերայ գտնուած արձանագրութիւնը միանգամայն բնական պատահարներից քայքայուած է: Վայրենի քրդերն ևս իրենց հրացանների գնդակներով փչացրել են այս արձանագրութիւնը: Բայց և այնպէս Լէման-Հաուպտը պնդում է, որ ոչ միայն կարողացել է այս արձանագրութեան մէջ կարգաւ խաղաղական թագաւորների անուններ, այլև մօտաւորապէս հասկացել է նրա բովանդակութիւնը, որը վերաբերում է խաղերի կոլտուրական գործունէութիւնը:

Մեր վերջին ՌՊքեր էին խաղերն և երբ եկան Հասաբ խաղե- յաստան, յայտնի չի: Խաղերի ծագումը կը բի մասին: մնայ անորոշ, քանի որ նրանց լեզուի ծագումն անորոշ է մնում (վերև, եր. 13): Հայ դասական մատենագիրները շարունակ յիշում են խաղտիներին, որոնք բնակւում էին Պոնտոսից դէպի հարաւ, Գայլ և Ճորոխ գետերի ակունքներում: Սրանք խաղերի մնացորդներն են համարւում, որոնք հնդիկ-եւրոպական հայերից հալածուելով, գաղթեցին այստեղ, Պարխարեան լեռների կողմերը: Իսկ այժմեան հայերին, որոնք հնդիկ-եւրոպա-

կան ցեղին են պատկանում, Հայաստան գաղթած են համարում է. գարում Ք. ա. հնդիկ-եւրոպացի հայերը արեւմտքից գալով Հայաստան, խաղերին հալածեցին նրանց երկրից և նրանց տեղ հաստատուելով, ընդունեցին նրանց քաղաքակրթութիւնը: Սակայն այս լոկ ենթադրութիւն է, որ տարակուսանքի տեղիք է տալիս: Եթէ խաղերն երկար ժամանակ Հայաստանում ապրած և բարձր քաղաքակրթութիւն ստեղծած լինէին (կարծում են, որ նրանց մէջ սաստիկ զարգացած էր որմնադրութիւնը, դարբնութիւնը և որ նրանք հմուտ էին ջրանցքներ շինելու մէջ), արեւմտքից գաղթած հնդիկ-եւրոպական հայերն անպայման պիտի ենթարկուէին նրանց ազդեցութեանն և այժմեան հայ լեզուն անպայման պիտի կրէր խաղերէնի հետքերը, մինչդեռ, ինչպէս ասուեց (վերև, եր. 13), ցայժմ ոչ մի նմանութիւն չի գտնուել հայերէնի և խաղերէնի մէջ, որով զբուած են նրանցից մնացած արձանագրութիւնները:

Հաւկ'անենք, եթէ ակնածութեամբ խոնարհուելով Լէման-Հաուպտի նման անուանի և անձնագոհ գիտնականների հեղինակութեան առաջ, նրանց պատմածը խաղերի մասին ընդունենք վերապահութեամբ և սպասենք, մինչև որ ապագան նոր լոյս կը սփռէ խաղերի պատմութեան և հայերի Հայաստան գաղթելու ժամանակի վերայ, մանաւանդ որ տակաւին կան ուսումնականներ, որոնք կասկած են յայտնել նոյնիսկ Ասորեստանի թագաւորների թողած արձանագրութիւնների ընթերցանութեան ճշտութեան մասին (հմմ. Գարազաշեան, Քնն. Պատմ., հտ. Ա, եր. 29):

ԳԼՈՒԾ Գ

ՀԱՅ ԱԶԳԻ ԵՒ ԼԵԶՈՒԻ ԾԱԳՈՒՍԸ

Մարդկային սե- Մարդիկ համեմատ իրենց մորթի զոյ-
րնդի երեք հիմ- նին երեք հիմնական ցեղեր են կազմում՝
նական ցեղեր: սպիտակ, դեղին և սև ցեղ: Սպիտակ ցե-
ղին պատկանում են արիական և սեմական ազգերը: Այս
ազգերին պատկանող մարդկանց գանգն և երեսը զարգա-
ցած են համաչափ կերպով: Դեղին ցեղին պատկանում
են մոնղոլական, ֆինական և մալայեան ազգերն ու թուրք-
մէհները: Այս ցեղին պատկանում են Ամերիկայի կար-
մրամորթ բուն բնիկներն ևս: Այս ցեղի մեծագույն մասի
բնորոշ դիմագծերն են՝ դուրս ցցուած ալոսկրներ և
նեղակտուր աչքեր: Իսկ սև ցեղին պատկանում են Աֆրի-
կայի նեգրերը և Աւստրալիայի պապուականները: Մրանց
ծնօտները դուրս են ցցուած:

Պատմութեան մէջ ցայտմ ամենամեծ դերը խաղա-
ցել են սպիտակ ցեղին պատկանող ազգերը, այսինքն ա-
րիներն և սեմիտները: Հայերը, որոնք Հայաստան ար-
շաւեցին և այս երկրում հաստատուեցին (հաւանաբար է.
դարում Ք. ա.), պատկանում են արիական ցեղին, որի
պատմութեանն այժմ անցնում ենք:

Արիական ցեղ և Արիական ցեղի սկզբնական հայրենիքն
իւ սկզբնական եղել է հաւանաբար Միջին Ասիայի արև-
կեցադը: մտեան մասը, Յաքսարտէս (Սիր-Դարիա) և

Ոքսոս (Ամու-Դորիա) գետերի վերին աւազանները, թէ-
պէս և կան գիտնականներ, որոնք այս ցեղի սկզբնական
հայրենիքը հարաւային Ռուսաստանի տափաստաններում
են որոնում: Ուրիշ հետքեր ենթադրել են տալիս, որ ա-
րիների սկզբնական հայրենիքը պէտք է եփրատ գետի
աւազանում որոնել, այսինքն այն երկրում, որն ըստ Սուրբ
Գրքի մարդկութեան ցեղի որրանն է համարւում:

Արիները (արեա—ազնիւներ) սկզբում, գաղթելուց
առաջ, թափառական կեանք էին վարում և նրանց գլխա-
ւոր պարագմունքն էր անասնապահութիւնը: Արդեօք երկ-
րագործութեամբ ևս նախարիական ցեղը պարապել է, թէ
ոչ, մնում է անորոշ: Արիներն իրենց բազմաթիւ նախնի-
ներով և հօտերով թափառելով մի տեղից միւս տեղ,
չունէին հաստատ բնակութիւն և ապրում էին գետնափոր
հիւղերում (որոնք այսօր ևս յաճախ պատահում են հայ
գիւղերում) ու վրաններում: Տաւարի և ոչխարի մսով և
կաթով արիները կերակրւում էին, իսկ նրանց մորթե-
րից շորեր էին կարում, իբրեւ թել գործ ածելով նոյն
կենդանիների շոր ջղերը: Կրակն իբրեւ կերակուր պատ-
րաստելու միջոց նրանց ծանօթ էր, աղի գործածութիւնը
նոյնպէս ծանօթ էր: Մետաղներից նրանց ծանօթ
էին պղինձն և արծաթը, որոնցից գէնքեր և զարդի ա-
ռարկաներ էին շինում: Ի հարկէ արիների կեանքը պարզ
և նահապետական էր: Նրանք բաժանւում էին տոհմերի,
իսկ իւրաքանչիւր տոհմ բաղկացած էր մի քանի ընտա-
նիքներից, որոնք առաջացել էին միեւնոյն նախահայրերից:
Ընտանիքը նախարիների մէջ արդէն կազմակերպուած
էր: Սակայն իւրաքանչիւր տոհմ ապրում էր իր առան-
ձին կեանքով: Միայն բոլոր տոհմերին սպառնացող ընդ-
հանուր վտանգի ժամանակ նրանք միանում էին միմեանց
հետ և իրենց տոհմապետների ղեկավարութեամբ պաշտ-
պանւում իրենց ամրավայրերում: Արիների կրօնն ևս

պարզ էր. նրանք երկրպագում էին բնութեան երևոյթներին, որոնց մէջ ոգիներ էին տեսնում, և իրենց մեռած նախնիներին, որոնց հոգիները իբրև ստուերներ նրանց մահից յետոյ ևս շարունակում էին իրենց գոյութիւնը: Իրենց աստուածներին նրանք անուանում էին ղէւսսներ (սանսկրիտերէն ղէւսս, հայերէն ղել, լատիներէն ղէուս (=Աստուած), յունարէն թէոս (=Աստուած), որ նշանակում է լուսափայլ էակներ և նրանց էին վերագրում ամեն տեսակ բարիքներ: Առանձնապէս արիւնները պաշտում էին երկինքն և երկիրը, որոնց անուանում էին հայր և մայր բոլոր արարածների: Նախնիների պաշտամունքն արիւնների մէջ կապուած էր ընտանեկան օջախի պաշտամունքի հետ, որը յետոյ շատ զարգացաւ յոյների և հռոմէացիների մէջ:

Արիական Խոնչ աղբիւրներից գիտենք վերոյիշեալ տեղեղերի ղեկութիւնները արիւնների մասին: — Այս բոլորը լեզուն: մենք իմանում ենք նրանց լեզուից, որն իր բազմաթիւ ճիւղաւորումներով մեզ է հասել: Եթէ կորած լինէր արիւնների լեզուն, նրանց ծագումն ևս մեզ անյայտ մնացած կը լինէր, ինչպէս անյայտ է մնացել խալդերի ծագումը: Սակայն արիւնների լեզուն մեզ հնարաւորութիւն է տալիս որոշելու ոչ միայն նրանց ծագումն, այլև նրանց նախնական կեանքը և ահա թէ ինչպէս: Արիական ցեղի լեզուն մեզ է հասել իր երկու գլխաւոր բարբառներով, որոնցից մինը սանսկրիտերէնը, իսկ միւսը ղենդերէնն է: Առաջին բարբառով խօսում էին Հնդկաստան գաղթած արիւններն և նրանով գրուած են ի միջի այլոց հնդկական Վեդաները (հնդկացիների աստուածներին նուիրուած օրհներգութիւնները). իսկ երկրորդ բարբառով խօսում էին Իրանում (Պարսկաստանում) ապրող արիւններն և զրանով գրուած է Զենդ-Աւեստա (=կենդա-

նի խօսք) մատեանը, որը ներկայացնում է Զրադաշտի կրօնը:

ԺԹ. դարում համեմատական լեզուագիտութիւնը հսկայական քայլեր արաւ և այս գիտութիւնով պարապող գիտնականներին յաջողուեց ապացուցել, որ սալիտակ ցեղին պատկանող բազմաթիւ ազգերի, ինչպէս հնդկացիների, իրանցիների, հայերի, յոյների, հռոմայեցիների, կելտերի, գերմանացիների, սլաւոնների և լիտովցիների լեզուները առաջացել են միևնոյն նախամայր լեզուից, որը մեզ հասել է, ինչպէս յիշուեց, իր սանսկրիտ և գենդ բարբառներով: Սրանով իհարկէ ապացուցուած էր նաև այն, որ վերոյիշեալ ազգերը ծագում են միևնոյն նախահօրից և եղել է ժամանակ, երբ նրանք մի ազգ կազմելիս և միասին ապրելիս են եղել: Մնում էր որոշել վերոյիշեալ լեզուների հիմնական բառերը փոխառեալ բառերից, որը նոյնպէս յաջողուեց գիտնականներին անել: Սանսկրիտերէնին, ղենդերէնին և սրանցից առաջացած վերոյիշեալ միւս լեզուներին յատուկ հիմնական բառերն անկասկած կազմում են այն նախարիական լեզուի բառամթերքը, որով խօսում էին նախարիւնները, այսինքն արիական ազգերի նախահայրերը, երբ նրանք տակաւին չէին գաղթել և միասին էին ապրում: Եւ որովհետև իւրաքանչիւր բառին համապատասխանում է մի որոշ հասկացողութիւն (եթէ մի ազգի լեզուի մէջ պատահում է օր. կով բառը, կը նշանակէ այդ ազգը ճանաչում էր այս կենդանուն և անասնապահութեամբ էր պարապում. եթէ նոյն ազգի լեզուի մէջ արծր, գուծան, խով և այլն բառերը չեն պատահում, կը նշանակէ, այդ ազգին երկրագործութիւնն անձանօթ է եղել), ուստի և նախարիական ազգի բարբառի հիմնական բառամթերքի որոշումով որոշուած էր նաև նոյն ազգի նախնական կեանքի նկարագիրը, որն և մենք վերև առաջ բերինք: Որովհետև սանսկրիտերէնում

նչ երկրագործական գործիքները և ոչ էլ հացահատիկների անուաններ են պատահում (բացառութեամբ մի բառի, որը սանակրիտերէնում գարի, իսկ յունարէնում կարմրացորեն է նշանակում), ուստի գիտնականները դժուարանում են ենթադրել, որ նախարիները իրենց գաղթականութիւնից առաջ երկրագործութեամբ պարապած լինէին բառիս ընդարձակ մտքով: Որովհետեւ ծով գոյականը սանակրիտերէնում բացակայում է, ուստի և գիտնականներն ենթադրում են, որ նախարիների բուն հայրենիքը ծովերից և ովկիանոսներից հեռու էր գտնւում և այլն:

Արիմեի Երկար դարեր արիներն իբրեւ խաշնարածներ գաղթը: միասին ապրելով և բազմաւարով, ապա գաղթեցին, ոմանք դէպի հարաւ արեւելք՝ Հնդկաստան, իսկ ոմանք էլ դէպի հիւսիս արեւմուտք՝ Եւրոպա: Ահա թէ ինչու արիները հնդկա-եւրոպացիներ կամ հնդկա-գերմանացիներ ևս կոչւում են: Հնդկաստան գաղթած արիներն սկզբում հաստատուեցան Ինդոս գետի ափերում, իսկ այստեղից էլ Քրիստ. մօտ 1,300 տարի առաջ գաղթեցին Գանգէս գետի ափերը, ուր և հնդիկ արիների քաղաքակրթութիւնն իր զարգացման բարձրագոյն գագաթնակէտին հասաւ:

Այս գաղթից յետոյ արիների միւս մասը երկար ժամանակ, ինչպէս կարծւում է, Պարսկաստանում և Հայաստանում մնալուց յետոյ անցաւ Եւրոպա: Վերջին ենթադրութեանն առիթ է տուել այն հանգամանքը, որ Հայաստանն և Պարսկաստանն երկրագործութեան ու գինեգործութեան ոլորտն են համարւում, իսկ այս արուեստների հետ Եւրոպա գաղթող արիներն արդէն ծանօթ էին: Նշանաւոր է նաև այն հանգամանքը, որ Եւրոպա գաղթած արիական ցեղերի մեծագոյն մասը՝ լատինները, կելտերը, գերմանացիներն և սլաւոնները ծով հասկացողութեան համար նոյն բառն են գործածում (լատ. մարէ, ֆր. մէր, գերմ. մէէր, ռու. մորէ) և այս ցոյց է տա-

լիս, որ սրանց նախահայրերը միմեանցից բաժանուելուց առաջ պէտք է հասած լինէին Սև և կամ գոնեայ կասպից ծովի ափերին:

Իւրաքանչիւր ազգի ծագումը պարուրուած է անյիշելի ժամանակների անթափանցելի մշուշով: Սակայն իւրաքանչիւր ազգի լեզուն այդ մշուշը շատ թէ քիչ փառատում և նրա ծագումը գոնեայ ընդհանուր գծերով որոշում է: Արդ, հայ ազգի ծագման մասին խօսելուց առաջ նախ խօսենք նրա լեզուի ծագման մասին:

Հայ լեզուի Այն օրից, երբ հայ ազգի պատմութիւնն ծագումը: ուսումնասիրութեան առարկայ դարձաւ, նրանով հետաքրքրուող բոլոր գիտնականներն էլ միաձայն վկայեցին, որ հայ լեզուն հնդկա-եւրոպական կամ արիական լեզուների ընտանիքին է պատկանում: Այդ ապացուցւում է ոչ միայն նրանով, որ հայերէնում գոյութիւն ունին արիական լեզուներին պատկանող բազմաթիւ արմատական բառեր, այլև նրանով, որ հայ լեզուն իր քերականական կազմով և առանձնայատկութիւններով միանգամայն նման է արիական լեզուներին:

Ինչպէս յայտնի է, արիական լեզուներն երկու ճիւղերի են բաժանւում—արեւելեան կամ իրանական ճիւղ և արեւմտեան ճիւղ, որին պատկանում են յունարէնը, լատիններէնը, գերմաներէնը, սլաւոններէնն և այլն: Սկզբում գիտնականները աչքի առաջ ունենալով հայերէնում գոյութիւն ունեցող բազմաթիւ իրանական (պարսկերէն) բառերը, կարծեցին, թէ հայերէնը մի իրանական բարբառ է: Սակայն նորագոյն ժամանակներս գերմանացի երեւիլ լեզուագէտ պրօֆեսոր Հիւբշմանը ապացուցեց, որ հայերէնը հնդկա-եւրոպական կամ արիական մի առանձին լեզու է, միանգամայն անկախ իրանական լեզուներից և պատկանում է հնդկա-եւրոպական լեզուների արեւմտեան մեծ ճիւղին: Նոյն գիտնականը ցոյց տուեց, որ հայերէնում գոյութիւն ունեցող բազմաթիւ պարսկերէն բառերը փոխ են առնուած պարսիկներից շնորհիւ այն հանգամանքի, որ

Հայաստանը Կիւրոսի ժամանակներից սկսած շատ դարեր գտնուում էր պարսից գերիշխանութեան կամ ազդեցութեան տակ: Վերջին ժամանակներս Մառ վրացի հայագէտը փորձեր է արել ցոյց տալու, որ հայերէնը սեմիտական ծագում ունի, այսինքն պատկանում է այն լեզուական ընտանիքին, որին պատկանում են երբայեցերէնը, ասորերէնը, արաբերէնն և այլն: Մառի այս փորձերը գիտնականներից հաւանութիւն չգտան և երևի չեն էլ գտնի: Արիւններից (հայերից) առաջ Հայաստանում հաւանաբար սեմական ցեղեր ևս ապրել են: Եթէ Մառի հետազօտութիւններն ուղիղ են, եթէ նա յիշաւի գտել է հայերէնում սեմիտական տարրեր, այն ժամանակ այս հանգամանքը պիտի բացատրել այն ազդեցութեամբ, որ հայերից առաջ Հայաստանում ապրող սեմական ազգերն ունեցան իրենց երկիրը գաղթած հայերի լեզուի վրայ:

Հայ ազգի Արդ, քանի որ հայ լեզուի ծագումն ապա-ծագումը: ցուցուած է, ապացուցուած է հայի ազգի ծագումն ևս, որն ի հարկէ արիական է: Եւ որովհետեւ ապացուցուած է, որ հայերէնը հնդկա-եւրոպական կամ արիական լեզուների արեւմտեան ճիւղին է պատկանում, պարզ է, որ եղել է ժամանակ, երբ հայերն և այդ ճիւղին պատկանող լեզուները խօսող միւս եւրոպական ազգերը մի ընդհանուր հայրենիք ունէին, ուր և գոյացան նրանց լեզուների մէջ նկատուող ընդհանուր արմատական տարրեր: Եւ իրաւ, Հերոդոտ յոյն պատմագիրը (484—425 Ք. ա.) ասում է, որ հայերը Փոփուգիայից էին գաղթել և փոխաբացիներին համացեղ և համալեզու մի ազգ էին, իսկ փոխաբացիների մասին պատմուում է, որ նրանք սկզբում ապրում էին Թրակիայում: Յոյն պատմագիրներից նոյնպէս վկայուած է, որ հայերն իրենց զէնքերով և զգեստներով ևս նման էին փոխաբացիներին: Եւ այսպէս ուրեմն յոյն պատմագիրները հաստատում են հայերի արիական

կամ հնդկա-եւրոպական ծագումն և գաղթը Հայաստան արեւմտքից, այսինքն այն, ինչ որ այսօր հաստատում է մեր լեզուն:

Այժմ հարց է ծագում, թէ երբ հայերը գաղթեցին Հայաստան: Արդ, ինչպէս տեսանք (վերև, եր. 16, Քրիստոսից մօտ 13 դար առաջ հարաւային Հայաստանում հաստատուեցան ուրարտացիները, որոնք և այս երկրում իշխեցին մինչև է. դարու վերջերը: Սրանք արիւններ չէին: Յոյն մատենագիրներից յայտնի է, որ է. դարում Ք. ա. կիմերներն և սկիւթացիներն արշաւեցին Առաջաւոր Ասիայի վերայ: Սրանց արշաւանքը Փոքր Ասիայում բնակուող ազգերի մէջ ևս շարժում առաջացրեց և հաւանաբար հէնց այդ ժամանակ փոխաբացիական արիւնները (հայերը) թողնելով իրենց բնակավայրը, գաղթեցին դէպի արեւելք, անցան Եփրատն և ընդմիշտ հաստատուեցան Հայաստանում, նուաճելով այս երկրում բնակուող խալդերին կամ ուրարտացիներին (Հերոդոտի յիշած ալարոդներին) և միւս ազգերին: Սակայն արիւնների (հայերի) Հայաստան գաղթելու ժամանակը տակաւին ենթադրական է և կարօտ լուսաբանութեան: Մանաւանդ մի հանգամանք այստեղ բացատրութեան կարօտ է: Վանի բնեռագրերը կարգացողները գտնում են, որ այն լեզուն, որով այդ բնեռագրերը գրուած են, ոչ մի կապ, ոչ մի նմանութիւն չունի արդի հայերէնի հետ: Արդ, եթէ յիշաւի հայերի (արիւնների) գաղթից առաջ Հայաստանում ուրարտացիները կամ խալդերը ծաղկեցին և մեծ քաղաքակրթութիւն ստեղծեցին, ինչպէս եղաւ, որ այդ քաղաքակիրթ ազգի լեզուն ոչ մի ազդեցութիւն, ոչ մի հետք չթողեց արեւմտքից գաղթած կիսաբարբարոս արիւնների (հայերի) լեզուի վերայ: Ալէքսանդր Մակեդոնացին քաղաքակիրթ Յունաստանը նուաճելով, դարձաւ յոյն և յունախօս. հզօր հռոմէական կայսրութիւնը Բիւզանդիոնը

նուաճելով, դարձաւ յոյն և յունախօս: Նոյնը սպասելի էր և VII դարում Հայաստան գաղթող արիւններից (հայերից), եթէ նրանցից առաջ յիրաւի ուրարտացիները կամ խալդերը այս երկրում բարձր քաղաքակրութիւն լինէին սեղծած:

Սակայն հաստատ յայտնի է, որ վեց դար Ք. ա. արիւնները (հայերը) արգէն հաստատուած էին Հայաստանում և ունէին թագաւորութիւն: Քսենոփոն յոյն պատմագիրը պատմում է, որ Կիւրոսի ժամանակ (560—529) Հայոց թագաւորի որդիները կոչուած էին Տիգրան և Սաքարիս (Շաւասպ), իսկ սրանք զուտ արիական անուններ են և ոչ թէ ուրարտական:

Հայ եւ Հայասան, Մինչդեռ Հայաստան գաղթած արիւնքներն եւ Արեւելիս: Ներս մեզ անուանում ենք հայ, իսկ մեր երկիրը Հայք, Հայաստան, օտարները մեզ անուանում են արմէններ, իսկ մեր երկիրը՝ Արմէնիա: Պէտք է նկատել, որ Հայաստանն առաջին անգամ Արմնիք է կոչուած Դարեհ Վշտասպի (521—485) արձանագրութեան մէջ: Եբրայեցիները Հին Կտակարանում մեր երկիրը կոչում են Արարատ երկիր, Արարատեան թագաւորութիւն, որ մեզ յիշեցնուի է Հերոտոտի յիշած ալարոռներին և սեպաձև արձանագրութիւնների Ուրարտուն: Սակայն ինչպէս Ամովս Մարգարէի խօսքերից երևում է («անկանիցիք ի լերինն Ռեմանայ» գլ, 4, տ. 3), եբրայեցիներին և Արմէնիա անունը ծանօթ էր: Թէ հայ և թէ արմէն անունները բաւարար կերպով տակաւին չեն ստուգաբանուած: Ըստ Ստրաբոն յոյն աշխարհագրի հայերը կոչուել են արմէններ, իսկ Հայաստանը Արմէնիա Արմէնիոս Թեոփիլոս անունով, որը թողնելով իր ծննդավայր Արմէնիոն քաղաքը, գաղթել է Հայաստան: Ըստ Մովսէս Խորենացու մենք հայեր, իսկ մեր հայրենիքը Հայք է կոչուել Հայկ նահապետի անունով, իսկ մեր հայրենիքը Արմենիա է կոչուել Արամ նահապետի անունով, որն իր

քաջագործութիւններով յայտնի և ահաւոր դարձաւ օտարազգիներին: Ըստ մի անանուն հայ մատենագրի մեր հայրենիքն Արմենիա է կոչուել Հայկի որդի Արամանեակի կամ Արմենակի անունով:

Խորենացու և ամն-Մովսէս Խորենացին և անանուն հայ ամուրի աւան-մատենագիրը պատմում են, որ հայոց նադուբան արժեք: Խահայրն է եղել Հայկ անունով մէկը, որը Բաբելոնում ապստամբուելով Բէլ բռնակալի դէմ, իր ընտանիքով և ընդոժիւններով եկել է Արարատ երկիրը, որն և նուաճելով իր անունով կոչել է Հայք: Ուրիշ խօսքերով, Խորենացին և անանուն հայ մատենագիրը հայերին (արիւններին) Հայաստան գաղթած են համարում ոչ թէ արեւմտքից, ինչպէս յոյն պատմագիրները, այլ արեւելքից, ըստ Աստուածաշնչի մարդկային ազգի ընդհանուր որոշանից: Արգի պատմագրութիւնն այս աւանդութիւնը սխալ չէ համարում, ընդունելով, որ Խորենացու խօսքը ոչ թէ արիւնների, այլ արիւններից առաջ Հայաստանում ապրող սեմիտների կամ քուշիտների մասին է, որոնք յիրաւի Միջագետքից կարող էին Հայաստան գաղթել: Նոյն Ստրաբոն յոյն աշխարհագիրը առաջ է բերում մի ուրիշ աւանդութիւն հայերի մասին, ըստ որի հայերը (արմէնները) արամէացիներին (ասորիներին) և արաբներին ցեղակից և նրանց շատ նման էին թէ լեզուով, թէ կազմուածքով և թէ նիստ ու կացով: Այս բոլորը խօսում է յօգուտ Խորենացու աւանդութեան, ըստ որոյ Հայաստանի նախահայ ազգաբնակիւթիւնը արեւելքից է Հայաստան եկել: Սակայն այդ աւանդութեան մանրամասնութիւնները պատմական ճշտութիւնից զուրկ են և հնարուած են իրենից, Մովսէս Խորենացուց: Այսպէս Խորենացին Հայկին համարում է հայ ազգի նախահայրը, մինչդեռ Խորենացուց առաջ ապրող հայերը, որոնք Աստուածաշունչը թարգմանեցին հայերէն, Հայկին ճանաչում են լոկ իբրեւ հակայ և

քաջ աղեղնաւոր, բայց ոչ երբէք իբրեւ հայոց ազգի նախահայր: Աստուածաշնչում յիշուած է մի համաստեղութիւն (Եսայի, գլ. 13, տ. 10. Յովբ, գլ. 38, տ. 31), որ քաղղէացիները թարգմանել են Բիմա, որ նշանակում է գոռ պատերազմող կամ հսկայ: Աստուածաշնչի յոյն թարգմանիչներն այս անունը թարգմանել են Որիոն անունով, որն ըստ յունական առասպելի մի հսկայ և քաջ աղեղնաւոր էր և իր մահից յետոյ իր Սիրիոս շան հետ երկինք փոխադրուեց և համաստեղութիւն դարձաւ (Շնաստղ համաստեղութիւնը): Աստուածաշնչի հայ թարգմանիչը, աչքի առաջ ունենալով բնագրի իմաստը, Որիոն անունն տեղ դրել է Հայկ անունը, որով ուրեմն Հայկին համարել է նոյնպիսի հսկայ և քաջ աղեղնաւոր, որպիսին էին յունական Որիոնն և քաղղէական Քիման: Պարզ է ուրեմն, որ Խորենացին կամայաբար Հայկին հայ ազգի նախահօր պատին է վերագրում, որ նա չունէր: Հայկ անունից Խորենացին նոյնպէս կազմել է հայկական, հայկազն ածականները, որ նա տալիս է հայ լեզուին և հայ ազգին, սակայն այս ածականները միւս հայ մատենագիրներին, օր. Ագաթանգեղոսին և Փաւստոսին, բոլորովին անծանօթ են: Սրանք չեն ասում հայկական երկիր, հայկական գունդ, հայկական լեզու, հապա հայաստան երկիր, հայաստան գունդ, հայ լեզու: Սխալ են համարում նաև Խորենացու ստուգաբանութիւնը, ըստ որի հայ անունը առաջացել է Հայկ անունից. ընդհակառակն, Հայկ անունն է առաջացել հայ անունից: Խորենացին Հայկ հսկային կամայաբար հայ ազգի նախահայրը դարձնելով, այս կեղծիքին մի ուրիշ կեղծիք է աւելացնում, ասելով, իբր թէ Հայկը Թորգոմի որդին էր: Եւ որովհետեւ այս Թորգոմն ըստ Աստուածաշնչի Նոյ նահապետի Յաբեթ որդու թոռնորդին էր (Նոյ—Յաբեթ—Գամեր—Թիրատ—Թորգոմ), պարզ է, որ Խորենացին սրանով ուզում

է հայ ազգի ծագումն Սուրբ Գրքի պատմութեան հետ շողկապել: Աստուածաշնչում յիշուած է (Ծննդ. գիրք, գլ. 10 տ. 3), որ Թորգոմը Գամերի որդին էր, սակայն չէ յիշուած, թէ Հայկն էլ Թորգոմի որդին լինէր: Այս Խորենացին ինքն է հնարել:

Տուն, ազգ Թորգոմ— Հայկի Թորգոմի որդի լինելը մի կեղծիք մեան: Ասեմնա— է, որ հնարել է Խորենացին: Բայց նախնի գեան ազգ, գունդ: հայ մատենագիրները, հիմնուելով Աստուածաշնչի վերայ, մեզ յաճախ անուանել են Տուն Թորգոմայ, Տուն, ազգ Թորգոմեան: Հայերին այսպէս անուանելը հիմնուած է եղեկիէլի մարգարէութեան վերայ (գլ. 27, տ. 14 և գլ. 38, տ. 6): Շատ օտարազգի քրիստոնեայ մատենագիրներ ևս այս տեղերում յիշուած «Տուն Թորգոմայ» բառերով Հայաստանն էին հասկանում: Կորիւն հայ մատենագիրը, որը գրել է սուրբ Մեսրոպի կենսագրութիւնը, հայերիս անուանել է Ասքանազեան ազգ: Մեր Ասքանազեան ազգ կոչուելն էլ հիմնուած է երեմիա Մարգարէի հետեւալ խօսքերի վերայ. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան զնդին» (գլ. 51, տ. 27), թէպէտ, ինչպէս բացատրում են, Ասքանազեան գունդ ասելով այստեղ ոչ թէ Հայաստանը, այլ հիւսիսից արշաւող սկիւթացիներն են հասկացւում:

Գ Լ Ո Ւ Ս Դ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ը

ՄԱՐԱՑ ԵՒ ՊԱՐՍԻՑ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ
(608—330)

Ասորեստանի Ասորեստանը, Ուրարտուի թագաւորու-
կործանումը: Թեան գարեւոր հարեանն և հակառակորդը,
608 թ. Ք. ա. կործանուեց մարերի և բաբելացիների
ձեռքով: Մարաստանի Կիաքսար Ա. և Բաբելոնի Նաբու-
պալասար թագաւորները միմեանց հետ միաբանուելով,
այս թլակահին կործանեցին Նինուէն, Ասորեստանի
մայրաքաղաքը, Ասորեստանը բաժանեցին միմեանց մէջ,
իսկ նրա գրեթէ բոլոր բնակիչներին գերի տարան: Այս-
պիսով Ասորեստանի գերիշխանութիւնն անցաւ Բաբելո-
նին և Մարաստանին: Բաբելոնը կամ Քաղզէան շուտով
մի մեծ, զօրեղ տէրութիւն դարձաւ, մանաւանդ երեւելի
Նաբոլքոդոնոսորի թագաւորութեան ժամանակ (604—561):

Մարաց եւ պար- Սկզբում գերիշխանութեան հասած
սից մեծ պետու- երկու պետութիւնների, Բաբելոնի և Մա-
թիւնների: րաստանի մէջ խաղաղութիւն էր տիրում:
Մարաց թագաւորը նուաճեց Պարսկաստանը, Պարթևաս-
տանն և ուրիշ երկիրներ: Սակայն երբ Կիւրոս պարսից
թագաւորը (560—529) Մարաստանի և Պարսկաստանի
գերիշխանութիւնն իր ձեռքն առաւ, այն ժամանակ Լիւ-
զիայի (Փոքր Ասիայի արեւմտեան մասում գտնուող տէ-
րութիւն) Կրիսոս թագաւորը, որը յայտնի էր իր ան-

համար գանձերով, վախենալով Կիւրոսի գերիշխանութիւ-
նից, նրա դէմ դաշինք կապեց Բաբելոնի և Եգիպտոսի
թագաւորների հետ: Չսպասելով դաշնակիցներին, նա
պատերազմ սկսեց Կիւրոսի դէմ, սակայն յաղթուեց, իսկ
նրա ամբողջ թագաւորութիւնն իր Սարգէ մայրաքաղաքով
Կիւրոսի ձեռքն ընկաւ (554 թ.) *։ Սրանցից յետոյ Կիւ-

*) Կիւրոսի իշխանութեան հասնելը յոյն պատմագիրները
միմեանցից տարբեր և առասպելախառն եղանակով են պատմում:
Ըստ Հերոդոտի Աթդահակ մարաց թագաւորը երազում տեսնում
է, որ իր թոռ պէտք է իր իշխանութիւնը յափշտակէ: Ցանկա-
նալով չարագուշակ երազի կատարումը խափանել, նա իր Մանդա-
նէ դստերը մի աննշան պարսկի կնութեան է տալիս: Եւ երբ այս
ամուսնութիւնից ծնւում է Կիւրոսը, Աթդահակը իր Վարբակ իշ-
խանին հրամայում է զաղտնաբար մանկանը սպանել: Սակայն
Վարբակը նրա հրամանը չէ կատարում, այլ Կիւրոսին յանձնում
է հովիւներին, որոնց մէջ նա մեծանալով, սովորում է պատե-
րազմական արուեստը, ապա իր պապին յաղթում և նրա տէրու-
թիւնը յափշտակում է: Սրան հակառակ Կոեսիաս պատմագիրն
ասում է, որ Աթդահակի և Կիւրոսի մէջ ոչ մի ազգակցական
կապ չկար, որ Կիւրոսը յաղթելով Աթդահակին, սկզբում խնա-
յում է նրա կեանքը նրա Ամիւտիս դստեր համար, սակայն յե-
տոյ նրան սովամահ է անում: Ըստ Քսենոփոնի ևս Կիւրոսն Աթ-
դահակի Մանդանէ դստեր որդին է, սակայն նա իր պապի դէմ
երբէք զէնք չէ առել: Աթդահակը մեռնում է խաղաղ մահով և
նրան յաջորդում է իր որդին Կիաքսար Բ. Կիւրոսը դառնում է
սրա զօրավարն և Բաբելոնն առնելուց յետոյ ամուսնանալով Կի-
աքսարի միամօր դստեր հետ, նրա մահից յետոյ ժառանգում է
նրա թագաւորութիւնը խաղաղ կերպով: Ըստ Մովսէս Սորենացու
Աթդահակը սպանւում է Տիգրան Հայոց թագաւորի: ձեռքով: Աթ-
դահակն երազ է տեսնում, որից եղբակացնում են, որ նրա թա-
գաւորութիւնը պիտի կործանուի հայոց թագաւորի ձեռքով: Եւ
Սակայն այս երազը վերջ յիշուած Կիւրոսի մասին տեսած երա-
զի հետ մեծ նմանութիւն ունի (Գաթրճեան, Տիեզ. Պատմ. Ա.
եր. 106): Ոչ մի կասկած չկայ, որ Սորենացին այստեղ յեղա-
շրջում է յոյն պատմագրի աւանդածը:

րոսը պատերազմ սկսեց Բաբելոնի դէմ և տիրեց այս քաղաքին և պետութեանը (538 թ.):

Կիաքսարի եւ Կիւրոսի Քսենոփոն յոյն պատմագիրը պատմամանկակից Հայաստանում է, որ վերոյիշեալ Կիաքսարի և Կիւրոսի մարաց թագաւորի ժամանակ Հայաստանում էր: Կիաքսարի և Կիւրոսի թագաւորը, որի անունը սակայն նա չի յիշում: Հայոց թագաւորութիւնը նուաճել էր Կիաքսարի հայրը, Աթաշակը, նրա բերդերն երկար ժամանակ պաշարելով և նրան պարտաւորեցնելով իրեն զօրք և դրամ վճարել և այլևս ամբողջներ չշինել:

Սակայն յետոյ, երբ հայոց թագաւորը լսեց, որ Կիաքսարը զբաղուած է պատերազմով, իրեն բաւականաչափ զօրեղ զգալով, դադարեց զօրք և դրամ վճարելուց և նոր ամբողջներ էր շինում իր երկրում: Կիւրոսը, Կիաքսարի զօրավարը, այս լսելով, հարցնում է նրան. «Ասում էիր, թէ հայոց թագաւորն քեզ արհամարհեց, և այժմ լսելով թշնամու մեր վերայ գալը, ոչ զօրք է տալիս և ոչ էլ դրամ»: Կիաքսարը պատասխանում է. «Այդպէս է: Մնացել եմ տարակուսած, չգիտեմ հայոց դէմ պատերազմ գնամ, թէ աւելի լաւ է, առայժմ թողնեմ, մի գուցէ ուրիշ թշնամիների վերայ հայերին ևս աւելացնենք»:

— Եթէ ինձ զրկես բաւական հեծեալներով, ասաց Կիւրոսը, աստուածների օգնութեամբ ես այնպէս կ'անեմ, որ հայերը թէ զօրք և թէ դրամ տան, և յոյս ունիմ, որ մեզ հետ աւելի բարեկամ կը լինեն, քան թէ առաջ էին:

Կիաքսարն ուրախացաւ, որ Կիւրոսն ուզում էր այս գործն առանց պատերազմի կատարել, մանաւանդ զիտէր, որ Կիւրոսը ճանաչում էր հայոց թագաւորի որդուն, Տիգրանին, որն իր որսակիցն էր եղել մանկութեան ժամանակ: Կիւրոսը, նախ Արամազդին զոհ մատուցելով գործի յաջողութեան համար, հեծեալ և հետևակ զօրքերով և որսի շներով ուղևորւում է Հայաստան: Այստեղ նա անձ-

նատուր եղաւ որսի և որսում էր եղջերու, այծեամ, կինձ, ցիւռ, որոնցով այն կողմերը հարուստ էին:

Այդ ժամանակ հայոց թագաւորի անդրանիկ որդին, Տիգրանը, բացակայ էր: Երբ թագաւորը Կիւրոսի գալը լսեց, շփոթուեց: Իսկոյն Կիւրոսից պատգամաւորներ եկան և յայտնեցին, որ Կիւրոսը նրա դէմ եկել է և միայն խնդրում է, որ նա զօրք և արծաթ տայ, համաձայն դաշնադրութեան: Հայոց թագաւորը չհամաձայնուեց և իր կրտսեր որդուն, Շաւառակին (Սաբարիսին), կանանց, երեխաների և զանձների հետ ուղարկելով ամուր լեռները, ինքը շտապեց զօրք հաւաքել Կիւրոսին դիմագրելու: Սակայն շուտով անակնկալ դէպքեր են պատահում. Շաւառակը կանանց, երեխաների հետ Կիւրոսի Քրիւսանտոս զօրավարի ձեռքը գերի է ընկնում, որը նրա ճանապարհը կտրել էր, իսկ ինքը թագաւորը Կիւրոսից պաշարւում է է մի բլրի վերայ: Կիւրոսն առաջարկում է հայոց թագաւորին անձնատուր լինել, յայտնելով, որ իրենց երկուսի մէջ դատաւոր պիտի լինի նա, որին աստուածները կ'ուղարկեն: Թագաւորն իջնում է բլրից Կիւրոսի մօտ, որը շրջապատուած էր իր զօրքերով: Այդ ժամանակ ճանապարհորդութիւնից վերադառնում է հայոց թագաւորի անդրանիկ որդին, Տիգրանը, որը մի ժամանակ Կիւրոսի որսակիցն էր եղել: Նա տեսնելով իր հօր, մօր և կնոջ գերութիւնը, լացեց: Կիւրոսը դառնալով նրան ասում է. «Լաւ ժամանակ հասար, լսիր ուրեմն հօրդ դատը: Կիւրոսը պարսից, մարաց, հայոց մեծամեծների և գերուած կանանց ներկայութեամբ հարցնում է հայոց թագաւորին, թէ ինչո՞ւ նա մարերի հետ կապած դաշինքը խախտեց և պատերազմի պատրաստութիւն է տեսնում: «Դու խոստացար», ասաց նա, «իմ պապ Աթաշակին, նրան օգնական և նիզակից լինել զօրքով և արծաթով և ամբողջիւններ չշինել, սակայն դրա հակառակը գործեցիր»:—Այն, պա-

տասխանեց թագաւորը, որովհետեւ ես ազատութիւն ցանկացայ եւ լաւ եմ համարում որդիներիս ազատութիւն թողնելու:—Ազատութեան համար կռուելը լաւ բան է, ասաց Կիւրոսը. բայց ասա, եթէ քո դաշնակիցներէից մէկը դրժէ՞ր ուխտին եւ քո ձեռքն ընկնէր, դու նրա հետ ի՞նչ պէս կը վարուէիր:—Ճշմարիտն ասած, ես նրան իշխանութիւնից կը զրկէի, ինչոր ունէր նրանից կ'առնէի, եւ եթէ ընդդիմանար, կ'սպանէի»:

Երբ Տիգրանն այս լսեց, վերցրեց իր գլխից խոյրն եւ սրած ծածանուող մասերը դէն ձգեց, իսկ կանայք լաց էին լինում եւ ճշում, կարծելով, թէ թագաւորն եւ իրանք կուրած են: Կիւրոսը նրանց հրամայեց լռել եւ դառնալով թագաւորին ասաց. «Որովհետեւ քո կտրած դատաստանն այս է, հարցնում եմ քեզ, ի՞նչպէս մեզ արժան է քեզ հետ վարուել»: Թագաւորը լռեց, իսկ նրա որդին, Տիգրանը, միջամտելով ասաց. «Որովհետեւ դու արժանն ես հարցնում, ո՞վ Կիւրոս. ես խորհուրդ եմ տալիս քեզ ներելու հօրս, որը խղճալի է, որովհետեւ նա այդ արաւ իսէ՞ր ազատութեան... Ուստի եթէ կրկին թողնես դրան ազատութիւնը, չէ՞ որ դրան կը կնակի բարեկամ կը դարձնես քեզ»:

Կիւրոսը, որն իր մտքում ուրախանում էր, որ կատարուեց, ինչոր խոստացել էր Կիաքսարին, այն է հայերին կրկին, առաջուանից աւելի բարեկամացնել, ասաց. «Լաւ, կրկին հաստատենք մեր բարեկամութիւնը, բայց ի՞նչ օգնութիւն պիտի տաք մեզ զօրքով եւ արծաթով»: Հայոց թագաւորը պատասխանում է, որ ինքը 8,000 հեծեալ եւ 40,000 հետեակ զօրք եւ 3,000 տաղանդից աւել դրամ ունի, աւելացնելով, որ Կիւրոսը կարող է վերցնել, որքան կամենայ: Կիւրոսն առաջիկայ պատերազմի համար բաւականացաւ զօրքի կէսը վերցնելով: «Միւս կէսը», ասաց նա, «ձեզ հարկաւոր է կորդուները դէմ, որոնց հետ

շարունակ կռիւ մէջ էք»: Պահանջեց 100 տաղանդ արծաթ, 100 տաղանդ էլ խնդրեց իրեն փոխ տալ յետոյ վճարելու պայմանով:—Այդպէս մի խօսիր, ո՞վ Կիւրոս, ասաց թագաւորը, իմացիր, որ բոլորը քոնն է: Ապա Կիւրոսը կատակով հարցնում է թագաւորին, թէ նա իր կնոջ եւ զաւակների համար ի՞նչ կը տայ: Թագաւորը պատասխանում է, որ կը տայ, որքան կարող է: Ապա դառնալով Տիգրանին, հարցնում է. «Եւ դու, ո՞վ Տիգրան, ի՞նչ փրկանք կը տաս կնոջդ համար»: Տիգրանը, որը նոր էր մոռնացել եւ սաստիկ սիրում էր իր կնոջը, ասաց. «Եթէ հարկ լինի, իմ անձը կը տամ կնոջս ազատելու ազախնութիւնից»: Կիւրոսը պատասխանեց. «Դու, Տիգրան, վերցրո՞ւ կնոջդ, ես նրան գերի չեմ համարում. եւ քո, ո՞վ թագաւոր, վերցրո՞ւ կնոջդ եւ երեխաներիդ, նրանց համար ես փրկանք չեմ պահանջում»: Սրանից յետոյ ասում է նրանց. «Գնացէ՛ք ձեր տեղերը»: Թագաւորն եւ իր ընտանիքը հեռացան գեսպակներով:

Վերադարձին մէկը գովում էր Կիւրոսի իմաստութիւնը, միւսը ժուժկալութիւնը, երրորդը գեղեցկութիւնն եւ գեղեցիկ հասակը: Տիգրանը հարցրեց իր կնոջը. «Ի՞նչ էլ գեղեցիկ թուաց Կիւրոսը»:—Ես չնայեցի նրան, պատասխանեց նա:—Հապա ո՞ւմ նայեցիր, հարցրեց Տիգրանը:—Ես նայեցի նրան, ասաց առաքինի տիկինը, որն ասաց, թէ «իմ անձը կը տամ, եթէ հարկ լինի կնոջս ազախնութիւնից ազատելու»:

Միւս օրը հայոց թագաւորը Կիւրոսի զօրավարներին ընծաներ ուղարկեց եւ պատրաստեց խոստացած զօրքն եւ արծաթը: Տիգրանը, որը չէր կամենում Կիւրոսից բաժանուել, հայ զօրքի հրամանատարութիւնը յանձն առաւ: Երբ նա եւ Կիւրոսը շրջում էին Կորդուաց լեռներին մօտիկ, Կիւրոսը տեսնելով երկրի անմշակութիւնն եւ ամալութիւնը, հարցրեց դրա պատճառը: «Տեսնո՞ւմ ես այն

լեռները», ասաց Տիգրանը, «այնտեղ կորդուացիներն են բնակւում, որոնք ժամանակ առ ժամանակ իջնելով կորդուպոսում են մեր թշուառ գիւղացիներին: Այս պատճառաւ այն կողմերը թողնուած են ամայի»:

Կիւրոսը մտադրուեց հայոց և կորդուաց մէջ բերդ շինել և յանձնել մար կամ պարսիկ պահնորդներին, որոնք պէտք է թէ Հայաստանի վերայ հսկէին և թէ կորդուացիների աւագակութիւնների առաջն առնէին: Երբ հետեւեալ օրը Տիգրանն իր 4,000 հեծեալներով, 10,000 աղեղնաւորներով և 10,000 շերտաւորներով Կիւրոսի մօտ եկաւ, Կիւրոսն յայտնեց նրան իր խորհուրդը, որին հայերը հաւանեցան: Կիւրոսն և Տիգրանն այժմ յաջողութեամբ կորդուացիների վերայ, որոնք երկար չկարողացան դիմադրել և յաղթուեցին: Կիւրոսը բռնելով նրանց գլխաւորներէից ոմաց, համոզեց, որ թէ հայերին և թէ նրանց օգտակար է իրենց սահմանագլխի վերայ մար և պարսիկ բերդապահ զօրք ունենալ: Ապա դառնալով կորդուացիներին ասաց. «Դուք աղքատ էք և աւագակութեամբ էք ապրում, որովհետեւ մշակելի հող չունիք: Ահա հայոց դաշտերը բաց են ձեր առաջ, գնացէք և պարապեցէք մշակութեամբ: Իսկ դուք, հայեր, դրա փոխարէն ձեր հօտերն արածացրէք կորդուացիների արօտներում»: Այս լսելով, երկու կողմերն էլ գովեցին Կիւրոսին, միմեանց պատանդներ տուին և միմեանց հետ դաշինք կուեցին, որով պարտաւորուեցին վտանգի ժամանակ միմեանց օգնել, փոխադարձաբար վարելահողերից և արօտավայրերից օգտուել, միմեանց հետ ամուսնանալ: «Մինչև այժմ էլ կայ այն ուխտը, որն այն ժամանակ կուեց հայերի և կորդուացիների մէջ», ասում է Քսենոփոնը, որն իր այս պատմած դէպքերից մօտ 80 տարի յետոյ ապրեց և 401 թ. Հայաստանից անցաւ իբրեւ առաջնորդ 10,000 յոյն զօրքի:

Այս բոլորը Տիգրանը յայտնեց իր հօրը, որը հիւս-

ներ և որմնադիրներ ուղարկեց և շինել տուեց ծրագրած բերդը:

Մի քանի օրից յետոյ Կիւրոսը Տիգրանի և հայ զօրքերի հետ հեռացաւ Հայաստանից: Նրանց ճանապարհ դրին հայոց թագաւորը, թագուհին, իրենց զուտորները, Շաւարշ արքայորդին արքայազուն օրիորդներն և հայ մեծամեծները: Տիգրանը մնաց Կիւրոսի մօտ և նրա բոլոր պատերազմների ժամանակ նրա նիզակակիցն էր: Նա մասնակցեց նաև Բաբելոնի առմանն իբրեւ հրամանատար հայ հեծելազնդի (իսկ հայ հետևակ զօրքի հրամանատարն էր Եմբաս ոմն): Դրանից առաջ հայերն իբրեւ դաշնակից Կիւրոսի Լիւդիայի թագաւորութեան նուաճմանն ևս մասնակցել էին: Անկախ յոյն մատենագիրներից Հին Կտակարանն ևս յիշում է, որ հայերը Կիւրոսի հետ մասնակցել են Բաբելոնի առմանը:

Արդ, Տիգրան, Շաւասպ անուանները զուտ արիական են և ոչ մի կապ չունեն խալդերի Մենուանների և Իսպուրինիսների հետ: Եւ այս պատմութիւնից, որքան և նրա մանրամասնութիւնները վիպային և հակապատմական համարուին, պարզ տեսնում ենք, որ ըստ յոյն պատմագրի, որը ժամանակով հեռու չէր իր պատմած դէպքերից, հայ արիական ցեղը Քրիստոսից մօտ 600 տարի առաջ արդէն հաստատուած էր Հայաստանում և ունէր իր թագաւորութիւնը 8,000 հեծեալ, 40,000 հետևակ զօրքով և հարուստ գանձերով:

Հայաստանն եւ հա- Կիւրոսի յաջորդներից ամենաերևելա-
յեր Կիւրոսի յաջորդ- լին Դարեհ Վշտասպն էր (521—485),
նրի ժամանակ: որը Կիւրոսի հիմնած պետութեան
սահմաններն աւելի ևս ընդարձակեց, այնպէս որ Դարեհ-
հի ժամանակ պարսից մեծ պետութեան սահման-
ները հասնում էին Ասիայում մինչև Հնդկաստանի Ին-

դոս գետը, իսկ Եւրոպայում մինչև Թրակիայի հիւսիսա-
յին սահմանները. հիւսիսում—մինչև Սև ծովը, Կովկա-
սեան լեռնաշղթան, Կասպից և Արաբեան ծովերն և Յաբ-
սարէս գետը (Սըր-Դարիա): Այսպիսի լայնածաւալ պե-
տութիւն մինչև այդ ժամանակ արեւելքը տեսած չէր:
Կիւրոսի հիմնած այս պետութիւնն 200 տարուց աւել գո-
յութիւն ունեցաւ և կործանուեց Ալէքսանդր Մակեդոնա-
ցու ձեռքով 330 թ. Ք. ա.:

Սակայն Դարեհ Վշտասպը յայտնի է ոչ միայն իբրև
նուաճող, այլև իբրև կազմակերպիչ պարսկական պետու-
թեան: Պարսիկներից առաջ եգիպտոսի և Ասորեստանի
թագաւորներն իրենց հպատակ ազգերին միայն ճնշել,
հարստահարել և գերել էին: Պարսիկ միապետներն աւելի
իմասուն քաղաքականութեան հետեւեցին և հպատակ ազ-
գերին թողնելով իրենց հողի վերայ, թոյլ տուին նրանց,
որ կառավարուեն ինքնօրէն, իրենց ցեղական իշխաննե-
րով: Դարեհը ձգտելով իր իշխանութիւնն ամրապնդել
գաւառներում, պետութեան մէջ գանուղ բոլոր փոքրիկ
թագաւորութիւններն և իշխանութիւնները նահանգների
կամ սատրապութիւնների վերածեց որոնցից ամէն մէկի
վերայ նշանակեց կամ հաստատեց մի նահանգապետ կամ
սատրապ: Սատրապի պարտականութիւնն էր հարկերը
հաւաքել, զինուորներ վերցնել և հսկել, որպէսզի մեծ
թագաւորի հպատակները նրան հաւատարիմ մնան: Այլև
սատրապը հսկում էր, որ երկրում կեանքի և գոյքի ա-
պահովութիւն տիրէ, աւազակութիւն չլինի. աշխատում
էր երկիրը մշակել տալ, երկրում անտառներ էր տնկել
տալիս և այլն: Իւրաքանչիւր սատրապի մօտ գտնւում
էր թագաւորի ներկայացուցիչը, որը նրան հաղորդում էր
թագաւորի հրամաններն և հսկում էր, որ սատրապը
չ'ապստամբուի: Բացի զրանից թագաւորն երբեմն սատ-
րապութիւնները քննիչներ էր ուղարկում, որոնք կոչւում

էին «Թագաւորի աչքերն և ականջները»: Նրանք քննում
էին սատրապների գործերն և իրաւունք ունէին սրանց
նոյնիսկ պաշտօնանկ անելու: Դարեհը իր Շօշ մայրաքա-
ղաքի և սատրապութիւնների մէջ պօստային հաղորդակ-
ցութիւն հաստատեց և երկրում կանոնաւոր հարկեր
սահմանեց, որոնցից ազատ մնաց միայն պարսիկների
բնագաւառը: Միւս սատրապութիւնները պարտաւոր էին
արքունիքին հարկ վճարել, մատակարարել նրան հաց,
մսացու, ձիաներ և այլն:

Հայերի ա- Դարեհի կենտրոնացման այս ձգտումը նրա
պստամբու- թագաւորութեան առաջին տարիները մի քանի
րիւնր: երկիրներում ապստամբութիւններ առաջացրեց:
520 թ. նրա դէմ ապստամբուեց Հայաստանը, կամ ինչպէս
ինքն է ասում, Արմնիքը, ցանկանալով անկախութիւն ձեռք
բերել: Այս ապստամբութեան պատմութիւնը Դարեհը Պի-
սիդոն ժայռի վերայ (Բաղդադից Համադան տանող ճա-
նապարհի վերայ) թողած իր արձանագրութեան մէջ ման-
րամասնօրէն պատմում է: Նա հինգ անգամ զօրք է ղըր-
կում հայոց դէմ երկու զօրավարների առաջնորդութեամբ,
որոնցից մինը հայ էր Դատարսէս անունով: Դարեհը
պատմում է. «Յետոյ ուղարկեցի Հայաստան իմ ծառայ
Դատարսիսին և ասացի. «Գնա, կոտորիր այն ապստամբ
ժողովրդին, որն ինձ չի հնազանդւում»: Դատարսէսը
գնաց Հայաստանը նուաճելու: Ապստամբները կուեցան
նրա հետ: Արամազդը շնորհեց ինձ իր օգնութիւնը. իմ
զօրքերը սպանեցին շատերին թշնամու բանակից: Ապս-
տամբներն երկրորդ անգամ յարձակուեցին Դատարսիսի
վերայ: Արամազդը շնորհեց ինձ իր օգնութիւնն և իմ զօրքը
ջարդեց ապստամբների բանակը: Ապստամբներն երրորդ
անգամ յարձակուեցին Դատարսիսի վերայ: Արամազդը
շնորհեց ինձ իր օգնութիւնը և իմ զօրքերը դարձեալ
սպանեցին շատերին թշնամու զօրքից: Դրանից յետոյ

Դատարսէսն ինձ սպասեց, մինչև որ գնացի Մարաստան»:

Ձէ երևում, որ վերոյիշեալ երեք պատերազմներում Դարենի զօրքը վերջնականապէս յաղթած լինէր հայերին: Ընդհակառակը, ինչպէս երևում է, հայերը կարողացան Դատարսիսին հալածել իրենց սահմաններից, որն սպասում էր Դարենի հրամանին: Իսկ Դարենն էլ այդ ժամանակ նեղ դրութեան մէջ էր գտնւում, որովհետև մաւրաց ապստամբութիւնը տակաւին չէր զսպուած:

Դարենը հարկադրուած էր երկրորդ արշաւանք սկսել հայերի վերայ Ոմիսէս զօրավարի առաջնորդութեամբ: «Ոմիսէսը», ասում է արձանագրութիւնը, «իմ ծառաներից էր: Նրան ուղարկեցի Հայաստան և ասացի. «Գնա, ջնջիր այն ապստամբ զօրքը, որն ինձ չէ հնազանդւում: Յետոյ Ոմիսէսը գնաց նուաճելու հայերին: Ապստամբներն ելան Ոմիսիսի դէմ պատերազմ տալու: Ասորեստանում եղաւ կռիւր: Արամազդը շնորհեց ինձ իր օգնութիւնը. իմ զօրքերը սպանեցին ապստամբների զօրքերից շատերին: Երկրորդ անգամ թշնամիները գնացին Ոմիսիսի վերայ ճակատ տալու: Հայաստանում մի տեղ կայ Անտիգարա անունով. այնտեղ եղաւ կռիւր: Արամազդը շնորհեց ինձ իր օգնութիւնը. իմ զօրքերը սպանեցին թշնամիներից շատերին: Յետոյ Ոմիսէսն սպասեց ինձ Հայաստանում մինչև իմ Մարաստան գնալը»:

Այնուհետև արձանագրութիւնը լռում է, որից եզրակացնում են, որ Հայաստանն ընկճուեց և դարձաւ պարսկական սատրապութիւն:

Հայաստանն իբրև Այսպէս Դարեն Վշտասպի ձեռքով Հաբեւ պարսկական յաստանը, որը Կիւրոսի ժամանակ թագաւորացւորիւ: Լորութիւն էր կազմում, դարձաւ սատրապութիւն, որը ճանաչում էր պարսից մեծ թագաւորի գերիշխանութիւնը, նրան հարկ էր վճարում և օգնական

զօրք էր տալիս: Հերոդոտ յոյն պատմագիրը, որը ժամանակակից էր Դարեն Վշտասպին, պատմում է, որ Հայաստանը բաժանուած էր 2 սատրապութիւնների: Դրանք պարսից պետութեան ժԳ. և ժԸ. սատրապութիւններն էին: ժԳ. սատրապութիւնը հասնում էր մինչև Սև ծովի սահմանները և այս սատրապութեան բնակիչներն էին հայերն (արմէնները) և պակտիներն իրենց հարեան ազգերով. իսկ ժԸ. սատրապութեան բնակիչներն էին ալարոդները, սասպէյրներն (սպերացիներն) և մատիէնները: Նոյն պատմագիրը պատմում է, որ Դարեն Վշտասպն իր երկիրները 20 հարկային շրջանների էր բաժանել: ԺԱ. հարկային շրջանում յիշւում են հայերն ևս, որոնք նոյն շրջանի միւս ազգերի հետ միասին պարսից արքունիքին տարեկան 400 տաղանդ հարկ էին վճարում: Նոյնպէս և Դարեն և Քսերքսէս թագաւորների արձանագրութիւնների մէջ, որոնք մնացել են Պերսեպոլիս մայրաքաղաքի աւերակներում, հայերը կոչւում են Արմին, բնակւում էին Եփրատ գետի այն (ձախ) կողմում, զրադաշտատական կրօնին էին պատկանում և հարկ էին վճարում պարսից թագաւորին: Քսերքսէս թագաւորի զօրաբանակում, որը 483 թ. արշաւեց յոյների վերայ, ըստ Հերոդոտի կար նաև հայագունդ զօրք, միացած փոխգացիների հետ մի դրօշակի տակ: «Հայերը, ասում է պատմագիրը, զինուած էին փոխգացիների պէս... Երկուսին էլ զօրավար էր նշանակուած Արտաքսէսը, որն ամուսնացած էր Դարեն (Վշտասպ)ի դստեր հետ»: Իսկ ալարոդներն և սասպէյրները (սպերացիները) ուրիշ դրօշակի տակ էին միացած: Երբ Կիւրոս Կրտսերը 401 թ. իր եղբօր, Արտաշէս պարսից թագաւորի դէմ ապստամբուեց, հայերը հաւատարիմ մնացին վերջինիս: Ստրաբոն յոյն աշխարհագիրը պատմում է, որ Հայաստանի սատրապը պարսից թագաւորին տարեկան 20,000 ձի էր ուղարկում Միհր

աստծու տօնի համար: Եւ այսպէս Հայաստանն իբրեւ սատրապութիւն մնաց պարսից զերիշխանութեան տակ մինչեւ Ալէքսանդր Մակեդոնացու արշաւանքը, որը վերջ դրեց 330 թ. պարսից մեծ պետութեանը: Այս արշաւանքի ժամանակ եւ յիշուած են հայերն իբրեւ գաղնակիցներ պարսից վերջին, Դարեհ Կողումանոս թագաւորի, որին 40,000 հետեակ եւ 7,000 հեծեալ զօրք էին տուել: Հայաստանում տարածուեց պարսիկ լեզուն, այնպէս որ 401 թ. Ք. ա. նրա վերայով անցնող յոյները նոյնիսկ հայ ջրկիր կանանց հետ կարողացան պարսիկ թարգմանի միջոցաւ խօսել:

Հայաստանի սատրապութիւններն իշխուեց, երկու սատրապութիւնների. նրա եւ սատրապներ: հիւսիս արեւելեան եւ հարաւ արեւմտեան մասերն ունէին իրենց առանձին սատրապները: Բոլոր սատրապների անունները մենք ի հարկէ չգիտենք: Քսենոփոն յոյն պատմագիրը, որը իր 10,000 յոյն զօրքով 401 թ. Ք. ա. Հայաստանի վերայով անցաւ դէպի Սև ծովի ափերը, պատմում է, որ այն ժամանակ հիւսիս արեւելեան Հայաստանի սատրապն էր Ուրոնդասը, որը պարսից Արտաշէս թագաւորի փեսան էր: Իսկ հարաւ արեւմտեան Հայաստանի սատրապն էր Տերիբազը, այն եօթ նախարարներից մէկի ցեղից, որոնք Դարեհ Վշտապին գահ էին բարձրացրել: Սատրապներն արքայազայել կեանք էին վարում: Այսպէս Քսենոփոնը վերեւ յիշուած Տերիբազի մասին պատմում է, որ նա ունէր արծաթեայ ոտքերով գահոյք, արծաթեայ բաժակներ եւ իր սեպհական տնտեսութիւնը՝ առանձին հացարարներ եւ տակառապետներ (գինի մատակարարողներ):

Սակայն Հայաստանի լեռնային նահանգները պարսից մեծ թագաւորի զերիշխանութիւնը չէին ճանաչում: Այսպէս նոյն Քսենոփոնը պատմում է, որ թէպէտ Խաղտեաց,

Տայոց, Բասեան գաւառների եւ Կորդուաց երկրի բնակիչները իբրեւ զինուորներ պարսիկներից վարձուած էին, սակայն իրենց երկիրներում բոլորովին անկախ էին, եւ երբ պարսիկ զօրքերն նրանց երկիրներն էին խուժում, նրանք իրենց կանանցով եւ երեխաներով ամբանում էին իրենց լեռներում եւ այդ լեռներից պարսիկների գլխին քար ու գիլ թափելով, չէին թոյլ տալիս մտնելու իրենց երկրի ներսը: Սրանք զինուած էին առանձին տեսակի երկաթեայ ծանր գէնքերով, ունէին գլխանոց, վահան, նետ եւ աղեղ:

Հայաստանի ժողովուրդների կեանքը նահապետական էր. երկրում չկային քաղաքներ, այլ գիւղեր եւ աւաններ, որոնք ունէին իրենց գիւղապետներն եւ աւանապետները:

Սատրապական Սրգէն յիշուեց, որ Քսենոփոն յոյն Հայաստանի ցնցեպատմագիրը 401 թ. իր 10,000 զօրքով սակաւ վիճակը: անցաւ Հայաստանով: Սա իր Անաբազիս կոչուած զօրծի մէջ տալիս է այն ժամանակուայ Հայաստանի տնտեսական կեանքի ընդարձակ նկարագիրը: Սրանից մենք տեղեկանում ենք, որ սատրապական Հայաստանի ժողովուրդները պարապում էին անասնապահութեամբ, ձիաբուծութեամբ, երկրագործութեամբ եւ գինեգործութեամբ: Սակայն դեռ դրանից շատ առաջ Հայաստանի ժողովուրդները հարեան եւ հեռաւոր բազմաթիւ ազգերի հետ առուստուրով եւ պարապում էին, ինչպէս Հերոդոտն է պատմում իր ժամանակի համար:

Քսենոփոնը նկարագրում է հայ գիւղն իր տներով եւ տնտեսութիւնով: Գիւղերում կային գետնափոր ընդարձակ գոմեր, որոնք ունէին առանձին բաժանմունքներ մարդկանց եւ անասունների համար: Մարդկանց մասի դուռն առանձին էր, նման ջրհորի բերանի, ունէր սանդուխտ եւ իջի համար, իսկ անասունների մասին՝ առանձին: Գո-

մերն ընդարձակ էին և նրանց մէջ գտնուում էին եղ, կով, հորթ, ոչխար, գառ, այծ, ուլ, խոզ, հաւ: Անասուններին կերակրում էին դալար խոտով: Նոյն գոմերում կային համբարանոցներ, որոնք լիքն էին ցորենով, գարով և ուրիշ զանազան արմատիքներով: Մարդկանց բաժանմունքում ամանուած էր մի տեսակ խմելիք, որը պատրաստուում էր գարուց և խիստ շմեցուցիչ էր: Մարդիկ այս խմիչքը ծծում էին եղեգնեայ փողերով, որոնք զրուած էին ամանի մօտ: Սակայն շատ աներում յոյները հին, հոտաւէտ գինի ևս գտան, ինչպէս և զանազան տեսակ իւղեր, օր. խոզի ճարպ, քնջութ, դառն նշից և բեկնուց մզած իւղեր, նաև անուշահոտ իւղեր օծուելու համար: 401 թ. Հայաստանի վերայով հայրենիք վերադարձող յոյները Հայաստանում տեսան ամէն տեղ լիութիւն և առատութիւն. երկրագործ և անասնապահ հայի սեղանը ծածկուած էր գառան, ուլի, հորթի, խոզի, հաւի մսով, ցորենի ու գարու հացով և զինով:


Նշանաւոր էր այս ժամանակ Հայաստանում և ձիաբուծութիւնը, որը զարգացած էր Բարձր Հայքում: Այստեղի սատրապը պարսից թագաւորին տարեկան 20,000 ձի էր տալիս, որոնք մարաց և պարսից ձիաներից աւելի ընտիր էին: Գուցէ այս պատճառով էլ արեւմտեան Հայաստանի սատրապը բացառիկ իրաւունք ունէր պարսից թագաւորին ձի հեծցնելու: Եղեկիէլ մարգարէն, որը Քրիստոսից մօտ 600 տարի առաջ էր ապրում, Տիւրոսի վերայ յօրինած ողբում ասում է. «Եւ ի տանէ Թորգոմայ ձիովք և ջորւովք լցին զվաճառս քո», որով ցոյց է տրւում, թէ ինչ յարգ ունէին Հայաստանի ձիաներն և ջորիները Տիւրոսի համաշխարհային շուկայում:

Վանառակա- Բսենոփոնը պատմում է, որ երբ Կիւ-
նուքիւնը: րոս պարսից թագաւորն ուղղում էր հնդկաց
թագաւորին պատգամաւոր ուղարկել, զիմեց հայերին,

որպէսզի նրանք ուղեկցեն իր պատգամաւորին և Հնդկաստան տանող ճանապարհը ցոյց տան — մի հանգամանք, որ ցոյց է տալիս հայերի ծանօթութիւնը Հնդկաստանի հետ, ի հարկէ շնորհիւ առուտրի: Եւ իրաւ, Հայաստանը, ուր երկրագործութիւնը, գինեգործութիւնը, անասնապահութիւնը և ձիաբուծութիւնը ծաղկած էր, սատրապների ժամանակ և սատրապներից առաջ մեծ առուտուր ունէր իր շրջակայ ազգերի հետ: Այս առուտուրը կատարւում էր թէ ցամաքային և թէ գետային ճանապարհներով՝ Եփրատ, Տիգրիս և Երասխ գետերով: Վերջինս միանալով Կուր գետի հետ, թափւում էր Կասպից ծովը: Այն ժամանակները Ոքսոս գետը (այժմեան Ամու-Դարիան), որն այժմ թափւում է Արալեան լիճը, կապակցութիւն ունէր Կասպից ծովի հետ: Եւ, ինչպէս երևում է, հայ առևտրականներն իրենց ապրանքները Երասխ գետով տեղափոխում էին Կասպից ծովը, այստեղից էլ Ոքսոս գետով, որը, ինչպէս յիշուեց, կապակցութիւն ունէր Կասպից ծովի հետ, տեղափոխում էին Միջին Ասիա, մինչև Բակտրիայի և Հնդկաստանի սահմանները:

Իսկ Հերոդոտ պատմագիրը նկարագրում է, թէ ինչպէս հայերը առուտուր էին անում Բաբելոնի հետ: Այդ առուտուրը կատարւում էր նաւերով, Եփրատ գետով: Այս նաւերը հայերը շինում էին ծառերից, տակից մաշկով պատելով: «Նրանց նաւերը», ասում է Հերոդոտը, «որոնք գնում են այն գետով (այսինքն Եփրատով) Բաբելոն, միանգամայն կտր և մաշկից են, որ Ասորեստանից վերե բնակուող հայ հովիւները շինում են կտրած ծառերից և պատում են մորթերով: Նաւի ոչ յետին կողմն է յայտնի և ոչ էլ առաջին կողմը սուր, այլ նա վահանի նման կտր է: Այս նաւերից և՛ մեծերը, և՛ փոքրերը կան: Ամենամեծերը 1,000 տաղանդ բեռ են տանում: Նրանցից իւրաքանչիւրն ունի իր մէջ մի էշ, իսկ մեծերն աւելի ևս:

Երբ նաւավարները Բաբելոն են հասնում, բեռը թափում են, բոլոր փայտն ու յարգը ծախում են, իսկ մորթերը բարձելով իշաներին, տանում են հայոց աշխարհի կողմերը: Որովհետեւ չէ կարելի գետնի վեր նաւարկել նրա ուժ-գնութեան պատճառով, ուստի և նաւերը շինում են ոչ թէ փայտից, այլ մորթերից»:




Ասորեստանի սկանաւ
(Lehmann-Haupt, Armenien B. I, S. 340).

Հայերի մորթանաւը, որի նկարագիրը մեզ թողել է Հերոդոտը, մեզ յիշեցնում է ասորեստանցիների երևելի տկանաւը, որի պատկերը յաճախ կարելի էր տեսնել Ասորեստանի թագաւորների ապարանքների պատերի վերայ և որի նկարը մենք վերստին գրինք: Այս պատկերի վերայ մենք տեսնում ենք փշած տկեր, որոնց վերայ դրած են տախտակներ, իսկ սրանց վերայ դրած է բեռը: Տկանաւի առջևի կողմը նստած է թիավարը, իսկ յետևի կողմից տեսնում ենք մի լուղորդի, որը պառկած փշած տկի վրայ, ձեռքը մեկնել է դէպի տկանաւը: Տկանաւի շուրջը նկարուած են ձկներ: Այդ ձուկն այսօր ևս Տիգրիսի սովորական ձուկն է և կոչւում է շաքօ:

Տասնեակ դարերից յետոյ այսօր ևս Տիգրիս գետի վերայ բանում է նոյն տկանաւը, որը Լեման-Հաուպտ

գերմանացի գիտնականը տեսել և նկարագրել է իր «Հաստատանն առաջ և հիմա» յայտնի գործում:

«Արևմտեան Տիգրիսը», ասում է Լեման-Հաուպտը, «Դիարբէքիւրից սկսած նաւարկելի է: Երբեք առաւօտեան կանուխ դուրս եկայ, տեսայ պարկերով ծանր բարձուած երկու մեծ տկանաւեր, որոնք գտնւում էին մի ժայռի յետեւում, որը նրանք վարպետօրէն անցել էին, թիավարուելով



Տկանաւի շինութիւնն այժմ
(Lehmann Haupt, Arm. B. I, S. 341).

մեծ թիակներով, սահելով միացեալ Տիգրիսի վերայով արևմտքից դէպի արևելք: Ես սքանչացայ, տեսնելով վաղեմի անցեալը վերակենդանացած. ճիշտ այնպէս, ինչպէս ես այժմ իմ առաջ տեսնում էի, տկանաւերի ուղուցիկ նկարները Ասորեստանի թագաւորների ապարանքները զարդարում էին... Տկանաւի շինութիւնն և կազմն աւելի պարզ ցոյց է տալիս մեր ընդօրինակած նկարը, քան այդ կարող էր անել մի ընդարձակ նկարագրութիւն: Պատիկ

տկանաւեր շինելիս փշած տկերն յարմարեցնում են ու-
ռենիների ոստերից և կամ ուրիշ ճկուն նիւթերից կազ-
մած կմախքի տակ, դրա վերայ դարսում են մի շարք
տախտակներ, իսկ նրանց վերայ փռում են ծղօտ, եղէգն
և կամ մամուռ, որից յետոյ տկանաւը պատրաստ է լի-
նում իր վերայ ընդունելու մարդկանց և բեռներ: Նրանց
մեծութիւնն և ամրութիւնը տարբեր է լինում, նայելով
տկերի թւին. աւելի երկար ճանապարհորդութեան և տւե-
լի շատ ապրանքներ փոխադրելու համար կարելի է 300
և աւելի տկեր միացնել»:

Նոյն գիտնական ճանապարհորդը տեսել է, թէ ինչ-
պէս մի անհատ, պառկած մի փշած տկի վերայ, գետի
մի կողմից միւսն էր անցնում: Ամմիանոս հռոմայեցի
պատմագիրը պատմում է, թէ ինչպէս Պապ հայոց թա-
գաւորը 374 թւին Ք. յ. Տարսոնում իր դէմ կազմած
դաւադրութիւնից փախուստ տալով, իր հետևորդների հետ
տկանաւերով անցաւ եփրատ գետից: Ահա թէ որքան ա-
ւանդապահ է արևելքը: Սակայն այսօր ևս արևմտցի գիտնա-
կան ճանապարհորդը պնդում է, որ տկանաւը լեռնա-
յին գետերի համար շատ յարմար փոխադրութեան միջոց
է և ապագայ ունի:

Քսենոփոնի և 10,000 երբ 401 թ. Կիւրոս Կրտսերը
յոյների նահանգը Հա- Կունաքսայի մօտ իր եղբորից, Արտա-
լասանի վերայով: շէս պարսից թագաւորից յաղթուեց
և սպանուեց, Քսենոփոն յոյն պատմագիրը 10,000 յոյն
զօրքով, որը Կիւրոսին օգնութեան էր գնացել, վճռեց
Հայաստանի վերայով վերադառնալ Սև ծովի ափերն, այս-
տեղից էլ Յունաստան: Յոյները պարսիկներից մեծամեծ
նեղութիւններ և հալածանքներ կրելուց յետոյ հասան
Կորդուաց երկիրը, ունենալով իրենց հետ առաջնորդներ
և պարսիկ թարգմաններ: Կորդուացիները թշնամաբար
վերաբերուեցան յոյներին: Նրանք զինուած էին աղեղնե-

րով և խիստ երկար նետեր ունէին: Համաձայն իրենց սո-
վորութեան իրենց կանանցով և երեխաներով քաշուեցան և
ամրացան լեռներում, որտեղից անցնող յոյների վերայ
քար ու գիլ էին թափում և նետեր էին արձակում, որով
և նրանցից բաւականաչափ մարդ սպանեցին: Խրատուած
այս դառը փորձերից, յոյներն իրենցից առաջ զինուոր-
ներ էին ուղարկում և բռնել էին տալիս ճանապարհի
բարձրութիւնները: Այսպիսով յոյն զօրքը ապահով կեր-
պով մտնում էր կորդուացիների գիւղերը, ուր գտնում
էր առատ պաշար: Մանաւանդ զինին շատ առատ էր,
ամանուած գետնափոր և ծեփածոյ հորերում (երևի կա-
րասներում): Եօթն օր ճանապարհորդելով Կորդուաց երկ-
րում և կրելով մեծ դժուարութիւններ, եկան հասան ա-
րևելեան Տիգրիսի ափը, որը բաժանում էր Կորդուաց եր-
կիրը հայոց երկրից, մօտիկ այնտեղից, ուր նա խառ-
նում է իր արևմտեան ճիւղի հետ, ուր և հանգիստ ա-
ռան: Միւս առաւօտը նրանք գետի միւս կողմում տեսան
զինուած հեծելազօրք, իսկ նրանից դէպի վերև հետևակ
զօրք հայերից և խաղախներից, որոնք, ինչպէս երևում
էր, ուզում էին յոյներին թոյլ չտալ գետի միւս կողմն
անցնելու: Յոյները թշնամիներին խաբելով, անցան ծան-
ծաղուտից գետի միւս կողմը: Թշնամիները, որոնք արե-
ւելեան Հայաստանի Որոնտաս սաւորապի վարձկան զօր-
քերն էին, փախուստ տուին: Որովհետև հայերի և կոր-
դուների մէջ յաճախ պատերազմներ էին լինում, հայոց
գիւղերը մօտ 5 փարսախ հեռու էին գետից: Առաջին
գիւղը, որին յոյները հանդիպեցին, մեծ էր և պաշարով
հարուստ: Այս արևմտեան Հայաստանն էր, որի սատրապն
էր Տերիբազը: Նա ունէր այդտեղ պալատ, իսկ գիւղի
աներից շատերն էլ աշտարակներ ունէին: Տերիբազը
լսելով յոյների գալուստը, իր մի քանի սպաներով մօտեցաւ
նրանց և յայտնեց, որ ուզում է նրանց հետ խօսել: Նա

Թարգմանի միջոցով յայտնեց, որ յոյները բաւականա-
նան պաշար վերցնելով, սակայն չայրեն հայ գիւղերը և
չփնասեն գիւղացիներին: Յոյները համաձայնութեցին և այս-
պէս դաշինք կուեց: Յոյները անցան մօտ 15 փարսախ
տարածութիւն դէպի հիւսիս արևմուտք, ամեն տեղ զըտ-
նում էին պաշարներով լիքը գիւղեր, տեղ-տեղ նաև պա-
լատներ: Այս կողմերը նրանք գտան ցորեն, հին և հոտա-
ւէտ գինի, չամիչ, տեսակ-տեսակ ընդեղէն, տեսակ-տե-
սակ իւղեր, օր. հալած խոզի ճարպ, քնշութ, դառն նշից
և բեկնուց մզած իւղեր, տնկերից հանած ոգի (սալիրտ) ևլն:

Մինչդեռ յոյները պատրաստուած էին առաջ երթալու,
Տերիբագի բանակից մի պարսիկ եկաւ և պատմեց նրանց,
որ Տերիբագն ուղղում էր նրանց վերայ յարձակուել այն
լեռան կրճում, որից նրանք պիտի անցնէին: Յիրաւի Տե-
րիբագի զօրքը փորձեց յոյների անցքը խափանելու, սա-
կայն չկարողացաւ նրանց յարձակմանը դիմանալ և փա-
խաւ: Տերիբագի վրանը, արծաթէ գահոյքը, բաժակները,
հացարարները, մատուցակները և մօտ 20 ձիաներ ընկան
յոյների ձեռքը: Յոյները վերջապէս հասան արևմտեան Եփ-
րատին և անցան այս գետը նրա ակունքների մօտ, հանդի-
պելով ջերմուկների (ուրեմն ալժմեան կարնի մօտ): Այս-
տեղից յոյներն արդէն դժուարութեամբ էին կարողանում
առաջանալ, որովհետև ձիւնը շատ էր: Քիրիսոփոս յառա-
ջապահ գնդի զօրավարը երեկոյեան դէմ հասաւ մի գիւղ,
տեսաւ կանանց և աղջիկների, որոնք մօտիկ աղբիւրից ջուր
էին տանում: Կանայք յոյներին հարցրին, թէ նրանք ո՞վ-
քեր են: Պարսիկ Թարգմանը, երևի չկամենալով նրանց
մէջ կասկած յարուցանել, պարսկերէն պատասխանեց, որ
Թագաւորից սատրապի մօտ զրկուած զօրքեր են:—Սատ-
րապն այստեղ չէ, այլ այստեղից մի փարսախ հեռու
է, ասացին կանայք: Քիրիսոփոս ջրկիր հայ կանանց հետ
մտնելով գիւղ, գնաց գիւղապետի մօտ, իսկ իր զօրքն

էլ բանակեց այն գիւղում: Իսկ Քսենոփոնը, որը վերջապահ
զօրքի հրամանատարն էր, մի ուրիշ աւան էր եկել, որը
մօտ 20 տապարէզ հեռու էր Քիրիսոփոսի գիւղից: Այս
իրիկունը Քսենոփոնը ընթրեց աւանապետի և նրա զստեր
հետ, որը ըննօրեայ հարսն էր և որի էրիկը գնացել էր
նապաստակներ որսալու: Ահա Քսենոփոնը այս գիւղում
տեսաւ այն ժամանակուայ հայի տունը, որի նկարագիրը
մենք վերև առաջ բերինք (եր. 47—48):

Միւս առաւօտը Քսենոփոնը վարձ խոստացաւ աւա-
նապետին, եթէ նա կ'առաջնորդէր յոյներին մինչև սահ-
մանագլուխը: Ագնիւ աւանապետը վարձից հրաժարուեց և
միայն խնդրեց հայ գերիներին արձակել: Քսենոփոնը ա-
ւանապետի հետ ճանապարհ ընկաւ Քիրիսոփոսին գտնե-
լու: Նրանք որ գիւղն էլ հասնում էին, գտնում էին յոյն զի-
նուորդներին խրախուժեան մէջ, նրանց սեղանների վերայ
գառան, ուլի, խոզի, հորթի և հաւի միս, ցորենի և գա-
րու առատ հաց: Երբ Քիրիսոփոսի գիւղը հասան, նրան
և նրա ընկերներին ևս խրախուժեան մէջ գտան, որոնց
ծառայում էին հայ պատանիներ: Քսենոփոնն և Քիրիսո-
փոսը պարսիկ Թարգմանի միջոցով հարցրին աւանապետին,
թէ այն ի՞նչ երկիր էր և նրանից պատասխան ստացան, թէ
Հայաստանն է: Նոյնպէս հարցրին, թէ ում համար էին
բուծում այնքան ձի: Պատասխանեցին, թէ Թագաւորի
համար, իբրև հարկ: Քսենոփոնը գնեց մինն այն ձիանե-
րից, որոնք արեգակին էին նուիրուած և յանձնեց աւա-
նապետին զոհելու: Յոյները վերցրին իրենց հետ աւանա-
պետին և նրա որդուն իբրև ուղեցոյցներ մինչև սահմա-
նագլուխ: Քիրիսոփոսը ճանապարհին կասկածելով աւանա-
պետի հաւատարմութեան վերայ, իբր թէ նա դիտամբ է
նրանց ամայի տեղերով առաջնորդում (որովհետև Յօթե-
ւան գնացին առանց մի գիւղի հանդիպելու), հրամայեց
ծերունուն ծեծել: Ծերունին վրէժխնդիր եղաւ և գիշե-

ըր փախաւ: Քսենոփոնը չհաւանեց Քիրիսոփոսի տմար-
գի վարմունքին և նրան յանդիմանեց:

Աւանապետի որդին մնաց մի յոյն զօրականի մօտ,
նրա հետ գնաց Մակեդոնիա և նրան շատ հաւատարիմ և
սիրելի եղաւ:

Ահա այն բոլորը, ինչոր մենք գիտենք սատրապական
Հայաստանի մասին: Քսենոփոնի նկարագրած գիւղական
գոմն ու օդան այժմ ևս դեռ գոյութիւն ունին Հայաստա-
նում, իսկ նրա նկարագրած առատութիւնն այսօր բացա-
կայում է: Կանանց և աղջիկների աղբիւրից ջուր բերելու
սովորութիւնն այսօր ևս գոյութիւն ունի հայ գիւղերում,
սակայն այն ժամանակուայ կինը ազատ էր, անցուորի հետ
ազատ խօսում և ընթրիքի նստելով սեղանակցում էր,
իսկ հիմա նրա երեսը ծածկուած է շնչկալով ու զնչկա-
լով: Ահա այն «պռոգրէսը», որ հայ գիւղն արել է 2,300
տարուայ ընթացքում:

ԳԼՈՒԹ Ե

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ը

ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԵՒ ՍԵԼԵՒԿԵԱՆ ԳԵՐԻՇՒԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ
(330—94)

Այս շրջանում Հայաստանն ընկաւ նախ մակեդոնա-
ցիների, ապա սելևկեանների գերիշխանութեան տակ: Ուս-
տի նախ երկու խօսք սրանց մասին:

Ալեքսանդր Ալեքսանդր Մեծը, Մակեդոնիայի թագա-
Մակեդոն-ւորը (336—323), Յունաստանը նուաճելով, իր
նացի: գէնքը դարձրեց պարսից լայնածաւալ պետու-
թեան դէմ, որն և նուաճեց 330 թ. Այս պատերազմում
հայերը հետեակ և հեծեալ զօրքերով օգնում էին պարսից
Դարեհ Գ. Կողոման թագաւորին: Ալեքսանդր Մակեդոնա-
ցին նուաճելով Պարսկաստանը, նուաճեց նաև Հայաստանն
և նրա վերայ կուսակալ նշանակեց Միհրանին (330—323),
որը Լիւդիայի սատրապն էր և իրեն անձնատուր էր եղել:

Մակեդոնական աշխարհակալը մեռաւ Բաբելոնում
ջերմախտից, առանց զահաժառանգի: Նրա մահից յետոյ
նրա զօրավարների մէջ պատերազմ ծագեց, որը վերջա-
ցաւ նրանով, որ մեծ աշխարհակալի նուաճած երկիրները
բաժանուեցան երեք գլխաւոր մասերի. ասիական նուա-
ճումների մեծագոյն մասը Ինդոս գետից մինչև Ասորիք
անցաւ Սելևկոս զօրավարի ձեռքը, որը իրեն մայրաքա-
ղաք ընտրեց Բաբելոնը 312 թ. Այդ օրից էլ սկսում է

սելեկեան թւականութիւնը: Պաղոմէոս զօրավարը տիրեց Եգիպտոսին և Պաղեստինէին, իսկ Մակեդոնիան և Յունաստանն անցան Անտիգոնի ձեռքը: Բացի այս երեք զըլխաւոր պետութիւններից մանր թագաւորութիւններ ևս գոյացան Ալէքսանդր Մակեդոնացու նուաճած երկիրներից, որոնցից ամենանշանաւորն էր Պոնտոսի թագաւորութիւնը, որը բռնում էր Սև ծովի հարաւ արևելեան եզերքը:

Ալէքսանդր Մակեդոնացու ժառանգութեան բաժանման ժամանակ Հայաստանը բաժին ընկաւ Սելեկոս զօրավարին:

Սակայն սրա յաջորդները չկարողացան պահպանել իրենց ստացած ժառանգութեան ամբողջութիւնը, նրանցից ապստամբուեցան և անկախութիւն ձեռք բերին հայերը, պարթևները և բակտրիացիները, այնպէս որ Սելեկեանների ձեռքում մնացին միայն Միջագետքն և Ասորիքը:

Պարթևներ: Պարթևները հիւսիսից եկած սկիւթացիներ էին և նրանց հայրենիքը իր գլխըով համապատասխանում էր մօտաւորապէս այժման Խորասանին (Կասպից ծովի հարաւ արևելեան կողմում): Նրանք արիական ծագում ունէին, խաշնարածներ էին և թափառական կեանք էին վարում. ձի նստած ոչ միայն ուտում-խմում, այլև աշխատում էին: Նրանց մէջ ազատ մարդու համար անպատուութիւն էր համարւում ոտքով շրջելը: Նրանց թագաւորութեան հիմնադիրն էր Արշակը (256 — 253), որն ապստամբուելով Սելեկեաններից, Պարթևաստանն ազատեց նրանց իշխանութիւնից *):

*) Պարթևական թագաւորութեան հիմնադրի անունը կրում էին նրա բոլոր յաջորդները: Այսպէս Տրդատ, Արտաւան, Հրահատ (Ֆրատտէս), Միհրդատ և միւս պարթևական թագաւորները կոչւում էին՝ Արշակ Տրդատ, Արշակ Արտաւան, Արշակ Հրահատ (Ֆրատտէս), Արշակ Միհրդատ և այլն:

Իսկ Արշակ 2. Միհրդատը (175 — 136) աւելի ևս ընդարձակեց պարթևական պետութեան սահմանները, այնպէս որ նրա ժամանակ պարթևների իշխանութիւնը հասնում էր Ինդոս գետից մինչև Եփրատ և Ոքսոս գետից (Ամու-Դարիա) մինչև Պարսից ծոցը: Այս բոլոր երկիրների սիրտը կազմում էր ի հարկէ Պարսկաստանը, որն և պարթևական մեծ թագաւորութիւն դարձաւ: Վերոյիշեալ Միհրդատը կրում էր արդէն ոչ թէ թագաւորի, այլ «թագաւորների թագաւորի» տիտղոսը, որը նրանից առաջ կրել էին Պարսկաստանի Աքեմենեան վեհապետները:

Նէօպտոլմէոս Ալէքսանդր Մակեդոնացու մահից յետոյ Փուսափեոս — տոյ Հայաստանը կառավարւում էր կուսաճեա և Արդուարդ: Կալներով, որոնց նշանակում էին Ալէքսանդրի յաջորդները, ապա Սելեկեանները: Այս կուսակալները երբեմն օտարազգի, երբեմն էլ հայազգի էին լինում: Առաջին կուսակալն եղաւ, ինչպէս տեսանք, Միհրանը: Սրանից յետոյ հայոց վերայ կուսակալ կարգուեց Նէօպտոլմէոսը կամ Փուսափեոսէսը: Սա մի շատ խիստ և ամբարտաւան մարդ էր, ուստի և շուտով մերժուեց հայերից, որոնց գլխաւորն էր Արդուարդը (301 թ.), որին Դիոդորոս յոյն պատմագիրը թագաւոր է անուանում: Թէպէտ և Արդուարդը Պերդիկաս մակեդոնական վեհապետի միջամտութեամբ Նէօպտոլմէոսին վերստին ընդունեց իբրև կուսակալ Հայաստանի, սակայն Նէօպտոլմէոսը շուտով պատերազմ սկսեց Կապադովկիայի եւմենէս կուսակալի դէմ, որից և ուղանուեց: Արդուարդ հայոց թագաւորն այնքան զօրեղ էր, որ նոյնիսկ միջամտեց Կապադովկիայի թագաւորութեան գործերին և եւմենէս կուսակալի մահից յետոյ Արիարաթին, Կապադովկիայի թագաւորի որդուն, որը Հայաստան էր ապաւինուել, հաստատեց Կապադովկիայի գահի վերայ:

Արսաֆուխաս Յայտնի չէ ճշտութեամբ, թէ Արդուարդից եւ Չարիա- յետոյ ով էր իշխում Հայաստանում: Սակայն դրեւ: յայտնի է, որ Անտիոքոս Մեծ Սելևկեան թագաւորի ժամանակ (222—187) Հայաստանի հիւսիս արեւելեան մասում կուսակալ էր Արտաքսիասը (Արտաշէսը) իսկ հարաւ արեւմտեան մասում Չարիադրէսը (Չարեհը): Սրանք Անտիոքոսի զօրավարներն էին, կախումն ունէին նրանից եւ իրենց իշխանութիւնը վարում էին նրա հաւանութեամբ: Սակայն երբ Անտիոքոս Մեծի եւ հռոմայեցիների մէջ պատերազմ ծագեց եւ Անտիոքոսը 190 թ. յաղթուեց հռոմայեցիներին, Արտաքսիասն եւ Չարիադրէսը օգուտ քաղելով դրանից, անցան հռոմայեցիների կողմն եւ հռոմէական ծերակոյտի հաւանութեամբ իրենց անկախ թագաւորներ յայտարարեցին: Այսպէս ուրեմն 190 թ. Հայաստանի հիւսիս արեւելեան եւ հարաւ արեւմտեան մասերում առաջին անգամ երկու կուսակալներ պարզեցին անկախութեան դրօշակները: Թէ Արտաքսիասն եւ թէ Չարիադրէսն իրենց շրջակայ երկիրներից նորանոր հողեր նուաճելով, իրենց թագաւորութիւններն ընդարձակեցին եւ ամբողջացրին: Հայաստանում Արեւմտեան շրջանում յիշուում են մօտ 20 ազգեր՝ ալարոզներ, սասպէյրներ, տաօիւներ, բասեանցիներ եւ այլն, որոնք թէպէտ սկզբում ունէին իրենց սեպհական բարբառներն, սակայն յետոյ հետզհետէ ձուլուեցին հայերի (արմէնների) հետ եւ կորցրին իրենց բարբառներն եւ ազգութիւնը: Այդ ազգերի մասին այսօր յիշատակութիւն է ֆապել լոկ Հայաստանի աշխարհագրական անունների մէջ (Արարատ, Սպեր, Տայք, Բասեան): Արտաքսիասի եւ Չարիադրիսի ձեռքով առաջին անգամ այս փոքրիկ ազգերը միացան միմեանց հետ եւ սկսեցին մի լեզուով խօսել: Արտաքսիասի մայրաքաղաքն եղաւ Արտաշատը, իսկ Չարիադրիսինը Կարկաթիոկերտը (այժմեան Պարբերդը) Ծոփաց երկրում:

Թէպէտ եւ Արտաքսիասն եւ Չարիադրէսն ենթարկուեցան Անտիոքոս Դ.-ի (175—164) յարձակմանը, սակայն կարողացան իրենց անկախութիւնը պաշտպանել եւ միմեանց հետ նիզակակցութեան դաշն կապեցին:

Արտաքսիասի յաջորդներից մէկին, Տիգրան Մեծին (94—55) էր վերապահուած նախ ամբողջ Հայաստանը միացնել իր իշխանութեան տակ, ապա իր գերիշխանութիւնը հաստատել Ասիայում:

Արսաֆուսայի Հայաստանի մեծագոյն մասին տիրողն (Արսաշատի) հիմն- Արտաշէսն էր: Անկախ Հայաստանի այս նարկոսիւնը: առաջին թագաւորը նշանաւոր է նրանով, որ հիմնեց Արտաքսատա կամ Արտաշատ երեւելի հայոց մայրաքաղաքը: Երբ Անտիոքոս Մեծը հռոմայեցիներից յաղթուեց, Հաննիբալ հռչակաւոր կարճեդոնացի զօրավարը, որը ապաւինուել էր նրան, եկաւ Հայաստան եւ ապաւինուեց Արտաշիսին: Արտաշէսը պատուով ընդունեց երեւելի կարճեդոնացուն եւ Երասխ գետի ափին, այն տեղում, որն ընտրեց Հաննիբալը, հիմնեց իր մայրաքաղաքը: Ստրաբոն յոյն աշխարհագիրը Արտաշատն անուանում է մեծ եւ գեղեցիկ քաղաք, Երասխի գաշտի մտքում, մի թերակղզու վերայ, որը կազմում էր Երասխի վտակներից մէկը, այնպէս որ քաղաքի պարիսպները երեք կողմից ողողւում էին ջրով, իսկ չորրորդ կողմը, որը թերակղզու պարանոցի վերայ էր, փակուած էր խրամով եւ պատուարով: Մայրաքաղաքին մօտիկ գտնւում էին երկու ամրոցներ, որոնց մէջ պահուած էին հայոց թագաւորների գանձերը:

Միւս հայ Դեռ Արտաքսիասից եւ Չարիադրիսից առաջ իւխանները: Հայաստանի գանազան կողմերում գանազան հայ իշխաններ անկախութիւն էին ձեռք բերել: Այսպէս մօտ 245 թ.Ք.ա. Ծոփաց երկրում յիշուում է Արշամ անունով մէկը, որը թագաւորում էր Ծոփաց երկրի Արշամաշատ

(Արսամոսատա) քաղաքում: Սրա պայագատներին մէկն էր Քսերքսէսը (170—160):

Երկուսից էլ մնացել են դրամներ, որոնց վերայ նկատուում է հայոց թագաւորութեան խոյրը:

Հայի անկախութեան որբան դարձաւ Արտաքսիասից և Զարիադրիսից առաջ նաև Փոքր Հայքը, որի տոհմային իշխանի հետ նրանք նիզակակցութեան դաշն կապեցին:

Փոքր Հայքի իշխանները նուաճեցին խաղերին և ուրիշ շրջակայ ազգերի և նրանց իշխանութիւնը մի ժամանակ հասնում էր մինչև Տրապիզոն և Փառնակէա: Սակայն Փոքր Հայքը յետոյ Պոնտոսից նուաճուեց և երբ այս երկիրն էլ հռոմայեցիներից նուաճուեց, Պոնտոսի հետ միասին հռոմէական նահանգ դարձաւ:

Այսպէս թէպէտ և Հայաստանում կային անկախ թագաւորներ և իշխաններ, սակայն այս թագաւորներն և իշխանները երբեմն միմեանց դէմ գէնք էին առնում և Հայաստանը մնում էր բաժան-բաժան եղած:

Արտաքսիասի յաջորդների ժամանակ Հայաստանում գործդանում է արդէն պարթևների ազդեցութիւնը, որոնց Արշակ 2. (Միհրդատ Ա.) թագաւորը, ինչպէս տեսանք, նախկին պարսկական մեծ պետութիւնը վերականգնել էր և կրում էր «թագաւորների թագաւոր», ախտղոսը: Սա արշաւելով Հայաստան, Արտաքսիասի որդուն և յաջորդին, Արտաւազգին (159—149) գահից հրաժարեցրեց և նրա տեղ թագաւորեցրեց Տիգրան Բ.-ին (Տիգրան Ա. պարսից Կիւրոս թագաւորի ժամանակակիցն և դաշնակիցն էր):

ԳԼՈՒԽ Զ.

ՏԻԳՐԱՆ ՍԵԾ ԵՒ ՀԱՅՈՑ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՍԻԱՅՈՒՄ

Տիգրանի պատան- Պարթևները շարունակում էին միջա-
դուքիւնն եւ գա- մտել հայոց թագաւորութեան գործերին:
հակադուքիւնը: Բ. դարու վերջերը նրանք Մարաստանն և
Միջագետքը խլեցին թուրացած Սելևկեանների ձեռքից:
(Արշակ Թ. կամ Միհրդատ Բ. պարթևաց թագաւորը
(124—86) պատերազմ յայտնեց հայոց Որդուադիստ (Ար-
տաւազգ) թագաւորին, յաղթեց նրան և պատանդ վեր-
ցրեց նրա որդուն (կամ եղբորորդուն) Տիգրանին:

Երբ Արտաւազգը մեռաւ, պարթևաց թագաւորը չէր
ուզում Տիգրանին ազատել և թոյլ տալ, որ վերագառնայ
իր երկիրն և նստի իր նախնիների գահը: Միայն երբ
Տիգրանն ակամայ նրան 70 գաւառներ կամ «հովիտներ»
զիջեց, նա նրան ազատութիւն տուեց: Եւ այսպէս 94 թ.
Ք. ա. Տիգրան արքայազնը, որն իբրև պատանդ ապրել էր
պարթևների արքունիքում և փորձել էր գերութեան գառ-
նութիւնները, վերագարձաւ Հայաստան, իր սրտում ու
պահած իր հայրենիքի գերիչների և հարստահարիչների
դէմ: Շուտով նա պատերազմ յայտնեց պարթևներին և
նչ միայն նրանցից յետ խլեց իր տուած 70 գաւառները,
նչ միայն աննշան Հայաստանը դարձրեց գերիշխող Ասիա-
յում, այլև իր գերիշխանութիւնը ձանաչել տուեց պար-

թե թագաւորներին, զրկելով նրանց «թագաւորների թագաւոր» տիտղոսից:



Տիգրան Ա

Հայաստանը քաղաքացիական պատերազմի մեծամեծ ծրագրերով: Այս ծրագրերն իրականացած: Գործելու համար նախ հարկաւոր էր քաղաքականապէս Հայաստանը միացնել: Ուստի և հէնց իր թագաւորութեան երկրորդ տարին (93 թ.) նա յարձակուեց հարաւ արեւմտեան Հայաստանի (Ծովայն երկրի) Արտանէս (այսինքն Վարդանէս) վերջին թագաւորի վերայ, յաղթեց նրան և նուաճեց նրա թագաւորութիւնը: Ամբողջ Հայաստանն առաջին անգամ միացաւ Տիգրանի ձեռքում:

Տիգրանի դաշինք Տիգրանի ժամանակ Պոնտոսը կազմակերպեց Միհրդատ Պոնտոսի մոտ էր առանձին թագաւորութիւն, սարաքաւորի հետ: Կայն ճանաչում էր Հռոմի գերիշխանութիւնը: Այդ ժամանակ այս երկրի թագաւորն էր երեւելի Միհրդատ Զ. Եւպատորը (120 - 63), որը նոյնպէս սուղորուած էր իր հայրենի թագաւորութիւնն ընդարձակելու և զօրեղացնելու մտքով: Երկու վեհապետներն իրենց ծրագրերն իրականացնելու ժամանակ անպայման պիտի ընդ-

հարուէին իրենց հօգիս հարեանների հետ՝ Տիգրանը պարթևներին, իսկ Միհրդատը հռոմայեցիներին հետ, որոնց գերիշխանութեան տակ էր գտնուում այդ ժամանակ Փոքր Ասիան: Ուստի և Հայոց և Պոնտոսի թագաւորներն իրենց շահերն աչքի առաջ ունենալով պէտք է սերտ դաշնակցական կապերով միանային միմեանց հետ: Շուտով դրա համար առիթը ներկայացաւ: Արիոբարդանը հռոմէացիների



օգնութեամբ պիտի բարձրանար Կապադովկիայի գահը: Միհրդատը, որն այդ երկրի վերայ աչք էր տրուել, երկիւղ էր կրում հռոմայեցիներից Արիոբարդանի թագաւորութեանը խոչընդոտ հանդիսանալու: Նա վճռեց իր նպատակին հասնել հայոց թագաւորի միջոցաւ, որը Միհրդատ Զ. Եւպատոր Հռոմից բոլորովին անկախ էր: Նա Տիգրանի մօտ ուղարկեց իր Գորդիոս զօրավարին և նրան առաջարկեց իր նիզակակցութիւնը: Տիգրանն ընդունեց այդ առաջարկութիւնը, երկու վեհապետների մէջ կայացաւ քաղաքական դաշն և նիզակակցութիւն, որոնք ուղղուած էին ի հարկէ նրանց հակառակորդ պետութիւնների, հռոմայեցիների և պարթևների դէմ: Քաղաքական դաշն ամրապնդուեց խնամէական կապով. Տիգրանը, որն այդ ժամանակ մօտ 47 տարեկան էր, ամուսնացաւ Միհրդատի կլէօպատրա դստեր հետ, որը յայտնի էր իր խելքով և առնացի քաջութեամբ:

Հայերն առաջին եւ երկրորդ անգամ Կապադովկիայում: 93 թ. անցան Եփրատը յիշուած Գորդիոսի առաջնորդութեամբ և յարձակուեցան Կապադովկիայի վերայ: Արիոբարդանը յանկարծակիի եկած, չհամարձակուեց ընդդիմանալ, հաւաքեց իր զանձերն և փա-

խաւ Հռոմ: Հայերը տիրեցին այս երկրին և նրա վերայ կուսակալ նշանակեցին յիշուած Գորգիոսին, ուրիշ խօսքերով այս երկիրը նուաճեցին Պոնտոսի թագաւորի համար:

Սակայն Հռոմը չտարաւ այս անարգանքը: Ծերակոյտի հրամանով Սուլլան, Կիլիկիայի հռոմէական կուսակալը, անցաւ Տօրոսն և հայերին ու պոնտացիներին հալածելով Կապադովկիայից, Արիօբարզանին նորից թագաւորեցրեց այս երկրի վերայ: Այնուհետև ոչ հայերը փորձ արին նորից խռովելու Կապադովկիա և ոչ էլ հռոմայեցիները հայերից բաւարարութիւն պահանջեցին, և այսպէս 91 թ. Հռոմի գերիշխանութիւնը Փոքր Ասիայում վերահաստատուած էր երևում: Սակայն յաջորդ տարին (90 թ.) Հռոմն իր գէմ զինուած տեսաւ Իտալիայի կէսն և հարկադրուած էր գաւառներից իր լեզէոններն յետ կանչել: Հէնց որ Սուլլան Փոքր Ասիայից հեռացաւ, Միհրդատը վերանորոգեց իր դաշինքը Տիգրանի հետ: Երկու թագաւորները պայման դրին, որ ընդհանուր ուժերով պատերազմներ մղեն հռոմայեցիների դէմ և այդ պատերազմներում նուաճած երկիրները ֆիսան Միհրդատին, իսկ գերիները, աւարը, անասուններն և զանձերը Տիգրանին պատկանեն:

Սրանից յետոյ Միհրան և Բագուաս հայ զօրավարներն երկրորդ անգամ Կապադովկիա մտնելով, հալածեցին Արիօբարզանին և Կապադովկիան վերանուաճելով Միհրդատի համար, նրա գահը նստեցրին Միհրդատի Արիարաթ որդուն:

Պատերազմ պարբերների ժամ Տիգրանն իր գէնքը դարձրեց իր ոխերիմ թշնամիների, րաի առեւելեան կողմում: պարթևների դէմ, որոնք իրեն պատանդութիւնից ազատելու համար իբրև փրկանք 70 գաւառներ էին ստացել և ընտելացել էին շարունակ միջա-

մտելու հայոց թագաւորութեան գործերին: Բուպէն շատ բաքեպատեհ էր Տիգրանի համար: Վերոյիշեալ Արշակ Թ.-ի (Միհրդատ Բ.-ի) թագաւորութեան ժամանակ Պարսկաստանում ծագեցան ներքին խռովութիւններ, որոնք վերջացան նրանով, որ Միհրդատի հարազատ եղբայրն նրա՞մ գահընկէց արաւ և սպանել տուեց (86 թ.): Ներքին խռովութիւնները ջլատեցին պարթևաց թագաւորութեան ոյժերն և թուլացրին նրան: Տիգրանի համար վրէժխնդրութեան ժամը հասել էր: Մի կողմից նա օգնելով իր դաշնակցին հռոմայեցիների դէմ, միւս կողմից նա իր գէնքը դարձրեց պարթևների դէմ: Հայ զօրքը յարձակուեց պարթևաց թագաւորութեան հիւսիսային նահանգների վերայ և յաղթական քայլերով հասաւ մինչև Արբելա և Նինուէ (այժմեան Մօսուլի մօտ): Այս արշաւանքը մի տեսակ վրէժխնդրութիւն էր պարթևներից Հայաստանին և նրա վեհապետին հասցրած բազմաթիւ վիրաւորանքների համար, ուստի և հայ զինուորն անողոք էր, աւերում էր թշնամու երկիրն և գերում նրա բնակիչներին: Հայերը նուաճեցին Կորդուաց աշխարհը, Ասորեստանը, Աղիարենը, Աւրպատականը, Մարաստանն իր Եկբատանա (այժմեան Համադան) մայրաքաղաքով, Միջագետքի հիւսիսային պողաւէտ մասը Մծրին, Խառան և ուրիշ քաղաքներով, Ուրոյենէն կամ Ուուհայաստանն իր Եդեսիա մայրաքաղաքով: Մարաստանում հայերն այրեցին Եկբատանայի տպարանքը: Պարթևները ոչ միայն Տիգրանին յետ դարձրին 94 թ. նրանից անիրաւ կերպով ստացած 70 գաւառները, ոչ միայն նրան թողին իրենց տէրութեան վերոյիշեալ հիւսիսային նահանգները, այլև հարկադրուեցին յաղթողի հետ նիգակալցութեան դաշինք կուել:

Վերոյիշեալ երկիրների, ինչպէս և վրաց և աղւանից թագաւորները հայոց թագաւորին հարկատու դարձան և պարտաւորուեցին պատերազմի ժամանակ նրան

գործով օգնել: Տիգրանն իր դուստրներէից մէկին կնու-
թեան տուեց Միհրդատ Ատրպատականի թագաւորին: Հա-
րաւային Միջագետքից նա Ոսրոյենէ փոխադրեց թափա-
ռական արաբական մի ցեղ և այստեղ նրան հաստատ-
բնակութիւն տուեց, որպէսզի այս ցեղի միջոցով իր ձեռ-
քում պահէ Եփրատի անցքն և այն մեծ առևտրական ճա-
նապարհը, որն այս տեղով անցնում էր:

Արաբական ցեղն եղեսիւստում իշխանութեան հասաւ
և այս քաղաքի արաբ իշխանները ընդհանուր անունով
կոչւում էին Աբգար կամ Մաննոս: Նրանք Տիգրանի հրա-
մանով Եփրատի անցքն իրենց ձեռքն առան, հսկում էին
իրենց երկրով անցնող մեծ առևտրական ճանապարհի վե-
րայ և մաքս էին վերցնում թէ իրենց և թէ իրենց վե-
հապետի, Տիգրան հայոց թագաւորի համար:

Տիգրան քա-
գաւորների
թագաւոր: Ասիայի մեծ թագաւորութիւնը, որը հիմնեց
Կիւրոսը, այժմ Տիգրան հայոց թագաւորը վե-
րականգնել էր: Այս թագաւորութեան վեհա-
պետները կրել էին «թագաւորների թագաւոր» տիտղոսը:
Այժմ Տիգրանը, Կիւրոսների և Դարեհների ժառանգու-
թեան տէրը, ընդունեց այդ նոյն տիտղոսը և դարձաւ
Ասիայի գերիշխանը:

Նուաճումներ եփ
րաքի արեւմտեան իր աչքը դարձրեց դէպի Եփրատ գետի ա-
կողմերում: Չակողմեան երկիրները՝ Ասորիքը, Կիլիկիան
և Կապադովկիան: Դրանով արևելքի գերիշխանը պատ-
րաստում էր արևմտքում ևս նուաճումներ անելու, որովհե-
տե մինչդեռ Եփրատի ձախակողմեան երկիրներն արևելքի
սեպհականութիւնն էին համարւում, նոյն գետի աջակող-
մեան երկիրներն այն ժամանակուայ մարդկանց հասկացո-
ղութեամբ արևմտքի անկապտելի սեպհականութիւնն էին
կազմում, վաղուց ենթարկուել էին հելլենական քաղաքա-
կրթութեան և ճանաչում էին Հռոմի գերիշխանութիւնը:
Տիգրանն իրեն նպատակակէտ ընտրելով այս երկիրները,

անփութափելիօրէն ապագայում պիտի ընդհարուէր հռո-
մայեցիներին հետ: Սակայն քանի որ նա իրեն նպատակ
էր դրել Հայաստանը մեծ պետութիւն դարձնելու, յար-
գող և գնահատող էր հելլենական քաղաքակրթութեանը,
չէր կարող Եփրատ գետի միւս կողմը չանցնել:

Ասորիքի, Կիլիկիայի Տիգրանն իր զէնքը դարձրեց Սե-
եւ Փիւնիկիի լեկեանների դէմ: Սրանց թագաւորու-
նուաճումը: Թեանը մահաբեր հարուած հասցրին,
ինչպէս ասացինք (եր. 58), պարթևները: Այժմ նրանք
իշխում էին Ասորիքի վերայ, սակայն նրանց թագաւորու-
թիւնը միանգամայն կազմալուծուած և քայքայուած էր:
Արքայական թագն ու գայիսոնը անէծք էր դարձել Սե-
ւեականների և իրենց հպատակ ժողովուրդների համար:
Մինչդեռ Սելևկեանները միմեանց հետ կռւում էին թա-
գի համար, հպատակ ժողովուրդները նրանց դէմ ապս-
տամբւում և նրանց հպատակութիւնից դուրս էին գալիս:
Հարաւում, Եգիպտոսի սահմանից մինչև Կեսարիա իշխում
էր Ալէքսանդր Յանէաս հրէից իշխանը. Ասորիքի գլխա-
ւոր քաղաքները, որոնց թւում նաև Անտիոք մայրաքա-
ղաքը, գրեթէ անկախ էին և Սելևկեաններին չէին հնա-
գանդւում. Կիլիկիայում իշխում էին ծովահէները կամ
հռոմայեցիները:

Այսպիսի դրութեան մէջ էր Ասորիքը, երբ Տիգրանն
իր քայլերը դարձրեց դէպի այդ երկիրը, մանաւանդ որ
նրա բնակիչները զգուած Սելևկեաններից, խնդրում էին
նրան գալ իրենց երկրին տիրել և նրա մէջ կարգ ու կա-
նոն հաստատել: Սելևկեաններն ոչ մի կերպ չէին ուզում
իրենց նախնիների սատրապի ժառանգին իրենց երկրում
գերիշխան տեսնել. սակայն ի՞նչ կարող էին անել նրանք
Տիգրանի կէս միլիոն անեղ զօրաբանակի դէմ: Տիգրանն
արշաւեց Ասորիքի վերայ և հեշտութեամբ տիրեց այս
հարուստ երկրին: Արդէն 83 թուականից սկսած բոլոր

առորական տարեգրութիւնները Տիգրանին համարում են Ասորիքի գերիշխանը: Սելևկեան վերջին թագաւորը, Փիլիպոս Բ., փախաւ Կիլիկիա, իսկ նրա որդին Եւսեբիոս Անտիոքոսը՝ հռոմէական Սսիա: Նրանց կանայքն և զուսարները լցրին յաղթողի կանանոցը: Անտիոք մայրաքաղաքը դարձաւ Տիգրանի գահանիստներից մէկն և սկսեց նրա պատկերով դրամներ կտրել: Միայն Որոնտէս գետի բերանի մօտ գտնուող Սելևկիա քաղաքը սատարիկ ընդդիմադրութիւն ցոյց տուեց հայերին: 74 թ. հայերն առան Պտղեմայիս քաղաքն (Տիւրոսից հարաւ) և հրէական թագաւորութեանը լուրջ վտանգ էին սպառնում: Ահա այս ժամանակները Տիգրանը Հրէաստանից գերեց բազմաթիւ հրէայ ընտանիքներ և ուղարկելով Հայաստան, բնակեցրեց նրանց զանազան հայ քաղաքներում: Տիգրանն Ասորիքը դարձրեց հայկական նահանգ և նրա վերայ կուսակալ նշանակեց իր Բագադատէս (=Բագրատ) զօրավարին: Բագմատանջ երկիրը հայոց թագաւորի հօր թեւերի տակ շունչ քաշեց և 14 տարի շարունակ (83—70) վայելեց անվրդով խաղաղութեան բաղքը պտուղները: Միայն թէ այս երկրում պատահեց սոսկալի երկրաշարժ, որին 170,000 հոգի զոհ դնացին:

Տիգրանն այժմ իր ձեռքը մեկնեց դէպի Սելևկեանների թագի վերջին ծաղիկը, դաշտային Կիլիկիան, տիրեց այս երկրին, միացրեց նրան Ասորիքի հետ, որն, ինչպէս ասացինք, Բագրատ զօրավարին էր յանձնուած, իսկ նրա ծաղկեալ քաղաքների բնակիչներին գերելով Հայաստան ուղարկեց:

Կապադովկիան ևս ազատ չմնաց Տիգրանի յարձակումներից: Նա նախ նուաճեց այս երկրի արեւելեան սահմանում գտնուող Մելիտինէ երկիրն և քաղաքն և միացրեց նրանց գետի միւս կողմում գտնուող Ծոփաց երկրի հետ, որով և իր ձեռքն առաւ այն մեծ ճանապարհը, որով կառարւում էր Հայաստանի ազուտուրը Փոքր Ասի-

այի հետ: Իսկ 77 թ. հայերն երրորդ անգամ մտնելով Կապադովկիա, հասան մինչև նրա Մաժակ մայրաքաղաքը (որը յետոյ Կեսարիա կոչուեց) և գերելով թէ՛ նրա և թէ՛ միւս 11 կապադովկիական քաղաքների բնակիչներին, Հայաստան բերին:

Տիգրանակերտի Որովհետեւ պետութեան սահմանները հիմնարկութիւնը: դէպի հարաւ սաստիկ ընդարձակուել էին, իսկ Արտաշատ մայրաքաղաքը դանւում էր հիւսիսում և ուրեմն հեռու էր նորահիմն մեծ պետութեան կենտրոնից, Տիգրանը Հայաստանի հարաւային սահմանում, Աղձնեաց երկրում, այն տեղում, ուր 20 տարի առաջ պատանդութիւնից վերագառնալիս հայոց թագն իր զլխին դրեց, հիմնում է իր թագաւորութեան երկրորդ մայրաքաղաքը, Տիգրանակերտը, «Տիգրանի քաղաքը», որը մի տեսակ Նինուէ և Բաբելոն էր, հօր միջնաբերդով, շրջապատուած 50 կանգուն բարձրութեամբ ամուր պարիսպներով: Պարիսպներն այնքան լայն էին, որ նրանց մէջ շինուած էին ախոռանոցներ և զանազան մթերանոցներ, իսկ քաղաքից դուրս Տիգրանը շինել տուեց դղեակ, պարտէզներ, զբօսավայրեր, որսավայրեր և աւազաններ, լիքը ձկներով:

Ինչպէս առաջ Սաղմանասարն և Նաբուքոդոնոսորը հրէաներին Բաբելոն էին գաղթեցրել, այժմ էլ Տիգրանը Կորդուաց աշխարհից, Ադիաբենից, Ասորեստանից, Կիլիկիայից և Կապադովկիայից Տիգրանակերտ գաղթեցրեց բազմաթիւ յօյն և կամ կիսայօյն քաղաքացիներ իրենց կայքով և գոյքով: Նաև շատ անուանի հայերի հրամայեց իրենց կայքով և գոյքով տեղափոխուել Տիգրանակերտ և այնտեղ բնակութիւն հաստատել: Ամենակարճ ժամանակամիջոցում Հայաստանի երկրորդ մայրաքաղաքը դարձաւ Սսիայի հրաշալիքներից մէկը, նրա բնակիչների թիւը հասնում էր 300,000-ի և նրա մէջ ամբարուեցին անթիւ

գանձեր և հարստութիւն: Մայրաքաղաքն ունէր թաւրոն յոյն դերասանական խմբով:

Տիգրան Մեծի հիմնած Այժմ՝ Տիգրանի հիմնած պետութեան սահմաններն հասնում էին Կասպի ծովին, արեւմտիկ պից ծովից մինչև Միջերկրական ծովն և Կուր գետից մինչև Յորդանան գետն և Պարսից ծոցը: Նոր հայկական մեծ պետութեան մէջ ապրում էին բազմաթիւ և բազմալեզու ազգեր, որոնց մէջ ի հարկէ ներքին, բարոյական կապ չկար: Այդ պետութեան մէջ գերիշխողն էր ի հարկէ հայ տարրը, որը բաղկացած էր արածնեալ նախարարներից և իշխաններից և իրաւագուն ռամիկ ժողովրդից: Արածնեալ դասակարգը զինուորական էր, նրա զբաղմունքներն էին որսն ու պատերազմը: Զէնքի զօրութեամբ պահպանում էր այս հսկայական պետութիւնն, ուստի և զօրքը կազմում էր հայկական մեծ պետութեան հիմնադրի ամենաառաջին հոգսը: Տիգրանի զօրաբանակը բաղկացած էր հեծեակներից և հետևակներից: Հեծեակազօրքը կազմում էին նախարարները, որոնք իրենց երիվարներով հանդերձ զրահապատ էին: Սակայն բացի բուն հայերից օտար ազգերն ևս մեծ քանակութեամբ ծառայում էին Տիգրանի զօրքերի մէջ: Աղանները տալիս էին զրահաւորներ, վրացիները քաջ աղեղնաւորներ: Միայն Ատրպատականի թագաւորը, Տիգրանի փեսան, պատերազմի ժամանակ կարողանում էր ոտքի հանել 40,000 հեաւակ և 10,000 հեծեակ օգնական զօրք: մարերը տալիս էին հեծեակ աղեղնաւորներ, արաբացիները՝ անապատին ընտելացած հեծեակազօրք, կորդուացիները՝ ռահվիրաներ, այսինքն ճանապարհ բացողներ և կամուրջ շինողներ: Զօրքի թիւը հասնում էր 500,000 հոգու: Այս հսկայական զօրքի պահպանութեան համար հարկաւոր էին անթիւ գանձեր: Եւ իրաւ Տիգրանն ունէր բազմաթիւ ամրոցներ, որոնց մէջ ամբարուած էին հարուստ գանձեր:

Այսպիսի ամրոցներից էին Ողականն և Բողբերդն Արտաշատի մօտ, Արտազերքը Արածանու մօտ, նորահիմն Տիգրանակերտը, Մծբինն և ուրիշները:

Ասիայի նոր գերիշխանին նրա հպատակները աստուածային յարգանք էին մատուցանում: Նա հրապարակաւ երևում էր կէս ծիրանի և կէս սպիտակ պատմունձանով, կայսերական ծիրանիով, ճամկաւոր երկար վարտիքով, երկար, աստեղազարդ խոյրը գլխին և արքայական ապարօշը ճակատին: Նրա մշտական ուղեկիցներն էին չորս «թագաւորները», այսինքն Հայաստանի չորս մեծ բզեշխները, որոնք նա յոտած ժամանակ թև թևի տուած շրջապատում էին նրա գահոյքը, իսկ երբ նա ձի էր հեծնում, նրա առջևից գնում էին հետիոտն, լոկ բաճկոններ հագած: Թագաւորն իր նախարարների պէս օրուայ մի մասը որսի էր նուիրում, միւս մասն անց էր կացնում արդարադատութեամբ, պետական գործերով և կանանոցով:

Վաղուց հելլենականութիւնը մուտք էր գործել հայոց արքունիքն ևս: Կլէօպատրա թագուհին, որ սիրող էր հելլենական կրթութեանն և գեղարուեստին, աշխատում էր արքունիք գրաւել հելլեն գիտուններին, գերասաններին և ճարտասաններին: Ամփրկրոտէս երևելի հռետորը, որը Սելևկեանների հրաւերը արհամարհանքով մերժել էր, Տիգրանին ընդունեց և ապրում էր նրա արքունիքում: Մետրոդոր յոյնն ևս, որն առաջ Միհրդատի պաշտօնեան էր, այժմ ապրում էր Տիգրանի արքունիքում: Հելլենական թատրոնն ևս խորթ չէր հայոց արքունիքին՝ Տիգրանը պահում էր իր մայրաքաղաքներում թատրոններ յոյն դերասաններով: Իր ժառանգներին թագաւորների թագաւորը հելլենական կրթութիւն և դաստիարակութիւն էր տալիս: Նրա որդին և յաջորդն Արտաւազդ յայտնի մատենագիր էր, հմուտ և սիրող թատերական գործի:

Մինչև հռոմայեցիների հետ ընդհարուիլը թագաւորների թագաւորը քառորդ դար շարունակ յաջողութիւն-

ների էր հանդիպել: Նրա առաջ գլուխ էին խոնարհել ասիական բազմաթիւ իշխաններ և թագաւորներ, իսկ նրա հարեան պետութիւնները ակնածում էին նրանից: Այս բոլորը ներշնչեց Տիգրանին ամբարտաւանութեան ոգի՝ նա հաւատում էր կոյրզկուրայն իր բախտին և աստղին:

Մինդաս Զ. Տի- Տակաւին Ալէքսանդր Մակեդոնացու գրանի դաւնա- ժառանգութեան բաժանման ժամանակ Պոն կիցն եւ իր բա- տուր—այն երկիրը, որը բռնում է Սև ծո- գաւորութիւնը: Վի հարաւ արեւելեան եզերքը—կազմեց իր համար առանձին թագաւորութիւն: Այս երկրում Տիգրան Մեծի ժամանակ թագաւորում էր, ինչպէս յիշուեց, Մինդ- գատ Զ. Եւպատորը, նրա աներն և դաշնակիցը: Պոնտոսի թագաւորութիւնն եւ, ինչպէս և փոքր-ասիական բազմա- թիւ մանր տէրութիւնները, ճանաչում էին Հռոմի գերիշ- խանութիւնը: Մինդգատը Տիգրանի հետ դաշն կապելով, սկսեց իր տէրութեան սահմանները ընդարձակել: Նա ձուլեց իր թագաւորութեան հետ Փոքր Հայաստանը, նուաճեց Կող- քիսը (այժմեան Մինգրելիան և Իմերեթը) և Սև ծովի հիւ- սիսային եզերքը մինչև Ղրիմի կամ Տաւրիկեան թերա- կղզին ներփակաբար: Այս կողմերում յոյները առևտրա- կան նպատակով վազուց գաղութներ էին հաստատել, որոնք հետզհետէ մեծանալով հարուստ քաղաքներ էին դարձել: Նշանաւոր էին մանաւանդ Պանտիկապէոն (այժմ Կերչ) և Խերսոնէզոս (այժմեան Սևաստոպոլից ոչ հեռու) քաղաք- ները: Սրանք բոլորը բազկատարած ընդունեցին Պոնտոսի թագաւորին, որը նրանց ազատեց աւաղակաբարոյ սկիւ- թացիներից, որոնք իրենց այս կողմերի տէրերն էին հա- մարում և յոյն գաղութներին հարստահարում ու նրանցից մեծ հարկեր և տուրքեր էին վերցնում: Այսպիսով Մինդ- գատը նուաճեց իր համար մի նոր թագաւորութիւն, որը բռնում էր Սև ծովի հիւսիս արեւելեան ափերն և Տաւրի- կեան թերակղզին (Ղրիմը), ծովով միացած էր Պոնտոսի

հետ և նրան տարեկան վճարում էր 200 տաղանդ (մօտ 400,000 ռ.) և 180,000 զրիւ հացահատիկ: Այնուհետև Մինդգատը խորամանկութեամբ նուաճեց նաև Պաֆլագո- նիան, որի հիւսիսային եզերքն իր Սինոպ մայրաքաղա- քով վաղուց իր ձեռքում էր գտնուում և Կապադովկիան: Որպէս զի կարողանայ այս բոլոր նուաճումներն իր ձեռ- քում պահել, նա կազմեց մի հզօր նաւատորմիդ, որն իշխում էր ամբողջ Սև ծովի վերայ: Նախկին Պոնտոսի փոքրիկ թագաւորութիւնն այժմ մեծ պետութիւն էր դարձել, հարկաւոր գէպքում իր թշնամիների գէպ կարող էր հեշ- տութեամբ 100,000 զօրք հանել և ունէր Տիգրանի նման հզօր դաշնակից:

Հռոմի մի- Սրդէն յիշեց, որ Հռոմը իրեն վա- ջաւտրիւնը: զուց Փոքր Ասիայի գերիշխանն էր համա- րում: Կարծես հռոմէական ծերակոյտը քնած էր վերոյի- շեալ գէպքերի ժամանակ: Այդ քնից նա վերջապէս զարթ- նեց, երբ լսեց, որ Պոնտոսի թագաւորը Կապադովկիան գրաւել է և երբ նոյն թագաւորի գէպ օգնութիւն ինդրե- ցին Ղրիմի թերակղզուց վոնտուած սկիւթական իշխան- ները: Ծերակոյտը վճռեց, որ Մինդգատը սկիւթական իշխան- ներին պէտք է հաստատէ իրենց տեղերում, — մի վճիռ, որ հնչում էր իբրև հեգնանք Հռոմի աւանդական քաղա- քականութեան գէպ, որը շարունակ պաշտպանել էր հել- լէններին բարբարոսների գէպ. իսկ այժմ Հռոմը հելլէննե- րին բարբարոսների ձեռքն էր տալիս: Նոյն ծերակոյտը վճռեց, որ Պաֆլագոնիան և Կապադովկիան պէտք է անկախ մնան: Այս բոլորն ի կատար ածելու համար հրաման ու- դարկուեց Կիլիկիայի հռոմէական կուսակալ Լուկիոս Սուլ- լային: Մինդգատը հարկադրուած էր տեղի տալ, սակայն ցանկանալով Կապադովկիայի գրաւումը Սուլլայի ձեռքով խափանել, ինդրեց իր դաշնակցին, Տիգրան հայոց թա- գաւորին, որը Հռոմի նկատմամբ միանգամայն անկախ գիւրք էր բռնում, զօրք զրկել Կապադովկիա և գրաւել այդ

երկիրը (վերև, եր. 65 — 66): Բիթլինիայի նկատմամբ
ևս հռոմէական ծերակոյտի վճիռը մնաց ձայն բարբառոյ
յանապատի: Երբ այս երկրի Նիկոմեդէս Բ. Թագաւորը
մեռաւ, նրան յաջորդեց իր աւագ որդին Նիկոմեդէս Գ.
Սակայն սրա կրտսեր եղբայր Սոկրատէսը Միհրդատից
զօրք ստանալով, յարձակուեց իր եղբօր վերայ և յա-
փըշտակեց նրա գահը: Պարզ էր, որ այս բոլորն անել
տուողը Միհրդատն էր: Իսկ Ղրիմում և նրա հարեան եր-
կիրներում Պոնտոսի Թագաւորը ոչ միայն հռոմէական ծե-
րակոյտի պատուէրներն անկատար թողեց, այլև շարունա-
կում էր նորանոր նուաճումներ անել:

Երբ Արիսթարզանէս և Նիկոմեդէս հալածական թա-
գաւորները ղիմեցին Հռոմ և օգնութիւն խնդրեցին, Հռո-
մի ծերակոյտը Փոքր Ասիա ուղարկեց Մանիոս Աքվիլիոս
զօրավարին, որը վերոյիշեալ Թագաւորներին վերահաստա-
տեց իրենց երեւուն գահերի վերայ (90 թ.): Սորամանկ
Միհրդատը չընդդիմացաւ Աքվիլիոսին. նա նոյն իսկ հրա-
մայեց վերոյիշեալ Սոկրատիսին, Բիթլինիայի գահի թեկ-
նածուին, սպանել:

Աքվիլիոսի պո- Վերոյիշեալ խուսափողական քաղաքա-
վօկացիան: կանութեանը Միհրդատը հետևում էր, գի-
տենալով Հռոմի, իր գերիշխանի, դժուար կացութիւնը:
Աքվիլիոսը տեսնում էր Պոնտոսի զօրանալը, ուզում էր
դրա առաջն առնել, բայց հռոմէական ծերակոյտը զգու-
շանում էր պատերազմից: Այն ժամանակ հռոմայեցին ղի-
մեց պոօվօկացիայի: Նիկոմեդէս Բիթլինիայի Թագաւորը
նրան մեծ գումարներ էր խոստացել, որ չէր կարողա-
նում վճարել: Աքվիլիոսը դրդեց նրան յարձակուել Պոն-
տոսի Թագաւորութեան վերայ և նրան աւարի առնել:
Եւ ահա առանց որևէ պատճառի բիթլինական նաւերը
փակեցին պոնտական նաւատորմի առաջ Բոսփորը, իսկ
զօրքերը յարձակուելով Պոնտոսի վերայ, սկսեցին երկիրն
աւերել և կողոպտել: Պոնտոսի Թագաւորի համար հասաւ

ճգնաժամը: Դժբախտ կարքեդոնի կործանումից մինչև այդ
ժամանակները հազիւ մի-երկու տասնեակ տարիներ էր
անցել և Միհրդատը դիտակցում էր, թէ Հռոմի դէմ
սկսած պատերազմն ինչնով պիտի վերջանար: Այս պատ-
ճառով էլ նա միշտ զգուշացել էր այդ ճակատագրա-
կան պատերազմից: Այժմ, երբ ճգնաժամն արդէն հասել
էր, նա փոխանակ իր զէնքն իսկոյն Նիկոմեդի հրոսա-
խմբի դէմ դարձնելու և իր դատը Հռոմ ծերակոյտի ա-
ռաջ տանելու, ղիմեց Աքվիլիոսին և խնդրեց կամ Բի-
թլինիայի Թագաւորին զսպել և կամ իրեն ինքնապաշտ-
պանութեան իրաւունք տալ: Սակայն պոօվօկատօրը պա-
տասխանեց, որ Միհրդատն ոչ մի դէպքում զէնք չպէտք
է վերցնէ Բիթլինիայի Թագաւորի դէմ: Այս մի սոսկալի
հեգնանք էր իրաւունքի և արդարութեան դէմ: Պոնտոսի
Թագաւորը բացականչեց իր շրջապատողների առաջ. «Մի-
թէ չպէտք է պաշտպանուենք աւագակից, թէկուզ հէնց
յաղթուելու լինենք» և հրամայեց իր զօրքն և նաւատոր-
միղը պատերազմական ոտքի վերայ դնել (89 թ.):

Առաջին Միհրդատի առաջին գործն եղաւ
պատերազմը հայեի օգ- իր դաշինքը Տիգրանի հետ աւելի ևս
նուրբամբ (88—84 թ.) ամրապնդել: Պոնտոսի և հայոց թա-
գաւորների մէջ արդէն համաձայնութիւն էր կայացել
(վերև, եր. 66), որի զօրութեամբ վերջինս պարտաւորուել էր
յարձակուել հռոմէական Փոքր Ասիայի վերայ և նուաճել
նրա գաւառները: Պարթևներն այս պատերազմի ժամա-
նակ մնացին չէզոք, չմիացան հռոմայեցիների հետ և
չյարձակուեցան հայոց Թագաւորութեան վերայ, որովհե-
տե նրանց մէջ ներքին խռովութիւններ էին տիրում:
Միհրդատն աշխատեց Հռոմի բոլոր թշնամիների հետ միա
նալ: Հռոմի դրութիւնն էլ այդ ժամանակ շատ ծանր էր,
որովհետեւ այնտեղ ծագել էին յեղափոխութիւն և քաղա-
քացիական պատերազմ: Միհրդատը հռոմայեցիների դէմ

Թէ ծովի և Թէ ցամաքի վերայ ահագին զօրք հանեց։ Որովհետև Փոքր Ասիայում գտնուող հռոմէական զօրքերը Հնչին էին, Միհրդատը հեշտութեամբ նուաճեց այս երկիրը, մանաւանդ որ ազգաբնակիւթիւնը, Թէ հելլէններն և Թէ ասիացիները ամեն տեղ նրան ընդունում էր ցնծագին կեցցէներով իբրև ազատարար աստծու ամբարտաւան Հռոմի ծանր լծից։ Աքվիլիոսը, այս պատերազմը գրգռողը, պոնտացիներից սարսափելի ջարդ կրելով, փախաւ, թողնելով իր բանակը նրանց ձեռքում։ Շատ քաղաքներ ցանկանալով Միհրդատին հաճոյանալ, բռնում կապոտում էին հռոմէացի սպաներին և նրա ձեռքն էին տալիս։ Նոյնն արաւ նաև Լեսբոս կղզու Միլտիլէնէ քաղաքը, որը վերոյիշեալ Աքվիլիոսին կապած տուեց Միհրդատի ձեռքը։ Սա սոսկալի վրէժ լուծեց նրանից՝ հրամայեց պոսփոկատօրին շրջեցնել ամբողջ Փոքր Ասիան երբեմն ոտով, մի հսկայ հեծեալի ձիուց կապած, երբեմն էլ իշի վերայ նստացրած, որի ժամանակ նա հարկադրուած էր իր անունը շարունակ կանչել։ Եւ երբ անարգուած հռոմայեցի զօրավարը հասաւ Պերգամոն քաղաքը, ուր գտնուում էր Միհրդատը, սա հրամայեց նրա որկորն հալած ոտի ածել «ազահութիւնը յագեցնելու համար»։ Եփեսոսից Պոնտոսի թագաւորը հրաման արձակեց միլենոյն օրը ամեն տեղ սրի քաշել բոլոր հռոմայեցիներին, խտրութիւն չանելով ոչ սեռի, ոչ հասակի և ոչ էլ դասակարգի մէջ և նրանց կայքերի կէսը արքունիք գրաւել, կէսն էլ նրանց սպանիչներին յատկացնել։ Թագաւորի այս սոսկալի և անմիտ հրամանը կատարուեց և մի օրուայ մէջ սպանուեցին 80,000, ըստ ուրիշների 150,000 հռոմայեցիներ։ Այնուհետև Պոնտոսի թագաւորի զօրքերն անցան Թրակիա, Մակեդոնիա և Յունաստան և նուաճեցին այս երկիրները։ Սրանց ազգաբնակիւթիւնն ևս նրան զիմաւորեցին իբրև

ազատարարի հռոմէական լծից։ Պոնտական նաւատորմիղը եզէեան ծովին ևս տիրեց։

Այդ ժամանակ հռոմէական կառավարութիւնը շատ ծանր կացութեան մէջ էր գտնուում։ Մայրաքաղաքում յեղափոխութիւն, իսկ գաւառներում ապստամբութիւն էր տիրում, առւտուրն ընկել էր և դրամական մեծ ճգնաժամ էր առաջացել։ Այս ծանր հանգամանքներում կորնելիոս Սուլլա զօրավարը 30,000 զօրքով Յունաստան անցաւ Միհրդատի դէմ։ Նա Յունաստանը պոնտացիներից մաքրեց և Աթէնք մայրաքաղաքն էլ երկար պաշարումից յետոյ վերցրեց։ Սակայն Սուլլայի հակառակորդ գեմուկրատիան նրան պաշտօնանկ արաւ և նրա տեղ զօրավար ընտրեց Ֆլակուսին, որն 2 լեգէոններով Յունաստան եկաւ։ Միհրդատը փոխանակ իր Արքեղայոս յոյն զօրավարի իմաստուն խորհրդին հետեւելու և սպասելու, որպէսզի երկու հակառակ հռոմէական զօրավարները միմեանց ջարդեն, հրամայեց իսկոյն յարձակուել Սուլլայի վերայ։ Պոնտական հսկայական զօրաբանակը, անզօր գտնուելով հռոմէական լեգէոնների գերազանց տակտիկայի (գործելակերպի) առաջ, սոսկալի պարտութիւն կրեց։ Պարտութիւն կրեց նաև մի երկրորդ, նոյնպէս հսկայական զօրաբանակ, որ Միհրդատը Փոքր Ասիայում կազմելով նոյն Սուլլայի դէմ Յունաստան ուղարկեց։ Սուլլայի հրամանով Լուկիոս Լուկուլլոս սպան արդէն նաւեր էր պատրաստել և հռոմայեցիները պատրաստուում էին Յունաստանից Ասիա անցնել։

Շնորհիւ իր ճնշումների և անդթութիւնների Պոնտոսի թագաւորն իր դէմ զինել էր յիշուած երկրի ազգաբնակիւթիւնը։ Նա նորանուած երկիրների վերայ շատ ծանր հարկեր էր դնում և իր հրամանին ընդդիմացողներից սոսկալի վրէժ էր առնում, նրանց կոտորելով կամ գերելով։ Շնորհիւ այս ան ու սարսափի բեժիմի բազմաթիւ փոքր-ա-

սիական քաղաքներ ապստամբուեցան նրանից և անցան հռոմայեցիների կողմը: Պոնտոսի թագաւորն այժմ հարկադրուած էր հաշտութիւն խնդրել Սուլլայից և ստացաւ այդ հաշտութիւնը համեմատաբար պատւաւոր պայմաններով: Սուլլան թողեց նրան նրա թագաւորութիւնը, սակայն նրանից խլեց նրա բոլոր փոքր-ասիական նուաճումները, ռազմանաւերն և ստացաւ մօտ 6,000,000 ռ. պատերազմական տուգանք (84 թ. Ք. ա.):

Այս խաղաղութեան ժամանակ Տիգրան հայոց թագաւորի մասին, որը նոյնպէս մասնակցել էր պատերազմին, ոչ մի խօսք չեղաւ: Սուլլայի կուսակիցների դրութիւնը Հռոմում շատ ծանր էր և նա չէր կարող հայոց թագաւորի մասին հարց յարուցանելով բանակցութիւնները բարդել:

Երկրորդ Միհրդատեան Առաջին Միհրդատեան պատերազմին այս պատերազմը ժամանակ Տիգրանը եփրատի արեւելքում (75/4—67/6): մտեան կողմերում մեծ նուաճումներ էր արել: Նա նուաճել էր Կապադովկիան, Ասորիքը, Կոմագենն և դաշտային Կիլիկիան և իր գլխին էր դրել Սելևկեանների թագը: Հռոմէական ծերակոյտը չճանաչեց Տիգրանին իբրեւ տէր այս երկիրների, սակայն չհամարձակուեց նաև նրան պատերազմ յայտնել: Նոյն ծերակոյտը 78 թ. հարկադրուած Կիլիկիա գօրք ուղարկեց և պատերազմ սկսեց ծովահէնների դէմ: Սակայն այս անգամ ևս նա զգուշացաւ հայոց թագաւորին պատերազմ յայտնելուց: Այսպէս շարունակուում էր անորոշ դրութիւնն և իւրաքանչիւր բողոք կարող էր պատերազմ ծագել հռոմայեցիների և հայերի մէջ:

Անորոշ դրութիւն էր ստեղծուել նաև հռոմայեցիների և Պոնտոսի թագաւորի միջև, որն 84 թ. խաղաղութեան ժամանակ իր ձեռքում պահել էր ոչ միայն իր պապենական թագաւորութիւն Պոնտոսը, այլ և նորանուաճ

Սև ծովի ափերն և Ղրիմը: Լոկ անունով գերիշխանի և վասալի մէջ փոխադարձ կասկած ու անվստահութիւն էր տիրում և թէ հռոմայեցիներն էին իրենց ասիական գօրքերը գօրեղացնում, թէ Միհրդատն էր մարդում իր գօրքերն ըստ հռոմէական տարազի այն բազմաթիւ հռոմայեցիների ձեռքով, որոնք իբրեւ հակառակորդներ Սուլլայի ապակիները էին նրան և ապրում էին նրա արքունիքում: Միհրդատը փոխանակ սպասելու, որ հռոմայեցիներն իրեն պատերազմ յայտնեն, ինքը նրանց պատերազմ յայտնեց (ձմեռ 75/74 թ.): Ի հարկէ նա առաջարկեց իր փեսայ Տիգրան հայոց թագաւորին իր հետ միանալ ընդհանուր թշնամու դէմ: «Կարճատես մարդը մերժեց իր աներոջ առաջարկութիւնը», ասում է Հռոմի պատմագիր Մոմզէնը: Բայց հազիւ թէ հիմնաւոր լինի այս կշտամբանքը: Տիգրանի յետև կանգնած էր նրա յիսերիմ թշնամին, պարթևաց թագաւորը, որն ոչ իր Մարաստան, Ասորպատական, Ասորեստան, Աղիարեն և Միջագետք պտղաբեր նահանգներն էր մոռացել և ոչ էլ այն ծանր վիրաւորանքը, որ հայոց թագաւորն հասցրել էր նրան, զրկելով նրան «թագաւորների թագաւոր» տիտղոսից: Այս թագաւորն այժմ ատամները կրճտեցնում էր և պատրաստ էր հնարաւոր դէպքում իր սուրը մերկացնել հայոց թագաւորի դէմ: Ոչ մի կասկած չկար, որ հռոմէա-հայկական պատերազմի ժամանակ պարթևաց թագաւորը պէտք է յարձակուէր Տիգրանի վերայ, ինչպէս այդ եղաւ յետոյ Լուկուլլի արշաւանքի ժամանակ: Իսկ հայոց թագաւորը ոչ մի շանս չուներ, որ Միհրդատի հետ միանալով, պիտի կարողանար միաժամանակ յաջող պատերազմ մղել հռոմայեցիների և պարթևների դէմ: Այս պատճառաւ և նա խոհեմութիւն համարեց հռոմէա-պոնտական այս երկրորդ պատերազմի ժամանակ ևս պաշտօնապէս չմիանալ Միհրդատի հետ, այլ միայն իր զաշնակցին և աներոջը

լուեկայն ըստ չափու կարողութեան օգնելով սպասել այս նոր պատերազմի վախճանին:

Երկրորդ Միհրդատեան պատերազմի ժամանակ հռոմէական զօրաբանակի վերին հրամանատարն էր հանձարեղ Լուկիոս Լուկուլլոս կոնսուլը, որն արշաւեց Միհրդատի դէմ 30,000 հետեակ և 1,000 հեծեալ զօրքով: Միհրդատը հռոմայեցիները դէմ հանեց 100,000-ից աւելի հետեակ և 16,000 հեծեալզօրք, այլև հզօր նաւատորմիդ ու իր ցամաքային և ծովային զօրքերի վերին հրամանատարութիւնն անձամբ յանձն առաւ: Ստկայն իբրև ռազմավար նա չուներ ոչ Լուկուլլի հանձարն և ոչ էլ հմտութիւնը: Թէպէտ և պոնտացիները Բիթլինիան նուաճեցին և հռոմայեցիներին Քաղքեդոնում պաշարելով, նրանց մեծ ջարդ տուին, այրեցին նրանց նաւատորմիդն և պաշարեցին Կիւսիկոս քաղաքը, սակայն Լուկուլլը պոնտական զօրքի քամակն ընկնելով և նրա պաշարը կտրելով հարկադրեց Միհրդատին դէպի Պոնտոս յետ նահանջել: Նահանջի ժամանակ Լուկուլլը գրեթէ ոչնչացրեց Միհրդատի զօրքը: Թէպէտ և Միհրդատին յաջողուեց մի նոր պատկառելի զօրաբանակ կազմել, սակայն իր պապենական թագաւորութեան մէջ կրկին և վերջնականապէս յաղթուելով Լուկուլլից, հարկադրուեց թողնել իր թագաւորութիւնն ու փախչել իր աներոջ, Տիգրան հայոց թագաւորի երկիրը (72 թւականի վերջը): Լուկուլլը գրաւեց Պոնտոսն և դարձրեց հռոմէական նահանգ: Իսկ Միհրդատի հաւաքատ որդին Մաքարէսը, որին նա Սև ծովի ափերում իր նուաճած երկիրներին և Ղրիմի վերայ կուսակալ էր կարգել, ապստամբուեց իր հօր դէմ և միանալով հռոմայեցիներին հետ, նրանց հետ դաշինք կապեց:

Հռոմեա-հայկական թէ ինչպիսի մանուկ էր Պոնտոսի պատերազմի սկիզբը: հզօր թագաւորն իբրև քաղաքագէտ, այդ երևում է նրանից, որ նա իր թագաւորութիւնը կորցնելուց յետոյ դարձաւ պարթևներին և խնդրում էր նր-

քանց հռոմայեցիներին պատերազմ յայտնել և իր թագաւորութիւնն իր համար վերանուաճել: Ի հարկէ նա դարձաւ նոյն խնդրով և իր աներոջը, Տիգրան հայոց թագաւորին: Սակայն սա ունէր իր առանձին շահերն ու քաղաքականութիւնն և ոչ տրամադիր էր Միհրդատի կործանուած թագաւորութիւնը վերանուաճելու համար հռոմայեցիներին պատերազմ յայտնելու, և ոչ էլ հռոմայեցիները կողմից պատերազմ էր սպասում, հաստատ զիտենալով, որ Լուկուլլը հռոմէական ծերակոյտից ուղարկուած է Միհրդատի և ոչ թէ իր դէմ: Բայց երբ իր հալածական աներ Միհրդատը ապաւինուեց իր երկիրը, Տիգրանը հրամայեց նրան արքայական պատիւներով ընդունել: Այս պատիւները վերաբերում էին անձնականապէս Միհրդատին իբրև իր դժբախտ աներոջն և բարեկամին, բայց ոչ իբրև հռոմայեցիների թշնամուն: Թագաւորների թագաւորը ըզգուշացաւ որևէ ցոյցից հռոմայեցիների դէմ, որ կարող էր նրանց զրգուել և պատերազմի առիթ տալ: Մինչև անգամ նա սեղանի չհրաւիրեց իր աներոջն, այլ նրան պահպան գունդ տալով, հրամայեց մնալ իր պետութեան արևմտեան սահմանի վերայ գտնուող ամրոցներից մէկում և սպասել գործերի ընթացքին:

Տիգրանը քաջ գիտակցելով, հայ-հռոմէական պատերազմի ժամանակ անպայման պարթևներն, իր ոխերիմ թշնամիներն ևս պիտի իր դէմ զէնք վերցնէին, ամեն կերպ զգուշանում էր այս ճակատագրական պատերազմից: Նոյն խնդրում նոյն զգուշութիւնը ցոյց էր տալիս Հռոմի ծերակոյտն ևս: 72 թ. Աստիոքոս Ասիացի կոչուած Սելևկեանն իր եղբօր հետ գնաց Հռոմ և բողոքելով հայոց թագաւորի դէմ, խնդրեց իրենց հաստատել իրենց նախնիների գահի վերայ: Թէպէտև հռոմէական ծերակոյտը յայտարարեց, որ նրանց ճանաչում է իբրև օրինաւոր ժառանգներ Ասորիքի գահի, սակայն չհամարձակուեց հայոց

Թագաւորին պատերազմ յայտնել և նրանց գէնքի գօրու-
թեամբ Անտիոքի գահը բարձրացնել: Բայց և այնպէս հայ
հռոմէական յարաբերութիւնները մնացին խիստ լարուած.
հայոց Թագաւորը հակառակ Հռոմի նուաճել էր Ասորիքը,
գաշտային Կիրիկիան և Կոմագենը, հաստատուել էր Միջ-
երկրական ծովի ափին և լուրջ վտանգ էր սպառնում թէ
Կապադովկիային և թէ Պաղեստինէին, որոնք ճանաչում
էին Հռոմի գերիշխանութիւնը: Երկու մեծ պետութիւննե-
րի մէջ վաղուց պատերազմի առիթ կար, սակայն երկուսն
էլ պատերազմից զգուշանում էին:

Եւ ահա Լուկուլլը, Միհրդատի Թագաւորութիւնը գը-
րաւորը, հռոմէական կապիտալիստների և վաշխառուների
բարեկամը, արաւ այն, ինչ որ չէր ուզում անել Հռոմի
ծերակոյտը: Ազահութիւնից և փառամոլութիւնից զըր-
գուած նա վճռեց հայոց Թագաւորին պատերազմ յայտնել:
Բայց որովհետեւ Հռոմի ծերակոյտից դրա համար լիազօ-
րութիւն չունէր, նա վճռեց խորամանկութեամբ, պոնտա-
կան պատերազմի աղերսով իր նախառակին հասնել: Նա
Տիգրանի մօտ ուղարկեց իր սպային, Ապիոս Կլաւդիոսին
և պահանջեց Միհրդատին իր ձեռքը տալ: Սա Լուկուլ-
լից գաղտնի հրահանգ ունէր Տիգրանի հպատակ ազգերին
գրգռել նրա դէմ, նրանց օգնութիւն խոստանալ և աշխա-
տել ապստամբեցնել նրանց իրենց գերիշխանի դէմ: Ուստի նա
հասնելով Հայաստան, սկսեց շրջել մի տեղից միւս տեղ,
իբրեւ թէ Տիգրանին է որոնում: Սակայն խորամանկ հռո-
մայեցին գրանով լրտեսում էր Տիգրանի երկիրը: Կոր-
դուաց Զարքինոս իշխանն և ուրիշները գաղտնի կերպով
միացան հռոմայեցիների հետ և խոստացան հայոց թա-
գաւորից ապստամբուել: Սրանից յետոյ նա անցաւ Եփ-
րատի աջ կողմն և շրջելով Ասորիքում աշխատում էր այս
երկրի քաղաքներն ապստամբեցնել Տիգրանի դէմ: Ապա,
երբ լրտեսութեան դերը կատարել վերջացրել էր, գնաց

Անտիոք և այստեղ այնպէս ձևացաւ, իբր թէ առաջին
անգամն է լսում, որ Տիգրանը Հայաստանից դուրս Փիւ-
նիկէումն է գտնուում: Եւ զարմանալին այն է, որ մինչ-
դեռ հայերը նրա շրջագայութիւնների ժամանակ կարծում
էին, թէ նա խաբուած է, հռոմայեցին ինքը նրանց խաբեց և
նրանց երկիրը լրտեսեց: Տիգրանն այդ ժամանակ Փիւնի-
կէումն էր և աշխատում էր Պաղոմայիդ քաղաքն առնել,
ուր ամրացած էր Սելինէ Թագուհին: Քաղաքն անձեռ-
տուր եղաւ, Թագուհին յաղթողի ձեռքը գերի ընկաւ, որից
յետոյ վերջինս Անտիոք վերադարձաւ: Այստեղ նրան ներ-
կայացաւ Ապիոս Կլաւդիոսն, յանձնեց Լուկուլլի զըրու-
թիւնն և պահանջեց կտրական կերպով Միհրդատին հռո-
մայեցիների ձեռքը տալ: Քսանուհինգ տարի Տիգրանը
կրում էր արքայական թագն և ոչ ոք չէր համարձակուել
նրանից այսպիսի յանդուգն եղանակով այսպիսի պահանջ
անելու: Հռոմայեցի զօրավարն իր գրութեան մէջ նոյն
խիղ բաց էր թողել նրա տիտղոսն և նրան չէր անուանել
«Թագաւորներ թագաւոր», այլ լոկ Թագաւոր: Չնայելով
այս բոլոր վիրաւորանքներին, Տիգրանը հռոմայեցի պատ-
գամաւորին մեծ պատիւներով ընդունեց, տալով նրան մեծա-
զին ընծաներ, որոնցից սակայն հռոմայեցին հրաժարուեց:

Գալով Լուկուլլի պահանջին, Տիգրանը պատասխա-
նեց, որ ինքը մտադիր չէ Միհրդատին հռոմայեցիների դէմ
օգնելու, սակայն իր պատւի դէմ է համարում իր անե-
րոջը մատնելու հռոմայեցիների ձեռքը: Չմոռացաւ նա
Լուկուլլի իրեն հասցրած վիրաւորանքն և իր պատասխա-
նի մէջ բաց թողեց նրա imperator (խմբերատօր) տիտ-
ղոսը (ձմեռ 71/70 թ.):

Սխալուած չենք լինի ասելու, որ 71/70 թ. ձմեռն
հայոց արքունիքը մտածում էր ճիշտ այնպէս, ինչպէս
ուսուաց արքունիքը 1904/5 թ. ձմեռը: Տիգրանը փոխա-
նակ իսկոյն և եթ պատերազմի պատրաստութիւն տեսնե-

լու, մնաց Անտիոքում, ուր տօնում էր իր յաղթութիւնն և բա-
ւականացաւ արեան վրէժ առնելով իր այն իշխաններից,
որոնք իրեն դաւաճանել և հռոմայեցիների կողմն էին
անցել: Կորդուաց իշխանին նրա ընտանիքի հետ սրի քա-
շել տուեց: Ինչպէս երևում է, Տիգրանը Լուկուլլի լիազո-
րութիւնների հետ լաւ ծանօթ լինելով, ոչ մի կերպ չէր
կարողանում ենթադրել, որ նա առանց հռոմէական ծե-
րակոյտի կը համարձակուէր անձնակամօրէն իրեն պատե-
րազմ յայտնելու: Սակայն նա սխալուած էր: Լուկուլլն
Պոնտոսի վերջին ամբուլութիւնները առնելով, 70/69 թ.
ձմեռը գաղտնաբար հայոց դէմ պատերազմի պատրաս-
տութիւններ էր տեսնում:

Լուկուլլն անց- Հռոմայեցի զօրավարը, չնայելով որ
նում է եփրասն ծերակոյտից հայ պատերազմի համար լիա-
ել Տիգրիսը: զօրութիւն չունէր և նոյնիսկ իր զօրքն իր
վերայ վստահ չէր, այնուամենայնիւ 69 թւականի գար-
նանը մօտ 20,000 ընտիր և ճակատամարտներում փոր-
ձուած զօրքով Մելիտինէի մօտ անցաւ Եփրատն այն նա-
ւերով, որ նրա համար ձմեռը գաղտնաբար պատրաստել
էր Կապադովկիայի թագաւորը: Շարունակելով իր արշա-
ւանքը, Ամիգ (Դիարբէքիւր) քաղաքի մօտ նա անցաւ
Տիգրիս գետն ևս և առաջացաւ դէմ այն մեծ ճանապար-
հը, որը Տիգրանի նորահիմն մայրաքաղաքը, Տիգրանա-
կերտը, միացնում էր նրա առաջին մայրաքաղաքի, Ար-
տաշատի հետ: Տիգրանն արդէն համոզուել էր, որ հռո-
մէական զօրավարն իրեն պատերազմ էր ուզում յայտնել
և զայրացած նրա վարմունքից, ուզում էր պատերազմ
յայտնել հռոմայեցիներին և այժմ կազմում էր այդ պա-
տերազմի ծրագիրը: Նա ծրագրում էր Կիլիկիայից և Լիւ-
կանիայից յարձակուել հռոմէական Փոքր Ասիայի վերայ
և կարծում էր, որ հռոմայեցիները կամ պիտի հարկա-
զրուեն թողնելու Փոքր Ասիան և կամ միայն նրա արև-

մտեան ափում, մօտաւորապէս Եփեսոսի մօտ պիտի կա-
րողանան վճռական ճակատամարտ տալ—անձնավստահու-
թեան մի դասական օրինակ, որը մեզ յիշեցնում է Կուրո-
պատիկն ուսու զօրավարին, որը ուսու-ճապոնական պա-
տերազմից առաջ ծրագիր էր կազմում, թէ ինչպէս Ման-
ջուրիայում ճապոնացիներին յաղթելուց յետոյ պիտի անց-
նէր Ճապոնիա և գերէր միկադօին (ճապոնական կայսերը):

Միևնոյն ժամանակ նա Միհրդատին 20 ամսեայ
պատաւոր բանտարկութիւնից յետոյ կանչեց իր մօտ,
ընդունեց մեծ պատիւներով և նրան տուեց 10,000 հե-
ծելագօրք, որպէսզի մտնի Պոնտոս և իր թագաւորութիւ-
նը վերանուաճէ հռոմայեցիների ձեռքից: Ահա այդ ժա-
մանակ հասաւ սուրհանդակը, որը գուժեց, թէ Լուկուլլն
արդէն անցել է Տիգրիսն և սպառնում է գրաւելու երկու
մայրաքաղաքները միմեանց հետ միացնող մեծ ճանապարհը:

Կուլլ հայ եւ հու- Այս անակնկալ դժբախտութիւնից
մեական առաջա- յանկարծակիի եկած, Տիգրանը, որը
պահ զօրքերի մեջ: դեռ պատերազմի պատրաստութիւն չէր
տեսել, խոյս տուեց դէպի իր լայնածաւալ պետութեան
ներսը, Մշու դաշտը, հռոմայեցիների դէմ զօրք հաւաքե-
լու: Միևնոյն ժամանակ արաւ այն, ինչ որ հնարաւոր էր
անել հռոմայեցիների առաջխաղացութիւնը խափանելու
համար: Նա իր զօրավար Միհրբարգանին մօտ 3,000 հեծեալ
և հետեակ զօրք տալով, հրամայեց յարձակուել հռոմայեցի-
ների վերայ: Միհրբարգանը արշաւելիս պատահեց հռո-
մայեցիների յառաջապահ գնդին, որը բաղկացած էր
1,600 հեծելագօրքից և նոյնքան էլ հետեակ զօրից: Սե-
քստիլէս զօրավարի առաջնորդութեամբ: Միհրբարգանը
յարձակուեց հռոմէական գնդի վերայ, սակայն յաղթուեց
և մեռաւ հերոսական մահով, իսկ նրա զօրքը ցրուեց:
Յաղթուեցան նաև արաքները, որոնց Տիգրանը նոյնպէս

հրաման էր տուել յարձակուելու հռոմայեցիներին վերայ, թշնամու գերակշիռ ոյժերից (69 թ. ամառը):

Ինքը գնալով իր պետութեան ներսը, արքայից արքան Տիգրանակերտի պաշտպանութիւնը յանձնել էր իր քաջ զօրավար Մանկէտսին, իսկ Մծբնինը՝ իր հարազատ եղբորը, քաջ Գուրասին:

Տիգրանակերտից Լուկուլլը գրաւեց Տիգրանակերտից Արտաշատ քաղաքը: Բանի նորահիմն մայրաքաղաքը (69 թ. սեպտեմբեր): Մայրաքաղաքում պաշարուած մնացին նաև Տիգրանի կանայք և զանձերը: Հռոմայեցիներն առանց կռիւի տիրեցին մայրաքաղաքի շրջակայքին, սակայն մայրաքաղաքն իր միջնաբերդով անառիկ էր երևում: Բերդապահ զօրքը բաղկացած էր յոյն և կիլիկեցի վարձկաններից և քաջ Մանկէտսի առաջնորդութեամբ նետերի անվերջ տարափ էր թափում հռոմայեցիների վերայ: Հայերը թշնամու պաշարման մեքենաների վերայ եռացրած նաւթածելով ոչնչացրին նրանց: Հռոմայեցիները խրամներ էին փորում և աշխատում էին քաղաքին մօտենալ, բայց այդ բոլորը զուր անցաւ: Տիգրանակերտը մնաց անվտանգ, մինչև որ հոկտեմբերի 5-ին նրա պահապանները քաղաքի պարիսպներից նկատեցին Տիգրանի ազատարար զօրաբանակը: Հայերը քաջալերուեցին և սաստկացրին նետերի տարափը:

Տիգրանն այդ զօրաբանակը կազմել էր Մշու գաշտում: Նա այստեղից կոչ արաւ իր հպատակ ազգերին և այդ կոչն արձագանգ գտաւ նրանց սրտերում: Օգնական զօրքերով նրա զօրաբանակն եկան Աստղատականի և Ագիաբենի թագաւորները, աղանները, վրացիներն և Բաբելոնի արաբները: Միհրդատը նոյնպէս հրաման ստացաւ օգնութեան հասնելու իր հեծեալներով:

Մշու գաշտում հաւաքած զօրքի թիւը հասնում էր

80,000-ի և նրա մէջ միմեանց հանդիպում էին Սև և Կասպից ծովերից մինչև Միջերկրական ծովն և Պարսից ծոցն ապրող բազմաթիւ ազգեր:


Մասնաւոր Հասնելով Տիգրանակերտ, Տիգրանը հրաման յաջողութեամբ 6,000 հոգուց բաղկացած մի հեծելաբան: Գնդի ազատել պաշարուած մայրաքաղաքից իր հարձերին և մեծագին զանձերը: Հեծելագունդն արքայից արքայի այս հրամանը կատարեց մեծ անձնագոհութեամբ: Գիշերով նա ճեղքեց մայրաքաղաքը պաշարող հռոմէական զօրաշղթան, մտաւ մայրաքաղաք և վերջնելով թագաւորի հարձերին և մեծագին զանձերը, նետերի տարափ տեղալով հռոմէական զօրքի վերայ, մեծ արիւնհեղութեամբ ճանապարհ բացեց իր համար և թողնելով բազմաթիւ վիրաւորներ և զերիններ, յաջողութեամբ հասաւ հայոց զօրաբանակը:

Տիգրանակերտի Երբ Միհրդատը Տիգրանակերտի պահակաւաճար շարումը լսեց, Տիգրանի մօտ ուղարկեց իր հոկտեմբերի 6-ին: Տաքսիլէս փորձուած զօրավարին և խորհուրդ տուեց խուսափել գլխաւոր ճակատամարտից: Տաքսիլէսը փորձով գիտէր հռոմէական զօրքի տաքտիկայի (գործելակերպի) անպայման գերազանցութիւնն և խորհուրդ էր տալիս Տիգրանին խուսափել վճռական ճակատամարտից և իր բազմաթիւ հեծելագնդերով շրջապատելով թշնամուն, կտրել նրա պաշարը: Սակայն խելացի բան չէր այն ժամանակ, երբ թշնամին խմբուած ուզում էր ճակատ մտնել, սեպհական բանակը բաժան-բաժան անել, նամանաւանդ, որ սրբան էլ հայոց այրուծին բազմաթիւ լինէր, երբէք նա չէր կարող այնպէս շրջապատել հռոմէական զօրքը, որ նրա պաշարը կտրել կարողանար:

Տիգրանակերտը շինուած էր մի բարձրաւանդակի վերայ, Տիգրիս գետի Նիմփոս (այժմեան Բատման-սու) վտակից գէպի արևմուտք: Այս գետը հոսում էր հիւսի-

սից դէպի հարաւ, սակայն Տիգրանակերտից բաւականա-
չափ հարաւ փոխելով իր ընթացքը, հոսում էր դէպի հա-
րաւ արեւմուտք և ապա դարձեալ ընդունում իր սովորա-
կան հոսանքը: Նիմֆոս գետի ափերը, ուր նա ծուռւմ է
դէպի արեւմուտք, հարթ և մատչելի էին: Այս հարթու-
թիւնը նրա ձախ ափում հետզհետէ բարձրանում և բար-
ձրաւանդակի էր փոխւում: Ահա այս բարձրաւանդակի
այն կողմը, որը դարձած էր դէպի գետը, բռնեց զրահա-
ւոր հայ այրուծին (հեծելագործը), որի թէ՛ զինուորներն
և թէ՛ ձիաները գլխից մինչև ծնկները զրահապատ էին:
Հեծեալ զինուորները զինուած էին երկար նիզակներով,
այնպէս որ նրանք ձիաներով թշնամուն սմբակակոխ էին ա-
նում, իսկ նիզակներով հարուածում: Իսկ այրուծիւց դէպի
ձախ բանակած էր հետևակ զօրքը: Երբ հռոմայեցի զօ-
րավարը տեսաւ Տիգրանի զօրաբանակը, իսկոյն զինուո-
րական խորհուրդ կազմեց: Այս խորհրդում ոմանք նրա
ստորադրեալ բարձրաստիճան զինուորականներից խոր-
հուրդ տուին մայրաքաղաքի պաշարումը թողնել և ամ-
բողջ ոյժերով դառնալ Տիգրանի դէմ. ոմանք էլ խորհուրդ
էին տալիս (երեւի առաջ ունենալով հայոց զօրաբա-
նակի ամուր գիրքը) մնալ Տիգրանակերտի մօտ և նրա պա-
րիսպների առաջ ընդունել ճակատամարտը: Սակայն Լու-
կուլլը գիտենալով, որ Միհրդատը շուտով Տիգրանակերտ
է ժամանելու հայ օգնական հեծելագործով, որով իր դրու-
թիւնն աւելի պիտի դժուարանար, վճռեց կամ յաղթել
և կամ մեռնել: Հոկտեմբերի 5-ին նա թողնելով Տիգրա-
նակերտի առաջ իր Մուռենա զօրավարին 6,000 զօրքով
ինքն իր գլխաւոր ոյժերով՝ 12,000 հետևակ զօրքով,
1,000 ազդեղանքներով և պարսաւորներով և 3,000 հե-
ծելագործով արշաւեց Տիգրանի դէմ: Հասնելով այն տե-
ղը, ուր Նիմֆոս գետը ծուռւմ էր դէպի արեւմուտք, հա-
յոց բանակի դէմ բանակ դրեց: Տիգրանը տեսնելով թշ-

նամինների զօրքի քշութիւնը, բացականչել էր. «Եթէ
սրանք պատգամաւորներ են, շատ շատ են, իսկ եթէ զօրք,



(Lehmann-Haupt, Armenien B. I, S. 403).

շատ քիչ են» և չէր հաւատում, որ հռոմայեցիները կը վստա-
հանային իր հսկայական զօրաբանակի վերայ յարձակուել:

Հոկտեմբերի 6-ին լոյս առաւօտեան հոռմայեցիները սկսեցին շարժուել: Սակայն փոխանակ գետն անցնելու և հայոց բանակի վերայ յարձակուելու, նրանք հայերից երես դարձրին և սկսեցին հեռանալ դէպի արևմուտք: Այս տեսնելով հայերը կարծեցին, թէ հոռմէական զօրավարն իրենց թւական գերազանցութիւնից՝ վախեցած հեռանում է, առանց ճակատ տալու: Տիգրանակերտն ըստ երևութին ազատուած էր և Տիգրանը Տաքսիլէսին ցոյց տալով հեռացող թշնամուն, ասում էր, որ նրա երկիւղն անտեղի էր: Սակայն Տաքսիլէսը թագաւորի ուշադրութիւնը դարձնելով արեգակի ճառագայթներից փայլող թշնամի զօրքի վահանների և սաղաւարտների վերայ (առանց պատերազմի հեռանալու դէպքում վերջիններս պատենի մէջ պիտի լինէին), յայտնեց, որ թշնամին ոչ թէ հեռանում, այլ պատրաստուում է յարձակուելու հայերի վերայ: Այդպէս էլ դուրս եկաւ: Երբ հոռմայեցիներն հասան այն տեղը, ուր Նիմփոսի ափերն անցնելու համար յարմարութիւն էին ներկայացնում, շեղուեցան դէպի աջ և մտան գետ միւս ափն անցնելու և հայերի վերայ յարձակուելու նպատակով:

Այս բանը մեծ իրարանցում առաջացրեց հայոց զօրաբանակում: Տիգրանն ինքը, ինչպէս ասում են, բացաւկանչեց. «Մի՛թէ յիրաւի մեզ վերայ են գալիս»: Այժմ սկսեցին հայերը ճակատել՝ Ատրպատականի թագաւորը, Տիգրանի փեսան, ստանձնեց զօրքի աջ թևի, Ադիաբենի թագաւորը ձախ թևի, իսկ Տիգրանը ինքը կենտրոնի հրամանատարութիւնը: Բայց արդէն ուշ էր: Թշնամի ռազմավարի սուր աչքը նկատել էր, որ հայերը զլացել էին բռնելու մի բլուր, որն իշխում էր նրանց հեծելազօրքի դիրքի վերայ: Լուկուլլն երկու կօհօրտներով (զօրամասեր) շտապեց այս բլուրը բռնելու: Եւ որպէսզի իր այս շարժումը թշնամու աչքից ծածկէ, հրամայեց իր թոյլ հեծելազօրքին յարձուկել հայոց զրահաւոր հեծելազօրքի վերայ:

Ինքը Լուկուլլը արագութեամբ գրաւելով բլուրը, ասաց. «մենք յաղթեցինք» և կայծակի արագութեամբ իր կօհօրտներով յարձակուեց հայոց հեծելազօրքի վերայ յետևից: Զրահապատ ծանր հայ հեծելազօրքը իր յետևից կատարուած այս յարձակմանը չկարողացաւ դիմանալ և անկարգ կերպով փախուստ տալով, ընկաւ իր սեպհական հետևակ զօրքի վերայ և խանգարեց նրա շարքերը, այնպէս որ վերջինս չկարողացաւ նոյնիսկ զէնք բանեցնել հոռմայեցիների դէմ: Լուկուլլը հրաման էր տուել իր զօրքերին իրենց հարուածները ուղղել հայ զրահակիրների մերկ ազդրներին և սրունքներին: Ահագին զօրաբանակը, որը հոռմայեցիների յարձակումից առաջ զեռ չէր կարողացել կանոնաւոր կերպով ճակատել, այժմ շփոթուած խառնիխուռն փախուստ տուեց: Հոռմայեցիները հայերին հալածելով մեծ կոտորած արին, այն օրը հայերը պատերազմի դաշտում թողին 30,000 սպանուած և վիրաւոր: Լուկուլլն շտապեց Հռոմ ծերակոյտին տեղեկագիր ուղարկել, որի մէջ պատմում էր, որ Տիգրանակերտի ճակատամարտում 100,000 հայեր և միայն 5 հոռմայեցիներ են սպանուել, որ Տիգրանը մի քանի հեծեալներով փախչելիս ձգել է իր խոյրն ու ապարօշն և նման հեքիաթներ: Սակայն թէ ինչ արժէք ունին Լուկուլլի յաղթութեան այս մանրամասնութիւնները, այդ պարզ երևում է նրանից, որ նրա տեղեկագրութիւնները Հռոմում շատ սուռն ընդունելութիւն գտան և ոչ թէ ոգևորութիւն, այլ գայրոյթ առաջացրին նրա դէմ:

Հայոց պարսութեան Տիգրանակերտի առաջ կանգնած յաղթան աղէսալի թուութիւնը Հռոմի ռազմային պատմութեան հետաքննիչները: ամենափայլուն աստղերից մէկն է: Ահեղի էին նրա հետևանքները նորհիմն հայկական մեծ պետութեան համար—նա միանգամից հոռմայեցիների ձեռքը տուեց հայոց թագաւորի Միջագետքում, Ասորիքում և Կիլիկիայում արած բոլոր նուաճումները: Ամենից առաջ

Թշնամու ձեռքն ընկաւ շքեղ Տիգրանակերտը: Լուկուլլը Տիգրանին յաղթելուց և հալածելուց յետոյ վերադարձաւ Տիգրանակերտ և սաստկացրեց պաշարումը: Յոյն և Կիլիկեցի վարձկաններն սկսեցին խլրալի: Մանկէսքը նրանց զինամասի արաւ և ուզում էր բոլորին սրի քաշել, սակայն նրանք ընդդիմացան բրերով և միջնաբերդի մի մասը մատնեցին հռոմայեցիներին ձեռքը: Այն բազմաթիւ յոյները, որոնց Տիգրանը բռնութեամբ գաղթեցրել էր Տիգրանակերտ, այժմ բացեցին մայրաքաղաքի դռները հռոմայեցիներին առաջ, որոնք ներս խուժելով, քաղաքն աւարի առան*), խնայելով միայն յոյների կեանքն և գոյքը: Լուկուլլն յոյներին իրաւունք տուեց վերադառնալ իրենց տեղերը: Տիգրանակերտի անթիւ գանձերն և հարստութիւններն ընկան ընչաքաղց զօրավարի ձեռքը՝—8,000 տաղանդ արծաթ (մօտ 30 միլիոն ըուբլի), և 20 միլիոն քոռ հացահատիկ գտան հռոմայեցիները Տիգրանակերտում:

*) Վաղուց գիտնականներին զբաղեցրել է այն հարցը, թէ սրտեղ էր հիմնուած Տիգրանակերտ հոյակապ մայրաքաղաքը, որի նկարագիրը մեզ թողել են յոյն և հռոմայեցի դասական հեղինակները, և ո՞ւր են այսօր նրա աւերակները: Արդ, Տիգրանակերտը Տիգրանից յետոյ յաճախ յիշուած է թէ տոհմային և թէ օտարազգի մատենագիրներից և մինչդեռ ըստ Փաւստոս Բուզանդի նա գտնուած էր Աղձնեաց երկրում, ուրեմն այժմեան Մուշ քաղաքից դէպի հարաւ, իսկ արեւմտեան Տիգրիսից դէպի հիւսիս, ըստ յոյն և հռոմէական պատմագիրների նա գտնուած էր Միջագետքում, ուրեմն արեւմտեան Տիգրիսից դէպի հարաւ, Մծնից մօտ 55 կիլոմետր հեռու: Մինչդեռ Մոմզէնը, Կիպերտն և ուրիշները Տիգրանակերտն ըստ օտարազգի պատմագիրների որոնել են Միջագետքում, Մծնից մօտ 2 օրուայ ճանապարհ հեռու դէպի արեւմուտք, Լէման-Հաուպտը Տիգրանակերտը, համաձայն Փաւստոսի, գտել է այժմեան Մայաֆարկինի (Նփրկերտի) հոյակապ աւերակներում, և շատ տեսակէտից Լէման-Հաուպտն իրաւացի է: S. Mommsen, Römische Gesch., Bd III, 68, A և Lehmann-Haupt, Arm. B. I, S. 381—400:

Խւրաքանչիւր հռոմէական զինուոր 800 դահեկան (300 ըուբլուց աւելի) զրամական պարգև ստացաւ: Տիգրանի նորաշէն թատրոնում հռոմայեցիին տօնեց իր յաղթութիւնը:

Երբ Տիգրանը Լուկուլլի անակնկալ արշաւանքից յանկարծակիի եկած թողեց Ասորիքն և վերադարձաւ Հայաստան, Ասորիքի և Կիլիկիայի Բագադատէս հայ կուսակալն իր զօրքերը հանեց այդ երկիրներից և նոյնպէս դէպի Տիգրանակերտ շտապեց: Այժմ Լուկուլլը դարձաւ Կոմագեն և տիրեց սրա Սամոսատ մայրաքաղաքին: Մինչև Կարմիր ծովը բնակուող բոլոր երկրների իշխաններն և համայնքները՝ հելլէններ, ասորիներ, հրէաներ և արաբներ, լսելով հռոմայեցիների յաղթութիւնը, պատգամաւորներ ուղարկեցին յաղթողի մօտ և ընդունեցին Հռոմի գերիշխանութիւնը: Միայն Միջագետքն և իր մայրաքաղաքը Մրծբին, որի հրամանատարն էր Տիգրանի հարազատ եղբայր Գուրասը, չընկան հռոմայեցիների ձեռքը: Լուկուլլը Կոմագենում թագաւորեցրեց Անտիոքոս Սելևկեանին: Միւս Անտիոքոս Ասիացի կոչուածին, որը հայերի հեռանալուց յետոյ Անտիոք էր վերադարձել, նա ճանաչեց Ասորիքի թագաւոր:

Այս բոլորից յետոյ Լուկուլլն անցաւ Կորդուաց աշխարհը, որը նրան անձնատուր եղաւ և ուր նա գտաւ առատ պաշար իր զօրքի համար: Այստեղ նա յուղարկաւորութեան մեծ հանգէս կատարեց Չարբին Կորդուաց իշխանի համար, որն իր պատճառով Տիգրանից սպանուել էր: 69/68 թ. ձմեռը Լուկուլլն իր զօրքերով անցկացրեց Կորդուաց երկրում:

Տիգրանը Տիգրանակերտի մօտ կրած պարտութիւնից յետոյ փախաւ Հայաստան և ճափնդատ: Նապարհին մի ամբողջում կանգ առաւ: Այդ ժամանակ Միհրդատը, Պոնտոսի թագաւորը, որն իր հեծելազօրքով Տիգրանակերտ էր գնում, ճանապարհին պա-

տահելով հայ փախստականներին, նրանցից լսեց իր դաշ-
նակցի պարտութիւնը Տիգրանակերտի մօտ: Նա շտապեց
Տիգրանի մօտ: Երբ նրան մօտեցաւ, իջաւ ձիուց և ար-
տասուելով զրկեց իր փեսային: Լքած էր Տիգրան թագա-
ւորն և իր արքունիքը: Պոնտոսի քաջ թագաւորը քաջա-
լերեց նրան և նրա արքունիքը: Նա նրանց համոզեց, որ Տիգ-
րանակերտի կորուստը տակաւին Հայաստանի կորուստը չէ
նշանակում, որ Լուկուլլի յաղթութիւնը Տիգրանակերտի մօտ
պատահական է, ուստի և վճռական նշանակութիւն չունի.
որ, ընդհակառակն, հռոմայեցի զօրավարի դրութիւնը նեղ,
ապագան խիստ տարակուսական է, եթէ միայն Տիգրանը
խելացի կերպով պատերազմը շարունակէ: Ի հարկէ Տիգ-
րանի գործը նաև Պոնտոսի թագաւորի գործն էր, հայոց
թագաւորութեան փրկութիւնից կախուած էր և Պոնտոսի
թագաւորութեան փրկութիւնը: Եւ Տիգրանը հաւատաց
իր բազմափորձ դաշնակցին և նրան յանձնեց հայ-հռո-
մէական պատերազմի ղեկավարութիւնը:

Հայ-հռոմեական պատե Տիգրանն և Միհրդատը, Հռոմի
բազմր դառնում է մի անհաշտ թշնամին, աշխատեցին հայ-
պատերազմ արեւելքի հռոմէական պատերազմին ընդհանուր
եւ արեւելքի մեջ: Բնաւորութիւն տալ: Նրանք աշխա-
խատում էին համոզել արեւելեան իշխաններին և ազգերին,
որ արեւմտքի գերիշխան ամբարտաւան Հռոմը պատերազմ
է սկսել ոչ միայն հայերի և պոնտացիների, այլև ամբողջ
արեւելեան ազգերի և իշխանների դէմ, կամենալով նրանց
վզին գնել ստրկութեան լուծր: Ցանկանալով պատերազ-
մին կրօնական գոյն ևս տալ, նրանք լուր տարածեցին,
որ Լուկուլլը մտադիր է հայերին յաղթելուց յետոյ արշա-
ւել պարթևների վերայ և կողոպտել արեւելքի մեհեաններ-
ը, մանաւանդ Եղիմայիսում (այժմեան Լուրիստանում)
գտնուող Նանէա կամ Անահիտ դիցուհու մազմագանձ

մեհեանը, որը արեւելեան բոլոր ազգերի համար խիստ
նուիրական էր: Կոչ էին անում դաշնակից թագաւորները
արեւելքի ազգերին և իշխաններին համախմբուել հայոց
թագաւորի դրօշակի տակ և փրկել արեւելքն և իր աս-
տուածներին անօրէն և ամբարտաւան թշնամու ձեռքից:

Տիգրանի և Միհրդատի այս կոչը ջերմ արձագանգ
գտաւ արեւելեան ազգերի սրտերում՝ վրացիները, մար-
դերերը, մանաւանդ մարերը եկան հայոց թագաւորի
դրօշակի տակ միացան Հռոմի դէմ պատերազմելու հա-
մար: Արեւելքի և արեւմտքի մէջ սկսուած այս պատերազ-
մի համար ահագին նշանակութիւն ունէին պարթևները:
68 թ. պարթևական գահը բարձրացաւ Հրահատ (Փրա-
տէս) Գ. աստուած կոչուած թագաւորը: Տիգրանը Միհր-
դատի խորհրդով նրան առաջարկեց յետ ստանալ հիւսի-
սային Միջագետքն ու Ադիաբենն և միանալ իր հետ հռո-
մայեցիների դէմ: Սակայն Լուկուլլի նոր դաշնակիցներն
ևս աշխատում էին պարթևաց թագաւորին հռոմայեցիներ-
ի կողմը գրաւել: Լուկուլլն ինքը պարթևաց թագաւո-
րին խոստանում էր նոյն երկիրները տալ, բայց միևնոյն
ժամանակ նրան սպառնում և յիշեցնում էր, որ պար-
թևները 23 տարի առաջ Հռոմի հետ դաշն էին կուել և այժմ
չպիտի միանային հայերի և պոնտացիների հետ: Հրա-
հատը Տիգրանի առաջարկութիւնը չմերժելով, միևնոյն
ժամանակ պատգամաւորներ ուղարկեց Լուկուլլի մօտ:
Սա այդ պատգամաւորներին մեծ պատիւներով ընդունե-
լով, պատուիրեց իր Սեբստիլիոս երեւելի զօրավարին գը-
նալ Տիգրոն և ողջունել պարթևաց թագաւորին: Սակայն
Սեբստիլիոս հմուտ ռազմագէտն իսկապէս ուղարկուած էր
պարթևներին լրտեսելու համար, որոնց Լուկուլլը մտադիր էր
պատերազմ յայտնելու: Պարթևաց թագաւորն այս զգաց,
բայց և այնպէս չմիացաւ հայերի հետ և վճռեց չեզոք
մնալ և հանդիսատես լինել, թէ ինչով կը վերջանայ իր
ատեցեալ հարեանի և Հռոմի մէջ սկսուած պատերազմը:

Նոր հայ զորա- 69/68 թ. ձմեռը Տիգրանն և Միհր-
բանակը: դատը շրջում էին Հայաստանն և հայ երի-
տասարդներին զինուորագրում հայրենիքը վտանգից ա-
զատելու համար: Զինուորագրուեցին բացառապէս ուժեղ
և քաջառուջ երիտասարդները, որոնց հետ ընտրութեամբ
միացրին նաև շրջակայ երկիրներից եկած կամաւորնե-
րին: Այսպէս գոյացաւ մի նոր հսկայական բանակ, բաղ-
կացած 40,000 հետևակներից և 30,000 հեծեալներից
(ըստ Ապրիան պատմագրի 70,000 հետևակ և 35,000 հե-
ծեալ): Սակայն Տիգրանակերտի ճակատամարտը ցոյց էր
տուել, որ զօրքի թւական աւաւելութիւնն երբեմն նոյն
խսկ փաստակար է յաղթութեան համար, եթէ նա ան-
մարդ և անհրահանգ է: Այս աչքի առաջ ունենալով,
Միհրդատն նորակոչ զինուորներին յանձնեց իր պոնտա-
կան և իրեն ազաւինուած յոյն և իտալացի սպաներին,
որոնք և խնամքով նրանց մարզեցին և հրահանգեցին ըստ
հռոմէական տարազի: Ամբողջ ձմեռն և գարունը անցկա-
ցրին այս զօրքը մարզելով և զինելով: Հայոց բերդերն էլ
լաւ պարենաւորեցին, որպէսզի հարկ եղածժա մանակ բեր-
դապահ զօրքերը կարողանան պաշարմանը դիմանալ:

Հռոմը ևու- Երբ այս լուրերը Հռոմ հասան, տհազին
կուլլի դեմ: զայրոյթ առաջացրին անձնակամ զօրավա-
րի գէմ: Նրա ուղարկած տեղեկութիւնները չափազան-
ցութիւններ էին համարում և թէ ծերակոյտն և թէ ժո-
ղովուրդը նրան անուանում էին յանդուգն արկածախն-
դիր, ագահ, դաւաճան, որը Հռոմի անուանը անպատու-
թիւն է բերում, ինքնազուլիս պատերազմ է սկսել մի հե-
ռաւոր երկրի գէմ, որի վախճանը չի նախատեսնում և
կասկածելի է: Նրա գէմ զինուել էին նոյնխակ նրա կու-
սակիցները, կապիտալիստները: Ծերակոյտը նրան զրկեց
Ասիայի և Կիլիկիայի կուսակալութեան պաշտօնից, բայց թոյլ
տուեց, որ հայերի գէմ սկսած պատերազմը շարունակէ:

Հռոմէական ծերակոյտի և ժողովրդի այս անբաւականու-
թիւնն արձագանգ գտաւ Լուկուլլոսի զօրաբանակում և
զինուորական խռովութեան վտանգ էր սպառնում նրան:
Իսկ Լուկուլլը, «ինչպէս յուսահատութեան հասած խաղա-
մոլը, աշխատում էր միայն իր խաղչէքն (СТАВКА) և յանդգ-
նութիւնը բազմապատկելու» (Մոմգէն):

Լուկուլլը Հայաստ- Լուկուլլը Տիգրանակերտի մօտ մը-
նում. հայոց 1812 նաց մինչև 68 թ. ամառուայ կէսը:
բաւանդը: Նա սպասում էր, որ հայոց թագա-
ւորն իր նորակազմ բանակով իր դէմ կը գայ և իր մայ-
րաքաղաքին վերադարձելու համար վճռական ճակատա-
մարտ կը տայ: Սակայն նրա հաշիւները սխալ դուրս եկան:
Հռոմէական լեգէոնների անպարտելիութիւնը յայտնի էր
ամբողջ հին աշխարհին և այդ փորձով գիտէին թէ Տիգ-
րանն և թէ իր գաշնակից Միհրդատը: Ուստի և նրանք
վճռեցին խոյս տալ վճռական ճակատամարտից, հռոմա-
յեցիներին անընդհատ յարձակումներով տկարացնել, նը-
րանց գրաւել երկրի ներսը, ուր նրանց սպասում էր Հա-
յաստանի դաժան ձմեռն իր բուք ու բորանով: Հայաս-
տանի ֆիւզիկալ կազմութիւնն և ժողովրդի հայրենասի-
րութիւնը շատ նպաստաւոր էին այս «փորձիկ» պատերազմի
համար: Եւ այսպիսով 68 թւականը դարձաւ Հայոց հա-
մար այն, ինչոր ոռուաց համար 1812 թւականն է և կը
մնայ անմոռաց հայոց պատմութեան մէջ իբրև նրա սա-
կաւաթիւ փայլուն էջերից մէկը:

Երբ Լուկուլլը տեսաւ, որ հայոց թագաւորն ոչ հաշ-
տութիւն է խնդրում և ոչ էլ վճռական ճակատամարտ է
տալիս, նա 68 թ. ամառուայ կիսին իր զօրքով թողեց
Տիգրանակերտն և Վանայ ծովի արևմտեան կողմը գտնուող
Աղձնեաց լեռնոտ և դժուարանց աշխարհով մտաւ Արա-
ծանու հովիտը, որպէսզի այստեղից էլ անցնի Արաքսի
հովիտն և առնելով Արտաշատը, Տիգրանի պապենական

մայրաքաղաքը, ուր գտնուում էին նրա արքունիքը, կա-
նանոցն ու գանձերը, հարկադրէ նրան հաշտութիւն իրենդ-
րելու: Սակայն Տիգրանեկերտը թողնելուց առաջ նա
հարկադրուած կը Պոնտոսում գտնուող հռոմէական զոր-
քի մի մասն այդ նորանուած մայրաքաղաքը փոխադրել,
որով Միհրդատի համար յուսոյ նշոյլ ծագեց իր թագա-
ւորութիւնը վերանուաճելու: Բաղիշի կրճից անցնելով հռո-
մէական զօրքը մտաւ Մշու գաշան և մօտենում էր Արա-
ծանուն:

Հայոց հետևակ զօրքին առաջնորդում էր Միհրդատը,
որը թշնամուն վտանգ սպառնալով, միևնոյն ժամանակ
խուսափում էր մեծ ճակատամարտից: Իսկ այրուծիուն
առաջնորդում էր ինքը Տիգրան թագաւորը, որը յարմար
դէպքերում թշնամու վերայ յարձակուելով, նրա պաշարն
աշխատում էր կտրել և խլել: Լուկուլլը պաշտպանւում էր,
աւերում էր երկիրը, սակայն դաշնակիցները ֆնացին հառ-
տատ իրենց վճռին և խուսափում էին մեծ ճակատամար-
տից:

Մահս Արածա- Լուկուլլը համբերութիւնը կորցնելով,
հու ափին: Արածանու հարաւային ափով ուղևորուեց
դէպի Արտաշատ: Տիգրանն այս տեսնելով և սոսկալով
այն մտքից, որ թշնամին կարող էր Արտաշատն առնել և
իր կանանց գերել, թշնամուն հետևում էր Արածանու
հիւսիսային ափով: Չորս օրուայ մարշից յետոյ Լուկուլլը
գտաւ Արծանու մէջ հուն և իր զօրքերը ճակատեցրեց
գետի միւս կողմն անցնելու համար: Նախ անցաւ հռոմէա-
խան այրուծին: Անցնելու ժամանակ նրանց վերայ կա-
տաղի յարձակում գործեցին մարդացիների և վրացիների
հեծեալ նիզակաւորները. սակայն երբ հռոմայեցի հետևակ
զօրքի մի մասն ևս անցաւ գետի միւս կողմը, նրանք չը-
կարողանալով դիմանալ, փախուստ տուին: Հռոմէական
այրուծին սկսեց նրանց հալածել: Սակայն փախչողներն

յաճախ յետ դառնալով, հռոմայեցիների վերայ նետերի
տարափ էին թափում: Այդ նետերը թեւաւոր և թունաւոր
էին, որոնք վիրաւորների մարմինների մէջ կոտորուելով,
չարաչար վերքեր էին առաջացնում: Այդ միևնոյն ժա-
մանակ Տիգրանն իր թիկնապահներով և նրա փեսան,
Ատրպատականի թագաւոր Միհրդատն իր մարական գըն-
դով կուում էին հռոմայեցի հետևակ զօրքի դէմ և վեր-
ջիններս մեծ վտանգի մէջ ընկան: Սակայն Լուկուլլն իր
այրուծին յետ կանչեց, որը Տիգրանի առաջն առաւ, այն
ինչ ինքը Միհրդատի մարական գունդը ճեղքեց: Դաշնա-
կից զօրքերը փախուստ տուին, թողնելով պատերազմի
դաշտում 5,000 սպանուած և բազմաթիւ վիրաւորներ ու
գերիներ (սեպտեմբեր 68 թ.):

Անցնելով Արածանին, հռոմայեցիները շարունակում
էին առաջանալ դէպի անծանօթ երկրի ներսը, դէպի Արտա-
շատը, «հայոց Կարքեդոնը»: Սակայն նրանք շուտով հարկա-
դրուած էին կանգ առնել: Նրանց ճանապարհը խորտ ու
բորտ, ծածկուած էր անտառներով և ճահիճներով, թշնա-
մին շարունակ յարձակումներ էր գործում, իսկ պաշարն
էլ հատնելու վրայ էր: Երբ Արտաշատը, «հայոց Կարքե-
դոնը», դեռ շատ հեռու էր, վրայ տուեց Հայաստանի
սառն ձմեռն իր բուր ու բորանով, գետերը ծածկուեցան
սառուցով: Իտալական զինուորներն իրենց շուրջը ձիւն և
սառուց տեսնելով, ընկան յուսահատութեան մէջ և ապս-
տամբուելով իրենց զօրավարի դէմ, պահանջեցին նահան-
ջի փողը հնչեցնել տալ:

Լուկուլլի Չինուորական այս կատաղի ապստամբութիւնը
նահանջը: հարկադրեց արկածախնդիր զօրավարին նահան-
ջի փողը հնչեցնել տալ: Եւ այսպէս Բրիտտոսից 68 տարի
առաջ Հայաստանում կատարուեց ճիշտ նոյն բանը, ինչ
որ Ռուսաստանում Բրիտտոսից 1812 տարի յետոյ պիտի
կատարուէր: 1812 թ. Նապօլէօնին յաղթեցին Ռուսաստ-

տանի խստաշունչ ձմեռը, ուստի ժողովրդի հայրենասիրութիւնն և կրօնական ատելութիւնը անկրօն գալլերի դէմ. 68 թ. Ք. ա. հայոց թագաւորի դրօշակի տակ համախմբուած էին արեւելեան ազգերն, որոնք նոյնպէս կուռմ էին իրենց ազատութեան համար և նոյնպէս լցուած էին կրօնական ատելութեամբ դէպի իրենց արեւմտցի հարստահարիչները:

Մծբնի վերադառնալով Միջագետք, Լուկուլլը պառնումը: շարեց Մծբնը, որի բերդապահ զօրքի հրամանատարն էր Տիգրանի եղբայր Գուրասը: Տիգրանը Տիգրանակերտի դառն փորձից խրատուած չվստահացաւ Լուկուլլին հետեւել և Մծբնի առաջ ճակատամարտ տալ, և այսպէս այս քաղաքը մնաց իր բախտին: Մծբնը շատ ամուր էր, նա շրջապատուած էր կրկնակի, արտաքին և ներքին պարիսպներով, որոնք միմեանցից բաժանուած էին խրամով: Բերդապահ զօրքը Գուրասի և Կալիմախոս յոյն ճարտարապետի առաջնորդութեամբ յաջող կերպով պաշտպանում էր քաղաքը: Սակայն աշնանը 68 թ., մի անձրևային և փոթորկոտ գիշեր հռոմայեցիներին յաջողուեց մօտենալ քաղաքին, նրա պահապաններին սրի քաշել և արտաքին պարսպին տիրել: Նրանք արտաքին և ներքին պարիսպները միմեանցից բաժանող խրամը ցախով լցրին և ներքին պարսպին ևս տիրեցին: Գուրասն ամբացաւ քաղաքի միջնաբերդում և նախօրօք Լուկուլլից խոստում տոնելով, որ իրեն քնաս չի հասնի, անձնատուր եղաւ և պատուով ընդունուեց: Իսկ քաջ Կալիմախոսին հռոմայեցի զօրավարը հրամայեց շղթայել: Հռոմայեցիները Մծբնում ևս գտան առատ աւար, ինչպէս գտել էին Տիգրանակերտում:

Տիգրանն եւ Միհրդատը յարձակողա- Լուկուլլին հալածելով Տիգրանը յար- կանի են դիմում: ների վերայ և նրանց տիրելով, այնտեղ մնացած հռոմէական Լուկիոս Փաննիոս զօրավարին նրա

զօրքի հետ միասին պաշարեց մի ամբողջում: Միևնոյն ժամանակ նա տուեց Միհրդատին 4,000 հեծեալ, որ նա գնայ իր պոնտական թագաւորութեանը տիրէ: Աննկուն Միհրդատն այս 4,000 հեծեալներին միացրեց իր 4,000 պոնտական հեծելազնդի հետ և մտնելով Պոնտոս, կոչ առաւ իր ժողովրդին զէնք առնել թշնամու դէմ և հալածել նրան հայրենիքից: Պոնտացիներն ուրախութեամբ ընդունեցին իրենց թագաւորին և զէնք առան: Պոնտոսում ցար ու ցրիւ մնացած հռոմէական զինուորները բռնուեցին և մորթիտուեցին: Միհրդատը հռոմայեցիներին հալածեց Պոնտոսից և տիրեց իր պապենական թագաւորութեանը: Իսկ միւս Միհրդատը, Ատրպատականի թագաւորը, Տիգրանի փեսան, իր հեծելազնդով խուժելով Կապադովկիա, աւերեց այս երկիրն և այնտեղ գտնուող հռոմէական զօրքը սրի քաշեց:

Լուկուլլը Այսպէս հասաւ 67 թւականի գարունը: Եփրատի աջ Լուկուլլի անյաջող արշաւանքը հայոց վերայ և ափին: խայտառակ նահանջը, ձմեռուայ պարապութիւնն և անորոշ ու աննպատակ կացութիւնը հռոմէական զօրքի մէջ ըմբոստութեան ու ապստամբութեան ոգի էին զարթեցրել: Լուկուլլն այժմ սլարգ տեսնում էր, որ եթէ ինքը չլսէ իր զօրքի բողոքներն և նրանց հայրենիք չվերադարձնէ, զօրքն ինքը առանց նրա հրամանի հայրենիք պիտի վերադառնար: Սրան աւելացաւ և այն, որ զօրքի պաշարն սպառուելու վրայ էր, իսկ Տիգրանից պաշարուած Փաննիոս զօրավարն և Պոնտոսում վտանգուած հռոմէական զօրքերը դիմելով նրան, աղերսում էին անյապաղ իրենց օգնութեան հասնել: Լուկուլլը հարկադրուած էր հայոց արշաւանքի վրայ դրած իր յոյսերից և երազներից հրաժարուել, թողնել Տիգրանակերտն և Մծբնն և արտամղին սրտով անցնել Եփրատի միւս կողմը: Փաննիոսն ազատուեց, սա-

կայն Պոնտոսում գտնուող հռոմէական զօրքին օգնութիւն հասնելն արդէն ուշ էր:

Արկածի վեր- երբ Լուկուլլը եփրատ գետի աջ կողմն ջաբանը: անցաւ, այնտեղի ազգաբնակութիւնից խեց, որ Պոնտոսում մնացած հռոմէական զօրքը մի արիւն- նահեղ ճակատամարտում ոչնչացել է Միհրդատի ձեռքով: Հռոմից հասած լուրերն աւելի վատ էին: Հռոմէական ժողովրդի զայրոյթը անձնակամ և արկածախնդիր զօրավարի դէմ անկարագրելի էր: Հռոմում նրան ի միջի այլոց մեղադրում էին գողութեան մէջ, ասելով, որ նա պետական գանձարանից ստացած զբառներն իւրացրել և հէնց Հռոմում տոկոսով տալիս էր: Այսպէս հռոմէական ժողովուրդը վճռեց Լուկուլլի հրամանատարութեան տակ գտնուող լեզիոնարներին, որոնց ծառայութեան օրինական ժամանակամիջոցը լրացել էր, արձակուրդ տալ, իսկ Լուկուլլի տեղ զօրքին հրամանատար նշանակեց Մանիոս Գլաբրիո կոնսուլին, որն արդէն Փոքր Ասիա էր ժամանել: Լուկուլլն այժմ կանգնած էր Փոքր Հայքում, Պոնտոսի սահմանին մօտ, պոնտական զօրքի դէմ, որի հրամանատարը, Միհրդատ Մարաստանի թագաւորը, Տիգրանի փեսան, արդէն հռոմայեցիներին մի հեծելազօրային կռուում յաղթել էր: Շեշտակի հռոմէական զօրաբանականի վերայ արշաւում էր Տիգրան թագաւորն իր մեծ զօրաբանակով և սպառնում էր Լուկուլլի զօրքի քամակն ընկնել: Լուկուլլն օգնութիւն խնդրեց Իլիւկիայի հռոմէական նոր կուսակալից, որն իր հրամանատարութեան տակ 3 լեգէոն ունէր, սակայն սա պատասխանեց, որ իր լեգէոնները հրաժարւում են Հայաստան գնալուց: Այն ժամանակ Լուկուլլը պատգամաւոր ուղարկեց Մանիոս Գլաբրիո կոնսուլի մօտ և նրան խնդրեց, համաձայն հռոմէական ժողովրդի վճռի զօրքի հրամանատարութիւնն իր տեղ ընդունել: Սակայն սա տրամադիր չէր Լուկուլլի հետ ինքն ևս խայտառակուելու և մերժեց նրա առաջարկութիւնը: Երկու կրակի մէջ մը-

նացած և վախենալով, մի գուցէ առջևից և յետևից պաշարուի պոնտացիներից և հայերից, Լուկուլլը հրաման տուեց իր զօրքին արշաւել Տիգրանի դէմ, որի հետ իբր թէ ուզում էր նախ գործը վերջացնել: Սակայն ոչ ինքը Լուկուլլն և ոչ էլ իր լքած ու ըմբոստացած զօրքն էր հաւատում Տիգրանին յաղթելու հնարաւորութեանը: Լուկուլլի այդ հրամանը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ նահանջի նշան: Եւ իրաւ, երբ նրա զօրքը հասաւ այն տեղը, ուր երկու ճանապարհները բաժանուելով, մինը նրանցից տանում էր դէպի Հայաստան, իսկ միւսը դէպի Կապադովկիա, հռոմէական լեգէոնները ընտրեցին վերջինս և ուղևորուեցան դէպի Փոքր Ասիա, իսկ իրենց սպարապետն էլ կորագլուխ հետեւեց նրանց: Փոքր Ասիայում Լուկուլլի զօրաբանակը լուծուեց և ցրուեց: Միհրդատը տիրեց իր ամբողջ թագաւորութեանը, իսկ Տիգրանն էլ իր կորցրած նահանգներին: Հռոմայեցիները մինչև անգամ չկարողացան պաշտպանել իրենց հաւատարիմ դաշնակցին, Արիոբարզանէս Կապադովկիայի թագաւորին և նրան ու նրա երկիրը մասնեցին հայոց և պոնտացուց թագաւորների կառավարմանը: Տիգրանն և Միհրդատը յարձակուեցան Կապադովկիայի վերայ, քարուքանդ արին այդ երկիրն և Արիոբարզան թագաւորին վեցերորդ անգամ հալածեցին իր երկրից: Ծովահէններն էլ շարունակում էին իրենց կողոպուտները Միջերկրական ծովի վերայ, որով Հռոմում առաջացել էր հացի և մթերքների անլուր թանգութիւն:

Սրանով վերջացաւ երկրորդ Միհրդատեան պատերազմը, որը տևեց 8 տարի (75/4—67/6), որի սկիզբն այնքան փառաւոր էր, իսկ վախճանն այնքան անփառունակ: 67/66 թւականի ձմեռը Տիգրանն և Միհրդատն դարձեալ տիրում էին գրեթէ այն բոլոր երկիրներին, որոնց տիրել էին 8 տարի առաջ, 75/4 թւականի ձմեռը:

Երբ այս լուրերը Հոռոմ հասան, Հոռոմի
ժողովուրդն և ծերակոյտը իր քաջագոր-
ծութիւններով յայանի Պոմպէոսին 3 տա-
րի ժամանակով տուին գրեթէ միապետական իրաւունքներ
և արեւելք ուղարկեցին, պատուիրելով նրան նուաճել թէ
ծովահէններին և թէ Միհրդատի ու Տիգրանի դէմ սկսած պա-
տերազմը վերջացնել: Մինչև այդ ժամանակ ոչ ոք Հոռո-
մում իր ձեռքում չէր կենտրոնացրել այսպիսի իրաւունք-
ներ և լիազօրութիւններ: Պոմպէոսի տրամադրութեան
տակ զրուեցան հռոմէական պետութեան արեւելքի և ա-
րեւմտքի բոլոր գլխուորական ոյժերն և ֆինանսական մի-
ջոցները:

Հասնելով Կիլիկիա, Պոմպէոսը շնորհիւ իր քաջու-
թեան, հեղինակութեան և մեղմութեան շուտով նուաճեց
ծովահէններին, ապա փոխարինելով Լուկուլլին, վերսկսեց
Միհրդատի դէմ պատերազմը:

Տիգրանն և Մըհոգատը 66 թւին Լուկուլլին հալա-
ծելով և իրենց երկիրներին տիրանալով, շատ լաւ գիտէին,
որ մօտաւոր ապագայում հռոմայեցիները պատերազմը
պիտի վերանորոգէին, ուստի և տեսնում էին իրենց պատ-
րաստութիւններն ապագայ պատերազմի համար: Նրանք
փորձեցին պարթևաց Հրահատ (Ֆրատտէս աստուած) թա-
գաւորին իրենց կողմը գրաւել, ցոյց տալով նրան այն
յաջողութիւնները, որ իրենք ունեցել էին հռոմայեցիների
դէմ: Սակայն այս դաշինքը գլուխ չեկաւ: Այս բաւական
չէր, շուտով Տիգրանն և Միհրդատը միմեանց հետ գրժ-
տուեցին:

Տիգրան արեւայ- Պոնտոսի հզօր թագաւորի ընտանեկան
որդու ապստամ- կեանքը ներկայացնում էր մի սոսկալի
բոլորի: պատկեր, որն անձանօթ էր նոյնիսկ արե-
ւելեան բռնակալներին: Միհրդատի հրամանով ուղիղ կամ
կարծեցեալ դաւաճանութեան համար սպանուեցան և կամ

յաւիտենական կալանաւորութեան մէջ մահացան նրա հա-
րազատ մայրը, եղբայրը, քոյրը, որն իր հարսնացուն էր,
նրա երեք որդիներն և երեք աղջիկները. նրա հարազատ
որդին, Մաքարէսը, նրան դաւաճանեց և հռոմայեցիների
հետ դաշինք կապեց, բայց յետոյ մեռաւ իր հօր հրամանով.
նրա միւս որդին, Փառնակէսը, նոյնպէս ապստամբուեց
իր հօր դէմ և նրա ողբերգական մահից յետոյ նրա
ղեկին իբրև նշան իր հաւատարմութեան Պոմպէոսին ու-
ղարկեց: Եւ երբ Տիգրանը Միհրդատի Կլէօպատրա դըս-
տեր հետ ամուսնացաւ, ժառանգական օրէնքով Պոնտո-
սի թագաւորի ընտանեկան կեանքի տրագեդիան ծնունդ
առաւ հայոց արքունիքում: Կլէօպատրան Տիգրանի սի-
րելի ամուսինն էր և նրան ծնեց երեք արու զաւակներ:
Ո՛չ մէկը սրանցից չուզեց սպասել հօր մահուանն և երեքն
էլ փորձեցին յափշտակել նրա կենդանութեան ժամանակ
նրա զահր: Նրանցից անդրանիկը, Զարիադրէսը, անցնե-
լով մի քանի հայ նախարարների գլուխը, որոնք անբա-
ւական էին Տիգրանից, ապստամբուեց իր հօր դէմ, սա-
կայն յաղթուեց և սպանուեց: Միջնակ որդի մի օր, երբ
իր հայրը որսի ժամանակ ձիուց վայր ընկաւ և վիրաւո-
րուեց, նրան թողնելով անօգնական, նրա թագն իր գըլ-
խին դրեց: Կրտսեր որդին, Տիգրանը մնաց իր վիրաւոր և
ուշաթափ հօր մօտ և նրան խնամք տարաւ: Երբ հայրը
ուշքի եկաւ, իմանալով պատահածը, միջնակ որդուն գըլ-
խաթել տուեց, իսկ կրտսերին խոստացաւ իր թագն ու
զահր իր մահից յետոյ: Սակայն սա ևս չուզեց սպասել
ծերունի հօր մահուանը՝ Միհրդատի արիւնն եռում էր
նրա երակներում:

Տիգրանի դէմ ոխ ունէին թէ Միհրդատը, որի ձեռ-
քին նա չուզեց խաղալիք դառնալ, և թէ Կլէօպատրան,
որի աղերսներին նա նոյն պատճառով չսեց և Միհրդա-
տին 72 թ. օգնութեան չհասաւ: Պոնտոսի թագաւորին

ձեռնառու էր հայոց գահի վերայ տեսնել իր թոռանն և նրան խաղալիք դարձնել իր ձեռքում, այդ պատճառաւ և նա ևս խրախուսում էր իր թոռան ապստամբութիւնը: Եւ ահա, երբ Տիգրանը Լուկուլլին հալածելուց յետոյ Կապադովկիան աւերում էր, նրա որդին Հայաստանում ապստամբութեան զբոշակը պարզեց իր ծերունի հօր դէմ: Հայրն այդ բոթը լսելով, զօրքով Կապադովկիայից շտապեց Հայաստան և յաղթեց իր ապստամբ որդուն, որն իր կողմնակիցներով փախաւ պարթևաց Հրահատ թագաւորի մօտ, որի դստեր հետ ամուսնացած էր:

Պոմպէոսի դա- Սյս պարագաներում հասնան Տիգրան
ւիմիր պարթև- թէ՛ Միհրդատի և թէ՛ Պոմպէոսի դեսպան-
ների հետ: ներն և թէ՛ առաջիններն ու թէ՛ վերջին-
ներս աշխատում էին Հրահատ թագաւորին իրենց կողմը գրաւել: Պոմպէոսը խոստանում էր պարթևաց թագաւորին Միջագետքը նրա ձեռքը տալ և Եփրատը սահման դարձնել հռոմէական և պարթևական պետութիւնների մէջ, եթէ նա իր հետ կը միանայ և հարաւից կ'արձակուի հայոց թագաւորութեան վերայ: Իսկ Միհրդատն և Տիգրանը նոյնպէս խոստանում էին պարթևաց թագաւորին թողնելու նրան Միջագետքն և Ագիարենը: Բացի դրանից Միհրդատը յորդորում էր Հրահատ թագաւորին չհաւատալ Պոմպէոսի խոստումներին, որովհետեւ նա նպատակ ունէր պոնտոցիներին և հայերին յաղթելուց յետոյ իր զէնքը դարձնել պարթևների դէմ: Տիգրանի ապստամբ որդին ամեն հրնարք գործ դրեց և իր աներոջը համոզեց անցնելու հռոմայեցիների կողմը և ընդունելու Պոմպէոսի առաջարկութիւնները:

Պարթևներ Երբ Պոմպէոսը Միհրդատի դէմ Պոն-
տոսի դէմ: տոսում պատերազմ էր մղում, Հրահատ
պարթևաց թագաւորն իր փեսայի զրգամբ հարաւից յար-
ձակուեց Տիգրան թագաւորի վերայ և նրան հարկադրեց

յետ նահանջել և պատսպարուել իր երկրի լեռներում: Պարթևներն և Տիգրանի ապստամբ որդին պաշարեցին Արտաշատ մայրաքաղաքը, սակայն պաշարումն երկարացաւ և նրանք չկարողացան քաղաքը անել: Երբ ձմեռը մօտենում էր, պարթևաց թագաւորը ծանօթացած երկար պաշարումից, իր զօրքի մի մասը տուեց իր փեսային, որպէսզի նա պաշարումը շարունակէ, իսկ միւս մասը վերցնելով վերադարձաւ իր երկիրը: Հէնց որ պարթևաց թագաւորը հեռացաւ, ծերունի Տիգրանն իր հաւատարիմ հպատակների հետ միասին յարձակուեց իր ապստամբ որդու վերայ, ազատեց Արտաշատը, հալածեց նրան և իր իշխանութիւնը վերահաստատեց ամբողջ Հայաստանում:

Պոմպէոսի Պոմպէոսը հայերի դէմ դաշն կապելով
նուսնում: պարթևաց թագաւորի հետ, 50,000 ընտիր զօր-
քով յարձակուեց Պոնտոսի թագաւորութեան վերայ: Միհր-
դատը կարողացաւ նրա դէմ միայն 30,000 հետևակ և 3,000 հեծեալ զօրք հանել և պատգամաւորներ ուղարկե-
լով, հաշտութիւն խնդրեց նրանից: Եւ որովհետեւ հռոմա-
յեցին պահանջում էր առանց որևէ պայմանի անձնատուր
լինել, Միհրդատը գերադասեց պատերազմը: Չվստահա-
նալով գերազօր թշնամուն վճռական ճակատ տալ, նա իր
զօրքով շարունակ խուսափում էր իրեն հետամտող թշնա-
մուց և աշխատում էր նրան յանկարծական յարձակում-
ներով վնասել: Վերջիվերջոյ նա իր զօրաբանակի հետ
միասին շրջապատուեց հռոմայեցիներից Գայլ գետից դէ-
պի հարաւ, այնտեղ, ուր յետոյ հիմուեց Նիկոպոլիսը և
և մի արիւնահեղ ճակատամարտում կորցրեց իր ամբողջ
զօրաբանակը: Իր թագաւորութիւնը հռոմայեցիների ձեռ-
քում թողնելով, նա մի քանի հեռուորդներով ուղևորուեց
դէպի իր դաշնակցի, Տիգրան հայոց թագաւորի երկիրը,
որպէսզի սրա օգնութեամբ վերանստանէ իր հայրենի թա-

գաւորութիւնը, ինչպէս մի անգամ այդ արել էր Լուկուլի արշաւանքի ժամանակ:

Տիգրանը Այն ժամանակ, երբ Միհրդատը Տիգրանի Միհրդատի մօտ էր փախչում, նրա թու սպասամբ Տիգրանն իր ծերունի հօրից յաղթուած շտապում էր Միհրդատի մօտ, որպէսզի սրա օգնութեամբ պատերազմէ իր հօր դէմ և յափշտակէ նրա գահը: Ճանապարհին լսելով իր պապի պարտութիւնը, գնաց Պոմպէոսի զօրաբանակը, ներկայացաւ հռոմայեցի զօրավարին և խոստացաւ նրան առաջնորդել դէպի Հայաստան և նրա ձեռքը մատնել իր հօրն և իր հայրենիքը: Տիգրան ծերունի թագաւորն այս բոլորը լաւ գիտէր: Ուստի երբ Միհրդատը հայոց սահմանն անցաւ, լսեց, որ Տիգրանն, իր նախկին դաշնակիցն ու փեսան, իր գլխի համար 100 տաղանդ (մօտ 200,000 ռ.) է նշանակել, իսկ իր պատգամաւորներին կալանաւորելով Պոմպէոսի ձեռքն է տուել, որի հետ և աշխատում էր հաշտուել:

Պոնտոսի թագաւորն այս լսելով, թողեց Հայաստանի սահմանն և փախաւ Սև ծովի հիւսիս արևելեանն ափերը, յուսալով այստեղ իր նախկին թագաւորութիւնն իր ապստամբ որդու, Մաքարէսի ձեռքից խլելու: Երբ նա անցաւ Փագիս գետը (այժմեան Ռիոնը), Պոմպէոսը Պոնտոսի նուաճումը վերջացած համարելով, իր զէնքը դարձրեց նրա նախկին դաշնակցի, Տիգրան հայոց թագաւորի դէմ:

Պոմպէոսը Եփրատի ափերէնքերից հռոմայեցի զօրաւրաւորս վարն իջաւ Երասխի հովիտն և արշաւեց Արաւոյ: Թաշատի վերայ Տիգրան գաւաճանի առաջնորդութեամբ: Գրեթէ առանց դիմադրութեան հանդիպելու նա հասաւ Արտաշատին և նրանից երեք գերմանական մղոն հեռու բանակ դրեց:

Երբ Պոմպէոսը պարթևների հետ դաշինք կապեց, Միհրդատի թագաւորութիւնը նուաճեց և իր զէնքը հայոց

թագաւորի դէմ դարձրեց, սա տեսնելով, որ իր հարազատ որդին և իր դէմ ապստամբուեց և հռոմայեցիների ձեռքը մատնեց իր անձն ու հայրենիքը, վճռեց հաշտուել հռոմայեցի զօրավարի հետ առանց պատերազմի: Այդ ժամանակ (66 թ. Ք. ա.) նա մօտ 75 տարեկան արեգադ ծերունի էր և հռոմայեցի յաղթողին զէնքով դիմադրելու յոյս չուներ: Ուստի և, քանի դեռ Պոմպէոսը Հայաստանի վերայ չէր արշաւել, նա նրա մօտ պատգամաւորներ ուղարկեց և հաշտութիւն խնդրեց: Իսկ յետոյ էլ Միհրդատի պատգամաւորներին կապած նրա ձեռքը տուեց: Պոմպէոսն ուզեց հայոց թագաւորի հետ հաշտուել, սակայն ապստամբ Տիգրանը խոչընդոտ հանդիսացաւ հաշտութեան և առաջնորդեց յաղթողին մինչև Արտաշատ:

Հաւատարմութիւնը Տիգրանի Արքայից արքան վճռեց հպատակեալ, հաշտուելու մեծ կուէր ձախտադրի դառն վճռին և պետքեան վախճանը: Վրկել գոնեայ իր պապենական երկիրը, Հայաստանը, կորստից: Ձի հեծած, առանց արքայական ծիրանու, սակայն արքայական խոյրը գլխին և ապարօշը ձախտին 75-ամեայ ծերունին գնաց հռոմէական զօրաբանակն և յայտնեց, որ ուզում է տեսնուել Պոմպէոսի հետ: Յանձնելով իր ձին և սուրը, համաձայն հռոմէական զօրաբանակի կարգերի, լիկաւորներին (զօրապետի պաշտօնեաներին), նա գնաց Պոմպէոսի մօտ և իր խոյրն և ապարօշը դրեց նրա առաջ: Պոմպէոսն անչափ ուրախացած այս անարիւն յաղթութեան վերայ, իսկոյն խոյրը դրեց Տիգրանի գլխին, իսկ ապարօշը ձախտին և յայտնեց, որ նրան ճանաչում է իբրև հայոց թագաւոր: Յայտնեց նրան, որ նա գալով հռոմէական զօրաբանակը, ոչ թէ իր թագաւորութիւնը կորցրել, այլ հռոմայեցիների բարեկամութիւնը շահել է: Հռոմէական զօրավարը Տիգրանին չէր ճանաչում իբրև անհաշտ թշնամի հռոմի, որպիսին Միհրդատն էր, և ամենևին նպատակ չուներ հա-

յոց թագաւորութիւնը ոչնչացնելու, որով միմիայն պար-
թեական թագաւորութեան զօրանալուն նպաստած կը լի-
նէր: Ընդհակառակը, հռոմայեցի զօրավարը նպատակ ու-
նէր Հայաստանը դարձնել մի նախապատանէշ հռոմէական
պետութեան պարթևների դէմ և այս մտքով էլ դաշն կա-
պեց Տիգրանի հետ. Տիգրանը յետ տուեց հռոմայեցիներ-
ին Փիւնիկէն, Ասորիքը, Կիլիկիան, Կապադովկան, այլ և
Ծոփաց և Կորդուաց երկիրները եփրատ գետի ձախ կող-
մում և մնաց միայն թագաւոր բուն Հայաստանի: Իբրեւ
պատերազմական տուգանք հռոմայեցիներին վճարեց 6,000
տաղանդ (մօտ 15 միլիոն բուբլի), իսկ իւրաքանչիւր հռո-
մէական զինուորի տուեց 50 դահեկան (մօտ 20 բ.) դրա-
մական նուէր: Այսպէս վերջ տրուեց Տիգրանի հիմնած հայ-
կական մեծ պետութեանը 66 թ. Ք. ա.:

Երբ Տիգրան ծերունի թագաւորը սրբ-
միսների վառա- տաբեկ իր խոյրն և ապարօշը դնում էր
սրովիւնը: Պոմպէոսի առաջ, նրա հայրադաւ և հայ-
րենադաւ որդին Պոմպէոսի մօտ նստած էր և նոյնիսկ տեղից
վեր չկացաւ իր դժբախտ հօրը պատուելու համար: Պոմ-
պէոսը Տիգրան ծերունուն ճանաչելով իբրեւ թագաւոր
Հայաստանի և դաշնակից ու բարեկամ հռոմէական ժո-
ղովրդի, նրա մատնիչ սրդուն իբրեւ վարձ նրա մատնու-
թեան առաջարկեց Ծոփաց երկրի թագաւորութիւնը, այն-
էլ այն պայմանով, որ այդ երկրի ամբողջներում գտնուող
գանձերը տրուեն ծերունի հայոց թագաւորին պատերազ-
մական տուգանքը վճարելու համար: Տիգրան կրտսերը
ըմբոստացաւ հռոմէական յաղթողի առաջ և նրան յայտ-
նեց իր անբաւականութիւնը և ստացաւ իր արժանի հա-
տուցումը. Պոմպէոսը հրամայեց նրան նրա կնոջ և զա-
ւակների հետ միասին շղթայել և Հռոմ տանել իբրեւ նշան
իր յաղթանակի: Պարթեաց Հրահատ աստուած թագաւորը
դիմեց իր «դաշնակցին», հռոմայեցի զօրավարին և նրան

ինդրեց ազատել շղթաներից իր փեսային, դստերն և
թոռներին: Սակայն Պոմպէոսը, որն առիթ էր որոնում
պարթեաց թագաւորին վիրաւորելու, նրա միջնորդու-
թիւնը չյարգեց և պատասխանեց, որ նրա փեսայի հա-
մար միջնորդելու իրաւունքը պատկանում է վերջինիս
հօրը, Տիգրան հայոց թագաւորին: Ի հարկէ այս մի ծանր
վիրաւորանք էր, որ Պոմպէոսը հասցրեց իր «դաշնակցին»:

Բայց սրանով պարթեաց թագաւորը չազատուեց հռո-
մէական յաղթողի ձեռքից: Քանի որ հայկական մեծ պե-
տութիւնն և Պոնտոսի թագաւորութիւնը կանգուն էին,
Պոմպէոսն ամէն կերպ աշխատում էր սիրաշահել պար-
թեաց թագաւորին և նրա օգնութեամբ նախ կործանել
այդ թագաւորութիւնները: Լուկուլլը 68 թ., իսկ Պոմ-
պէոսը 66-ին պարթեաց Հրահատ թագաւորին խոստացել
էին եփրատի ձախ կողմում գտնուող բոլոր երկիրները
նրան թողնել: Պարթեաց թագաւորը խաբուած այս խոս-
տումներից միացաւ Պոմպէոսի հետ և սա պարթևների
օգնութեամբ Պոնտոսի թագաւորութիւնը դարձրեց հռո-
մէական նահանգ, իսկ հայկական մեծ պետութեանն էլ
վերջ տալով, նրա հիմնադրին, Տիգրանին ճանաչեց իբրեւ
թագաւոր միայն Հայաստանի: Այժմ խորամանկ հռոմայե-
ցին հեշտութեամբ մոռացաւ իր արած խոստումներն և
հաւատարիմ Հռոմի աւանդական քաղաքականութեանը՝
չճանաչել և չհանդուրժել աշխարհիս վերայ ոչ մի հակա-
ռակորդ, ոչ մի մեծ պետութիւն, իր գէնքը դարձրեց
պարթևների դէմ: Նա նախ ընդարձակեց իր դաշնակցի,
Տիգրան հայոց թագաւորի թագաւորութեան սահմաններն
ի հաշիւ պարթևների: 65 թ. հայերի և պարթևների մէջ
վէճ առաջացաւ Կորդուաց երկրի տիրապետութեան հա-
մար: Պոմպէոսն իսկույն այս երկիրը հռոմէական զօրքերով
զբաւել տուեց իր դաշնակցի, Տիգրան հայոց թագաւորի
համար. իսկ այնտեղ գտնուող պարթևներին հալածել

քի հասցրած վիրավորանքների դառն դեղհատներն և լուծարեալ տանուով էր նրա ոտնձգութիւնները:

Վերջապէս համբերութիւնից գուրս գալով, պարթեւաց թագաւորը 64 թ. հայոց թագաւորին Կորդուաց երկրի և Միջագետքի համար առաջացած վէճի պատճառով պատերազմ յայտնեց։ Սակայն Պոմպէտուր նրա մօտ պատգամաւորներ ուղարկելով յայտնեց, որ հայերի և պարթեւների մէջ առաջացած վէճն ինքը պէտք է վճռէ իբրեւ միջնորդ դատաւոր, և վճռեց յօգուտ իր գաշնակցի, Տիգրանի։ Պարսկաց թագաւորն ակամայ հնազանդուեց այս վճռին։ Ահա այս եղաւ Հրահատ (Փրատաէս) աստուած պարթեւաց թագաւորի վարձատրութիւնը, որը 68 թ. և 66 թ. հպարտութեամբ մերժել էր Միհրդատի և Տիգրանի առաջարկութիւնը ընդունելու հայոց թագաւորի ձեռքից Ադիաբենն և Միջագետքն և միանալու նրանց հետ արեւելքն ամբարտաւան Հռոմի ատելի լծից ազատելու համար։

Տիգրանի պատմական նշանակութեան մէջ պատկանում են անձր։ ինքն էլ նրա է գրաւում. քառորդ դար շարունակ նա գերիշխել է Առաջաւոր Ասիայում, տիրելով Հայաստանից գուրս բազմաթիւ ազգերի և լեզուների։ Իսկ իբրեւ հայ վեհապետ նա անգուցական է իր նմանների մէջ։ Հայաստանի միութեան գործն արդէն Արտաշէսի և Զարեհի ժամանակները սկսուած էր։ Սակայն նա իրականացաւ բաւիս բուն իմաստով Տիգրան Մեծի ձեռքով։ Շնորհիւ Տիգրանի ստեղծած հակայական զօրաբանակի, շնորհիւ նրա փայլուն յաղթութիւնների և նուաճումների հայերի մէջ ազգային գիտակցութիւնն և ինքնաճանաչութիւնն ահագին զարկ ստացաւ, Հայաստանում ապրող բազմաթիւ ցեղերն իրենց զգացին իբրեւ մի մեծ ազգ և սկսեցին խօսել մի պետական լեզուով։

Տիգրանի նշանակութիւնը չպէտք է չափել նրանով,

որ նա իր աչքով տեսաւ իր հիմնած մեծ պետութեան վախճանն և բուն Հայաստանի թագն ընդունեց հռոմայեցի յաղթողի ձեռքից: Այս տեսակէտից նայելով խնդրի վերայ ֆրանսիական աշխարհակալի գերիշխանութիւնն եւրոպայում աւելի կարճատե էր, քան Տիգրանինը Առաջւոր Ասիայում, իսկ վախճանն աւելի անփառունակ և անպատւաբեր: Նապօլէօնն անկարող գտնուեց գնահատելու իր թշնամիների ոյժերն և եւրոպայի գերիշխանութեան հետ կորցնելով ֆրանսիայի իշխանութիւնն ևս, մեռաւ գերութեան մէջ: Տիգրանը մեծ իմաստութեամբ գնահատեց իր հակառակորդի ոյժերն, կորցրեց այն, ինչ որ կորցնելու էր, սակայն նաև լիովին պահեց այն, ինչ որ պահելու էր: Հայաստանն իբրև մեծ պետութիւն անպայման պիտի ընդհարուէր այն ժամանակուայ տիեզերքի գերիշխանի, Հռոմի հետ: Այս Տիգրանն զգում էր և ամեն կերպ աշխատեց այդ ընդհարումից խոյս տալ: Սակայն պատմութիւնը գնաց իր ճանապարհով, արևելքի և արևմտքի մէջ հին պատերազմը վերանորոգուեց և նախկին հակառակորդները միմեանց դէմ զինուած պատերազմի դաշտը դուրս եկան: Պատերազմն անհաւասար էր, և արևելքն էլի իր վիզը խոնարհեց իր գերազօր հակառակորդի առաջ: Սակայն Արտաշատի մօտ 66 թ. Հռոմի առաջ խոնարհուողը ոչ թէ Տիգրանն էր, այլ ամբողջ արևելքը Պարթևաստանով հանդերձ: Բայց իր այս պարտութեան ժամանակ ևս մի ոտքով արդէն գերեզմանում գտնուող ծերունին փայլեց իր իմաստութեամբ և զգոնութեամբ: Մինչդեռ Միհրդատն իր հայրենի թագաւորութիւնը թողնելով իր դաւաճան որդուց հարկադրուեց թոյնի բաժակը պարպելու, Տիգրանն ոչ միայն արժանացաւ Պոմպէոսի կատարեալ սիրուն և յարգանքին, ոչ միայն կոչուեցաւ «գաշնակիդ և բարեկամ հռոմէական ժողովրդի», այլև հէնց հռոմայեցու գէնքով իր ձեռքում պահեց Կորդուած աշխարհն և Միջագետքը և կատարելապէս յաղթանակեց իր դաւաճան

որդու և իր ռիսերիմ թշնամու, պարթևաց թագաւորի վերայ: Տիգրանի անձնաւորութիւնը գնահատելու ժամանակ աչքի առաջ պիտի ունենալ նաև այն հանգամանքը, որ նրա պատմութիւնը մեզ աւանդել են նրա քաղաքական իշխանութեան հակառակորդները՝ յոյն, լատին և ասորի մատենագիրները, որոնք ինչ-ինչ նպատակներով յաճախ յեղաշրջել են պատմական դէպքերը և աշխատել են նուագեցնել մեծ թագաւորի արժանիքները: Պլուտարխ յոյն պատմագիրը պատմում է, իբր թէ այն անձը, որ առաջին անգամ բերեց Տիգրանակերտի պաշարման բօթը, գլխատուեց Տիգրանի հրամանով, որից յետոյ այլևս ոչ ոք չէր համարձակուում Տիգրանի առաջ մի խօսք անգամ արտասանել Տիգրանակերտ մայրաքաղաքի պաշարման մասին: Այս մի զգուշի բամբասանք է, որը ցոյց է տալիս ոչ թէ Տիգրանի, այլ այս բարբաջանքը յօրինող պատմագրի անմտութիւնը: Թէ որքան Տիգրանը խոհեմ, զգօն անձնաւորութիւն էր, այդ երևում է այն ընդունելութիւնից, որ նա ցոյց տուեց Ապիոս Կլաւդիոսին: Սա Անտիոքում Տիգրանին յանձնելով Լուկուլլի վերաւորական գրութիւնն, որի մէջ բաց էր թողնուած Տիգրանի «թագաւորների թագաւոր» տիտղոսը, յանդուգն եղանակով պահանջեց Միհրդատին հռոմայեցիների ձեռքը տալ: Չնայելով, որ Տիգրանը գիտէր, որ իր հետ այսպէս յանդուգն ձևով խօսողը լրտես էր (վերև, եր. 84), չնայելով, որ նրան հռոմայեցիներից այն ժամանակ ոչ մի վտանգ չէր սպառնում, այնուամենայնիւ Տիգրանը մեծ խոհեմութեամբ ծածկեց իր զայրոյթն, մեծամեծ պատիւներով ընդունեց հռոմայեցի լրտեսին և միայն բողոքեց, որ Լուկուլլն իր տիտղոսը բաց էր թողել: Տիգրանը Լուկուլլի վերաւորանքն անպատասխան չթողեց, բաց թողնելով իր պատասխանի մէջ նրա imperator տիտղոսը, սակայն այստեղ ուշադրաւր մեծ թագաւորի խոհեմութիւնն է: Չէ հասկացուում, թէ ինչպէս կարող էր այսպիսի անձը չհետաքրքրուել, թէ ինչ էր կատարուում

իր պաշարուած մայրաքաղաքում և իր հպատակներին արգելել թշնամու մասին իրեն տեղեկութիւններ հաղորդելու: Վերև (եր. 89) յիշուեց, որ հայ հեծելազօրքը ճեղքեց Տիգրանակերտը պաշարող հռոմէական զօրաշարժութան և մայրաքաղաքից հանեց Տիգրանի կանանց և գանձերը: Այս մեզ պատմում են Ապիան և Մեմֆոն օտար պատմագիրները: Սակայն Պլուտարխ պատմագիրը, որն իր պատմութիւնը գրել է Լուկուլի տուած սխալ և յեղաշրջած տեղեկութիւնների հիման վերայ, այս դէպքը բոլորովին լռութեան է մատնել: Այս նոյն Պլուտարխը Տիգրանի զօրքերի թիւը Տիգրանակերտի առաջ 260,000—300,000-ի է հասցնում և պատմում է, որ Տիգրանակերտի ճակատամարտում հայ զօրաբանակից ընկել են 100,000 հետևակ և 55,000 հեծեալ զօրք, իսկ հռոմայեցիներից միայն 100 հոգի վիրաւորուել և 1 կամ 5 հոգի էլ սպանուել են,— մի առասպել, որին ոչոք չի հաւատում: Նոյն Պլուտարխ պատմագիրը միամտաբար պատմում է. «Շատ թագաւորներ էին ծառայում Տիգրանին: Զորսը նրանցից միշտ անբաժան էին և նրան ծառայում էին իբրև ուղեկիցներ և թիկնապահներ: Երբ նա ձի հեծած գնում էր, նրանք նրա առջևից վազում էին կարճիկ բաճկոններ հագած. իսկ երբ նա նստում և կամ պարապում էր գործերով, նրանք կանգնում էին նրա կշտին ձեռք ձեռքի տուած:» Արդ, հիմա պարզուած է, որ այս չորս «թագաւորները» հայոց չորս բղէշխներն էին, որոնք անբաժան հետևում էին մեծ թագաւորին և նրա խորհրդականներն էին: (Փաւստոս Բիւզանդացին Աղձնեաց բղէշխին քաղաւոք ևս անուանում է): Իսկ յոյն պատմաբանը գործին անտեղեակ լինելով, կարծել է, թէ սրանք Տիգրանից գերուած թշնամի թագաւորներ էին, առանց իրեն հաշիւ տալու, թէ ինչպէս Տիգրանը կարող էր թոյլ տալ, որ թշնամի թագաւորները միշտ իրեն հետևէին և իր խորհրդակիցները լինէին:

Լուկուլը իր Հռոմ ուղարկած տեղեկութիւնների մէջ պատմում է, որ Արտաշատի պարիսպների առաջ տուած ճակատամարտում նրա դէմ կուել են երեք թագաւորներ, որոնցից Միհրդատ Պոնտոսի թագաւորը չկարողանալով նոյնիսկ հռոմայեցիների աղաղակին դիմանալ, ամօթալի կերպով փախուստ է տուել: Սակայն այս ևս սուտ է, որը յերկրորդի անուանը նախատինք է բերում: Միհրդատի թշնամիներն անգամ միաբերան վկայում են, որ ահն ու երկիւղը նրան անձանօթ բաներ էին և միայն նրա անուընդ հռոմայեցիներին սոսկում էր պատճառում: Քացի զրանից բառ միւս օտար պատմագիրների Լուկուլը առկալին հարաւում, շատ հեռու էր Արտաշատից, երբ հարկադրուեց յետ նահանջել:

Այս բոլորից պարզ երևում է, թէ ինչպիսի զգուշութեամբ պիտի վերաբերուել այն բոլորին, ինչ որ օտար պատմագիրները պատմում են մեր մեծ թագաւորի մասին: Տիգրանն իր մեծ պետութիւնը հիմնեց պարթևների դէմ մի շարք պատերազմներ մղելով և մի շարք յաղթութիւններ կանգնելով: Սակայն սրանց պատմութիւնը մեզ բոլորովին անյայտ է մնացել, որովհետև յոյներն և հռոմայեցիներն սրանց մասին բոլորովին լռում են, պարթևներից մեզ տեղեկութիւններ չեն հասել, իսկ հայն էլ այդ ժամանակ գիր և գրականութիւն չունէր, որ մեզ եղածն աւանդէր:

Սակայն մեծ թագաւորի անձն և գործերը նրա մահից յետոյ ևս երկար դարեր մնացին անմոռաց հայ ժողովրդի մէջ և սերնդէ սերունդ ղեպդեցնում էին հայ ժողովրդի սիրտն ու միտքը: «Սա մեր բոլոր թագաւորներից ամենահանճարեղը, ամենախոհեմ և քաջն էր... Յոյներին ոչ սակաւ ժամանակ նուաճելով հնազանդեցրեց: Եւ մեր երկրի սահմաններն անշափ ընդարձակեց և ամենքին, որ իր ժամանակներն էին, նախանձելի եղաւ, իսկ մեզ, յետնորդներիս, ըզձալի է ինքն և իր ժամանակը Որովհետև

նի ճշմարիտ մարդկանցից և նրանցից, որոնք սիրում են արութիւնն և խոհականութիւնը, կարող է չզուարճանալ սրա յիշատակով և չյորդորուել այսպիսի մարդ լինելու: Քաջ մարդկանց գլուխ կանգնելով և արութիւն ցոյց տալով, մեր ազգը բարձրացրեց և լծի տակ կացածներին շատերին լծադիր և հարկապահանջ դարձրեց: Ոսկին և արծաթը, պատւական քարերը, զանազան գոյների շուրերն և անկուածները մարդկանց և կանանց համար սաստիկ շատացրեց, որով տգեղներն դեղեցիկ և սքանչելի էին երևում, իսկ գեղեցիկները՝ դիւցազուններ: Հետևակամարտները ձի հեծան, պարսաւորները. բոլորն էլ քաջ աղեղնաւորներ դարձան, շերտաւորները սուսերով, տէգով և նիզակով զինուեցան. մերկերը վահանով և երկաթէ զգեստներով ծածկուեցան: Երբ սրանք միասին հաւաքուում էին, բաւական էր միայն նրանց տեսքն և գէնքերի փայլմունքն ու շողը թշնամիներին հալածելու համար: Խաղաղութիւն և աշխարհաշինութիւն բերող էր, իւզով և մեղրով ամեն հասակի մարդկանց պարարեց: Այս և այսպիսի շատ բաներ մեր աշխարհին բերեց մեր այս խարտեաշ և գեղեցկահեր Տիգրան Երուանդեանը, անձնեայն և թիկնաւետը, առոյգաբարձն և գեղեցկոտը, կերակուրների և ըմպելիքների մէջ պարկեշտը, խրախճանութիւնների մէջ օրինաւորը, որի մասին հնումը նրանք, որոնք բամբուլ երգում էին, ասում էին, թէ սա մարմնական ցանկութիւնների մէջ ևս չափաւոր էր. մեծիմաստ էր և պերճաբան և ունէր մարդկութեանը պիտանի ամեն բան: Եւ միթէ ինձ աւելի հաճելի բան կարող է լինել այս գրքում, քան նրա մասին եղած գովեստներն և պատմութիւններն երկարելը: Արդարադատ և հաւասարասէր կշեռք ունէր ամեն բանում, ամեն մէկի կենցաղը մաքի լծակով էր կշռում: Ոչ լաւերին էր նախանձում և ոչ էլ նուաստներին արհամարհում, այլ աշխատում էր

իր խնամքի զգեստը տարածել առհասարակ բոլորի վերայ: (Մովս. Խոր., Պատմ., գիրք Ա, գլ. ԻԴ):

Այս նկարագիրը գտաւ Մովսէս Խորենացին Տիգրան Մեծի մասին հայ ժողովրդի մէջ, որը երևի հէնց նրանից առաջ գրի էր առնուած: Միայն թէ Խորենացին սխալմամբ այս նկարագիրը վերագրել է Կիւրոսի ժամանակակից Տիգրանին (վերև, եր. 36): Հայաստանի սահմաններն անշափ ընդարձակողը, լծի տակ գտնուող հայերին լծադիր և հարկապահանջ դարձնողը, յոյներին նուաճողը, հայ հոկայական զօրաբանակն ստեղծողը, Հայաստանն ոսկով և արծաթով լցնողը Տիգրան Մեծն էր, որի պատմութեան հետ մենք ծանօթացանք ըստ օտար պատմագրութեան, և ոչ թէ Կիւրոսի ժամանակ յիշուած Տիգրանը, որի ժամանակ հայերը հարկատու էին մարերին և պարսիկներին:

Որքան Մովսէս Խորենացու տգիտութիւնն աններելի է, որ նա մեզ մեր մեծ թագաւորի մասին գրեթէ ոչինչ չէ պատմում, նոյնքան և նրա տուած վերոյիշեալ նկարագիրը մեր աշխարհակալ թագաւորի անձի և գործերի մասին մի անգնահատելի մարգարիտ է մեր տոմային պատմագրութեան մէջ:

Միւս Կովկաս- թէ ինչպիսի ատելութիւն էր տիրում սեան ազգերի արևելեան ազգերի մէջ Հռոմի դէմ, այդ ցոյց նուաճումը: տուեց այն սաստիկ ընդդիմադրութիւնը, որ նրանք ցոյց տուին Պոմպէոսին Տիգրանի անձնատուր լինելուց յետոյ: Վրացիներն և աղանները, որոնք երկու տարի առաջ Տիգրանի դրօշակի տակ Լուկուլլին հալածել էին Հայաստանից, այժմ լսելով հայոց թագաւորի անձնատուր լինելը հռոմայեցի զօրավարին, վճռեցին սեպհական ոյժերով ընդդիմանալ արևմտեան բռնակալին:

Վրացիները երկրագործ ժողովուրդ էին, իրենց հողերը մշակում էին հանրային ոյժերով և անհատական

սեպհականութիւնը նրանց մէջ գոյութիւն չունէր: Նրանք կառավարւում էին իրենց ցեղապետներով, որոնցից աւագագոյնը թագաւոր էր համարւում, իսկ թագաւորից կրտսեր ցեղապետը նրանց զօրավարն և դատաւորն էր: Ունէին նաև քրմական դասակարգ, որը հսկում էր օտար տէրութիւնների հետ կապած դաշինքի պահպանութեան վերայ: Զօրքն ինքն երկրագործ ժողովուրդն էր: Բացի սրանից վրացիների մէջ կային ճորտեր, որոնք թագաւորին էին ծառայում:

Վրացիներից դէպի արևելք, մինչև Կասպից ծովի ափերն և Կուր գետի ստորին աւազանն ապրում էին աղւանները, որոնք թւով վրացիներից շատ էին: Սրանք խաշնարածներ էին, բաժանւում էին 26 ցեղերի, որոնցից իւրաքանչիւրը խօսում էր իր սեպհական բարբառով: Կային սրանց մէջ նաև սակաւաթիւ հոգաբորձներ, որոնք հողը վարում էին փայտեայ նախնական արօրով առանց երկաթեայ խոփի: Դրանք այս երկրում անծանօթ բան էր, մարդիկ հարիւրից աւել չգիտէին հաշուել: Երբ թշնամին մտնում էր նրանց երկիրը, նրանք քաշւում էին իրենց անտառները և ծառերի յետևից կամ գագաթներից նետեր էին արձակում նրանց վերայ: Սակայն ունէին նաև զրահապատ հեծեալներ ըստ հայ և մարական տարազի:

Երբ Պոմպէոսն 66/5 թ. ձմեռում էր Հայաստանում, աղւանները իրենց Որոիգէս իշխանի առաջնորդութեամբ անցան Կուր գետն և յարձակուեցան հռոմէական զօրաբանակի վերայ, սակայն յաղթուեցան և նուաճուեցան Պոմպէոսից:

Վրացիների Սրտոկէս թագաւորն սկզբում հռոմայեցի զօրավարին յայտնեց, որ ուզում է խաղաղ մնալ: Սակայն Պոմպէոսը լսելով, որ նա գաղտնաբար պատրաստւում է Կովկասի կրճերում իր վերայ յարձակուելու, արշաւեց նրա վերայ զօրքով և Թիֆլիսի կողմերում անցնելով Կուր

գետը, սկսեց նրան հալածել: Վրացիների թագաւորը շուտով յաղթուեց և հարկադրուած էր իր որդիներին պատանդ ուղարկել և հաշտութիւն խնդրել:

Պոմպէոսն այժմ Կուր գետի հովտից անցաւ Փագիս (Ռիոն) գետի հովիտը, Կոդքիս, Միհրդատին հետամուտ լինելու նպատակով: Սակայն այստեղ լսելով, որ աղւաններն իր դէմ ապստամբուել են, յետ դարձաւ և Կուր գետն անցնելով, մտաւ աղւանից երկիրը: Պատմում են, իբր թէ աղւանները 60,000 հետևակ և 12,000 հեծեալ զօրք էին հանել նրա դէմ: Մի քանի օր շարունակ հռոմէական զօրքն արշաւում էր աղւանից սակաւաջուր երկրում, մինչև որ նրանց զօրքին յաղթելով, ցիրուցան աւրաւ և հպատակեցրեց նրանց: Պոմպէոսն այստեղից դարձաւ Պոնտոս, Պոնտոսից էլ Ասորիք:

Միհրդատի Միհրդատը 65 թ. անցաւ Ղրիմ և այստեղ վախճանք: Իր Մաքարէս ապստամբ որդուն գահնկեց անելով, հարկադրեց սրան անձնասպանութիւն գործել, իսկ իր տէրութիւնն իր ձեռքն առաւ: Այստեղից նա պատգամաւորներ ուղարկեց Պոմպէոսի մօտ և խնդրեց իրեն յանձնել իր հայրենի պոնտական թագաւորութիւնը, խոստանալով ընդունել Հռոմի գերիշխանութիւնն և հարկ վրձարել: Սակայն Պոմպէոսը պահանջեց նրանից անձնատուր լինել առանց որևէ պայմանի: Այն ժամանակ Միհրդատն իր վերջին ոյժերը լարելով, հաւաքեց 36,000 զօրք, մարզեց հռոմէական տարազով և ուզում էր, ինչպէս առաջ Հաննիբալը, հիւսիսից յարձակուել Իտալիայի վերայ: Ոմանք լսելով Հռոմի անհաշտ թշնամու մտադրութիւնը, սոսկում էին, սակայն Պոմպէոսն սառնարիւնութիւնը չը կորցրեց և չհետամտեց արկածախնդիր ծերունուն:

Իր նոր զօրաբանակը կազմելիս Միհրդատը չէր խնայում իր հպատակների ոչ կայքը, ոչ գոյքն և ոչ էլ կեանքը. նրանց աները քանդելով գերաններից մեքենաներ

էր պատրաստում, նրանց եղները լծից լուծելով, մորթում
և կերակրում էր նրանց մսով իր զօրքը: Եւ երբ անբաւար-
կանութիւնները ծայր տուին, կասկածոտ դարձած սու-
թանն սկսեց անխնայ կոտորել իր մերձաւորներին, որոնք
նրան կասկածելի էին երևում: Նրա հարազատ որդին,
Փառնակէսը, անցաւ ապստամբների գլուխը: Ապստամբ
որդու դէմ ուղարկուած զօրքը անցաւ նրա կողմը, որից
յետոյ Պանտիկապէսը (այժմեան Կերչը) Փառնակիսի ա-
ռաջ բացեց իր դռները, իսկ Միհրդատը պաշարուեց իր
պալատական ամրոցում (63 թ.): Ամրոցի բարձր պարըս-
պից ծերունին աղերսում էր որդուն խնայել իր կեանքն
և չթաթախել ձեռքերը հօր արեան մէջ: Սակայն այս
աղերսն իբրեւ ծաղր էր հնչում մի մարդի բերանից, որն
ինքն վաղուց իր ձեռքերը թաթախել էր իր հարազատ
մօր, եղբօր, քրոջ և զաւակների արեան մէջ և Փառնա-
կէսն անգթութեամբ նրան գերազանցեց ու մնաց խուլ
նրա աղերսանքներին: Եւ որովհետեւ մեռնելու էր, Միհր-
դատ Եւպատորը վճռեց մեռնել այնպէս, ինչպէս ապրել
էր. նրա կանայք, հարձերը և դուստրները հարկադրուե-
ցան մահաբեր թոյնի բաժակները քամել, որից յետոյ ինքը
Միհրդատն ևս նոյն արաւ: Բայց որովհետեւ ծերունի արքան
երկաթից էր և թոյնը արագութեամբ չէր ներգործում,
նա կռացրեց իր վիզը մի կելտ վարձկանի առաջ և հրա-
մայեց իրեն մահաբեր հարուածը հասցնել: Այսպէս մե-
ռաւ Միհրդատը 68 տարեկան հասակում: Փառնակէսն իր
անձնուիրութիւնը Պոմպէոսին ցոյց տալու համար իր հօր
դիակն ուղարկեց նրան, իսկ սա անհամեմատ մարդասէր
գտնուեց և հրամայեց Միհրդատի դիակը թաղել Սինոպի
արքայական դամբարանում:

ԳԼՈՒԽ Է

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ը

ՀՈՒՍԱՅԵՑԻՆԵՐԻ ԳԵՐԻԾԽԱՆՈՒԹԵԱՆ ՏԱԿ

(66 թ. Բ. ա. — 387 թ. Բ. յ.)

Ընդհանուր հա- 66 թւականին Տիգրան Մեծի թագի
յեացք այս օրը- հետ ընդմիշտ գերեզման իջաւ հայի ան-
ջանի մասին: Կախութիւնը: Թէպէտեւ հռոմէական ծե-
րակոյտը Պոմպէոսի միջնորդութեամբ Տիգրանին շնորհեց
«բարեկամ և զաշնակից հռոմէական ժողովրդի» տիտղոսը,
սակայն յիշուած թւականին Հռոմի գերիշխանութիւնը
հաստատուած էր Հայաստանի վերայ: Հայոց թագաւորու-
թիւնն իր ներքին գործերում. Հռոմից միանգամայն ան-
կախ էր, նրան ոչ հարկ և ոչ էլ զինուոր էր տալիս, սա-
կայն հայոց թագաւորները գահ պիտի բարձրանային Հռոմի
հաճութեամբ, պարտաւոր էին իրենց իշխանութիւնը վա-
րել համաձայն Հռոմի շահերի և պատերազմների ժամա-
նակ օգնել նրան: Ի հարկէ Հռոմն էլ իբրեւ գերիշխան
միշտ օգնում էր հայոց թագաւորութեանն և պաշտպա-
նում նրան արտաքին թշնամիներից:

Սակայն սկսել էր լինէր կարծել, իբր թէ 66 թւա-
կանից ի վեր Հայաստանը գտնուում լինէր բացառապէս
Հռոմի գերիշխանութեան և ազդեցութեան տակ: Այդ գե-
րիշխանութիւնը, ինչպէս Հռոմի պատմագիրն ևս (Մոմ-
զէնը) յաճախ նկատում է, լոկ անուանական էր և հայոց
թագաւորութեան գործերի վերայ բացի Հռոմից անազին

ազդեցութիւն ունէր նաեւ Պարսկաստանը, միակ արեւելեան պետութիւնը, որը Հռոմին ախոյեան էր հանդիսանում: Եւ անա Հայաստանը դառնում է այս երկու պետութիւնների մէջ անվերջ պատերազմների ասպարէզ, մի կուսական՝ Պարսկաստանը միացած լինելով հայերի հետ կրօնական և քաղաքական դարեւոր սերտ կապերով, սովորութիւններով և նիստուկացով, չի կարողանում հռոմէական գերիշխանութեան հետ հաշտուել, Հայաստանի անջատումը նա զգում է իբրեւ սեպհական մարմնի անդամահատութիւն և ամեն միջոց գործ է դնում Հայաստանում իր գերիշխանութիւնը կամ գոնեայ ազդեցութիւնը վերականգնելու: Հայաստանի համար հոսում են արեան գետեր, մի բանի անգամ Տիգրոնը, Պարսկաստանի մայրաքաղաքը, հռոմայեցիներից առնւում և աւերւում է, սակայն պարսից տէրութիւնը փնտռում է անկոտրում և շարունակում է պատերազմել Հայաստանի համար: Քրիստոնէական առաջին դարու կիսում Հռոմը, կարծես պարտասուած այս անվերջ պատերազմներից, պարսից գահակալին Հայաստանում մի զգալի զիջում է անում. նա թոյլ է տալիս, որ Հայաստանի գահը բարձրանայ Տրդատ պարթև արքայազնը: Առժամանակ թէ Հայաստանում և թէ նրա հարևան երկու մեծ պետութիւնների մէջ խաղաղութիւն է հաստատուում: Սակայն Տրդատի յաջորդների ժամանակ էլի վերսկսւում են հին արիւնոտ խաղերը: Երբ 226 թ. Արտաշիւր Սասանեանն Արտաւան պարթևին սպանելով և նրա գահը յափշտակելով պաշտպան հանդիսացաւ հին պարսկական կրօնին, աւանդութիւններին և սովորութիւններին, այն ժամանակ Հայաստանի համար մղող դարեւոր պատերազմին գիւնաստիական տարր ևս աւելացաւ. Սասանեան տունը չէր կարող հաշտ աչքով նայել Հայաստանում թագաւորող Պարթևական (Արշակունի) տան վերայ: Տրդատ Գ. Արշակունին, ցանկանալով աւելի սեղմ կապով կապուել հռոմէական կայսրութեան հետ, ընդու-

նում է քրիստոնէութիւնն և դարձնում նրան պետական կրօն Հայաստանում: Այսպիսով Հայաստանը ընդմիջտ անջատւում է Պարսկաստանից և կրօնական ու քաղաքակրթական նոր կապեր է հաստատում արևմտեան մեծ քրիստոնեայ պետութեան հետ:

Սակայն այս քաղաքականութեան հետևանքներն ևս տարաբախտաբար ազէտաբեր եղան Հայստանի համար: Թէպէտե հայոց թագաւորութիւնն Պարսկաստանում թագաւորող Սասանեանների և հռոմէական կայսրների մէջ ծագած պատերազմներում իր պարտքը իբրեւ դաշնակից դէպի վերջինս սրբութեամբ կատարեց, սակայն վերջինս վճռական ժամին չկարողացաւ օգնութեան հասնել իր դաշնակցին, և անօգնական մնացած Հայաստանը անհաւասար նակցին, և անօգնական մնացած Հայաստանը անհաւասար պատերազմում յաղթուելով, կորցրեց իր թագն ու գահը: Արտաւազ Ս. Պոմպէոսը Տիգրանին խաղաղութիւն

(55—34)

շնորհելով և նրան իր դաշնակիցը դարձնելով, իր գէնքը դարձրեց պարթևների Ֆրատէս աստուած կոչուած թագաւորի գէմ և իր արած խոստումները մոռանալով, նրանից խլեց կորզուած երկիրն և հիւսիսային Միջագետքն և տուեց իր դաշնակից հայոց թագաւորին: Ֆրատէս թագաւորը շուտով սպանուեց իր Մինրգատ և Որոզ որդիներից, որոնցից առաջինը գահ բարձրանալով, անմիջապէս (55 թ.) պատերազմ յայտնեց Արտաւազ Գ. հայոց թագաւորին, Տիգրան Մեծի յաջորդին և որդուն (ըստ Պլուտարխի նրա կլէօպատրա կնոջից):

Սրանով Պարթևաստանն ի հարկէ պատերազմ էր յայտնել նաև հռոմայեցիներին: Երբ իրեն, որոնց գերիշխանութեան տակ էր գտնւում Հայաստանը: Ուստի և Գաբրիէլոս Ասորիքի հռոմէական կուսակալն իսկոյն իր լեգէոններով անցաւ Եփրատը, որպէսզի արշաւէ պարթևների վերայ: Հէնց այս ժամանակ պարթև մեծամեծները գահընկէց արին Մինրգատին

և նրա տեղ գահ բարձրացրին Որոգին: Մինչդեռ փա-
խաւ հոռմայեցիները մօտ և ուզում էր սղանց օգնու-
թեամբ իր գահը վերստին գրաւել: Սակայն Գարինիոսը
հրաման ստացաւ թողնել Ասորիքն և Եգիպտոս արշաւել,
որով և ընդհատուեց հոռմէա-պարթևական պատերազմը:

Կրասոս եւ իր Ինչպէս յայտնի է, 60 թ. Ք. ա. Հոռ-
տեւեյեան ծրա- մում կազմուեց առաջին եռապետութիւնը,
գիրք: որը անդամներն էին Յուլիոս Կեսար, Պոմ-
պէոս և Կրասոս: Վերջինս եռապետութեան մէջ չնչի՛
գեր էր խաղում և յայտնի էր իր անշափ հարստութեամբ
և անյազ ընչասիրութեամբ: Յանկանալով իր ճակատը
պսակել յաղթողի պսակով և իր գանձերին արեւելեան ազ-
գերի գանձերն ևս աւելացնել, սա եկաւ արեւելք և ըս-
տանձնեց պարթևների գէմ սկսած պատերազմը: Պարթե-
ւական պատերազմը յաջողութեամբ վերջացնելուց յետոյ
հոռմայեցի եռապետն երազում էր Հնդկաստան արշաւել
և այս երկիրն ևս նուաճել:

Հասնելով արեւելք, ընչաքաղց հոռմայեցին նախ բազ-
մապատկեց իր գանձերը, կողոպտելով Երուսաղէմի տա-
ճարն և Ասորիքի հարուստ մեհեանները, այլև ծանր տուր-
քեր գանձելով այս երկիրների հոռմէահպատակ ազ-
բնակութիւնից:

Ապա նա 53 թ. անցաւ Եփրատն և յաղթեց պար-
ական սատրապին: Այսպիսով հայ-պարթևական պա-
տերազմը փոխուեց հոռմէա-պարթևական մեծ պատերազմի:
Որտաւազգ թագաւորն անձամբ եկաւ հոռմէական զօրաբա-
նակն և առաջարկեց եռապետին իր երկրով, Հայաստա-
նով արշաւել պարթևների վերայ: Արտաւազգն յոյս ու-
ր այս եղանակով իր թագաւորութեան հարաւային
շահմաններն ընդարձակել: Սակայն Կրասոսը նրա առա-
ջարկութիւնը չընդունեց, պարթևների վերայ արշաւեց
Միջագետքից, հրաման տալով Արտաւազգին իր 10,000
հայ ծանր հեծելազօրքով իրեն օգնութեան հասնել:

հայոց հրատարակական ընկերութիւնը: Իբրև պատմաբան Գա-
րագաշեանը չնչին նշանակութիւն ունի: Նա անկարող է գտնուել
հասկանալու իր նկարագրած դարերի ոգին, ըստ հարկին գնա-
հատելու պատմական զէպքերն և անձնաւորութիւնները: Այս բո-
լորի փոխարէն նա բաւականաճառ է պատմական զէպքերի ֆո-
նոգրաֆիական նկարագրութիւններով, որոնց ժամանակ նա յա-
ճախ խառնում է պատմականը մատենագրականի և քննադատու-
կանի հետ, այնպէս որ նրա գրած պատմութիւնը կարգացողը
ստանում է անվերջ տպաւորութիւններ, բայց մի ամփոփ գաղա-
փար հայ պատմութեան մասին չէ ստանում: Սրանք պէտք է ա-
ւելացնել նաև Գարագաշեանի անտանելի լեզուն: Նա դրում է
երացնել նաև Գարագաշեանի անտանելի լեզուն: Նա դրում է
երթ թէ աշխարհաբառ, սակայն կարծես ինքն իր աշխարհաբա-
ռին չհաւատալով կամ չհաւանելով երկար բանաբանութիւն-
ները թարգմանում է զրաբառ լեզուով: Բայց և այնպէս Գարա-
գաշեանի «Քննական հայոց պատմութիւնը» հայ պատմագրու-
թեան մի անգնահատելի ծառայութիւն մատուցեց, ծանօթաց-
նելով հայ ընթերցողների մասսաներին Սորենացու Հայոց պատ-
մութեան» քննադատութեան հետ: Բացի Գաթրճեանից և Գարա-
գաշեանից Սորենացու պատմութեան քննադատութեամբ զրա-
գաշեանից Սորենացու պատմութեան մերազգի և օտարազգի հե-
ղուեցան բազմաթիւ և բազմաճմուռ մերազգի և օտարազգի հե-
ղինակներ, ինչպէս հանգուցեալ պրօֆեսոր Գր. Սարգսեան,
Ֆրանսիացի պրօֆ. Կառլէր, գերմ. պրօֆ. Գեյցեր և ուրիշները
լոճս նաև մեր «Փառսոս Բիւզանդացի և իր պատմութեան խա-
րդախոյը» գործը, այնպէս որ այժմ այս քննադատութեան շուր-
ջակներէց ազդուած են նոյնիսկ հայ պատմութիւն գրող կամ պ-
ատմող համբալիները: Չնայելով սրան, ցայժմ մենք չունենանք
մի ձեռնարկ, որը ներկայացնէր մեզ հայ պատմութիւնն անաշու-
կեղծով, համաձայն նորագոյն հետազօտութիւնների, թէպէտ
այդ առարկան աւանդում է մեր թեմական և ծխական ուսում-
նականներում և բազմաթիւ հայ ինտելիգէնտներ կարիք են դրում
բնից ազգի անցեալի հետ ծանօթանալու:

Ներկայ ձեռնարկս մի փորձ է այդ կարիքը լրացնելու: Նա
մէջ ամփոփուած է այն բոլորը, ինչոր վկայուած է առհմային
օտարազգի արժանահաւատ պատմագիրներից իբրև ստույգ և վ-
երական, բաց է թողնուած այն բոլորը, ինչ որ ճանաչուած է
բերե անվաւերական և առասպելային: Հարկ ենք համարում յիշ-
ել, որ մենք հակառակ ենք կրկնակի պատմագրութեան սկզբու-
թիւն, որին հետեւել են Գաթրճեան, Գարագաշեան, Բասմաճեան
և ուրիշները: Սրանք նախ առաջ բերելով հայոց պատմութիւն
ըստ արտաքին ստույգ պատմագրութեան, ապա կրկնում և հեր-
քում են Սորենացու առասպելները: Արդ, կայ մի ճշմարտութիւն
միայն, ուստի կայ նաև մի պատմագրութիւն միայն: Երկու տե-
սակ ճշմարտութիւն և երկու տեսակ պատմագրութիւն չկայ: Ան-
հրաժեշտ ստասպելները կարիք չկայ իբրև պատմական նիւթեր մէջ
բերելու և հերքելու: Այդ անողները կարծես իրենք չեն հաւա-
տում իրենց գրածի ստուգութեանը:

Մեր դորժը կազմելիս մենք պատկերացնում ենք հետևեալ պարբերի-
րից. Mommsen, Roemische Geschichte. Lehmann-Haupt, Armenien
einst und jetzt. Պաթրիսիան, Տրեգերական պատմութիւն: Պա-
րապաշտան, Քննական պատմութիւն հայոց: Адонцъ, Армения
въ эпоху Юстиніана. Карбевъ, Древняя Исторія и т.д.
Չեմարիւ լոյս է տեսնում պրակներով: Յանկացողը կարող
է բաժանորդ գրութիւն տրոջը դորժիւ, վճարելով 1 ռ. 50 կ. բա-
ժանորդագրին:

ԻՄ ՄԻԻՍ ԳՈՐԾԵՐԸ

1. *Полный армяно-русский словарь.* Цѣна 6 р., въ переплетѣ 6 р. 50 к. и 7 р., смотря по переплету.
2. *Полный русско-армянский словарь.* Цѣна 8 р., въ ро-
скошномъ переплетѣ 9 руб.
3. Продолжается подписка на *Карманный русско-армянский
словарь.* Подписная цѣна 2 р. 50 к. Этотъ словарь закон-
чится печатаніемъ въ текущемъ году.
4. Открыта подписка на «Հանրագիտական բառարան», երկնասոր,
բնագրական, բազմաթիւ բարոյական, նկարներով և պատ-
կերներով. Գանձարան գրողութեան բոլոր ձեւերին վերա-
բերեալ անհրաժեշտ գրականութիւն: Բաժանորդագիրը 8 ռ.
կարելի է բաժանորդ գրութիւն միմիայն ներկայի մօտ:
5. *Русский языкъ въ армянскихъ школахъ.* Годъ первый: аз-
бука и первая послѣ азбуки книга для чтенія. Съ пропи-
сками и картинками въ текстѣ. 3-ье изданіе. Цѣна 20 к.
6. *Курсъ русскаго языка для армянскихъ школъ.* Годъ
второй: тексты, переводы, грамматика и словарь. Цѣна 40 к.
7. *Նորագոյն բնագիտոյց սուրէն լեզուի:* Գրին է 25 կ.
8. *Gruendung des Bagratidenreiches durch Aschot Bagratuni.*
Berlin, 1893. M. 2,40. (Պատմական հետազոտութիւն, ար-
ժանացած կալարեան ձեռնարանի Քանանեան մրցանակին):
9. *Փառաւոր Բրեզնիցացի և իր պատմութեան խորագրողը:*
(Քննադատութիւն): Գրին է 1 ռ.

Դրեւել ինձ հետեւալ պարզ հանգէով. **Ա. ԴԱԳԲԱՏԻԱՆՍ.**

Վ. Գ. Դ. ԻՍԵՆ և կամ գրափաշտներին:

Т и ф л и с ь

Типографія А. Кереслидзе, Габасевскій пер. № 1.

1914

ՀՀ Ազգային գրադարան



NL0418277

7239